

Լիափորնա

Ամրացնել տունը
և ընտանիքը,
էջեր 4, 16, 20, 22

Երիտասարդ
չափահսները խոսում
են մաքրաբարոյության
մասին, էջ 42

Չորդ սուրբ գրություններ,
որոնք օգնեցին մեզ, էջ 54

Ավարտելով Երեխաների
խումբը, էջ 58



**Քրիստոսը Ամերիկայում,
Ջեֆրի Շեյն**

*Երբ հայտնություն առած
Քրիստոսը այցելեց Նեպիա-
ցիներին Ամերիկամերում,
«նա վերցրեց նրանց փոքր
երեխաներին, մեկ առ մեկ,
և օրհնեց նրանց, և նրանց
համար աղոթեց չորր:*

*Եվ երբ նա արեց այս,
նա կրկին արտասպնեց.*

*Եվ նա խոսեց բազմության
հետ, և ասաց նրանց. Նայե՛ք
ձեր փոքրիկներին» (3 Նեպի
17:21-23):*



Լիահունա, Հոկտեմբեր 2012

ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 Առաջին Նախագահության Ուղերձ: Երջանիկ ընտանիքի բանալիներից մեկը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսդորֆ

8 Այցելող Ուսուցիչների Ուղերձ: Պատվել մեր ուխտերը

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

22 Օգնել դեռահասներին ունենալ հոգևոր փորձառություններ
Մելիսա Մերիլ

28 Ալմայի գիրքը. դասեր այսօրվա համար
Երեց Փոլ Բ. Փայլեր
Նեպիազիների մասին երեք դասեր կարող են օգնել մեզ հաջողությամբ դիմադրել մեր օրվա մարտահրավերները:

34 Ինչպե՞ս գոյատևել թշնամու տարածքում
Նախագահ Բոյլ Կ. Փաքեր
Ձեր մեջ բացահայտեք, ինչպես կարող է Սուրբ Հոգին ուղղորդող և պաշտպանող ազդեցություն գործել:

ԲԱԺԻՆՆԵՐ

9 Երիտասարդներին զորացնելու համար: Հագուստ և արտաքին տեսք

10 Հոկտեմբերի համաժողովի օրագիր: Ազատել մեր օրացույցը համաժողովի համար
Շերիլ Բուր

11 Ծառայել Եկեղեցում: Կիրակնօրյա դպրոցի պատասխանները
Էմմա Ադամս

12 Ինչին ենք մենք հավատում: Հեռատես ապրելակերպը նախապատրաստում է մեզ ապագայի համար

14 Փոքր և հասարակ բաներ

16 Մեր տները, մեր ընտանիքները: Ուսուցանել մաքրաբարոյություն և առաքինություն
Մեթյու Օ. Ռիչարդսոն

20 Ավետարանի դասակարգումներ: Ուսուցանել արդարություն տանը
Երեց Դեյվերտ Լ. Ստեպլի


38 Վերջին Օրերի Սրբերի ձայները

74 Եկեղեցու նորությունները

79 Մտքեր ընտանեկան երեկոյի համար

80 Մինչև նոր հանդիպում: Լավ բաները շարունակվում են
Քեթլին Ա. Ռաշ

ԿԱՏՄԻ ԿՐԱ
Լուսանկարները՝ Քոդի Բելլի:



42

42 Մաքրաբարոյություն անբարո աշխարհում
Ուր երիտասարդ չափահասներ քննարկում են, թե ինչպես մնան մաքրաբարո մի աշխարհում, որտեղ մաքրաբարոյությունը չի գնահատվում:



Տեսեք, թե կարող եք գտնել այդ համարում թաքնված Լիահոնան: Հուշում. Լոյն օգտագործո՞ւմ էր Լիահոնա:

46 Հարցեր և պատասխաններ
Ի՞նչ է նշանակում պատվել Աստծո քահանայությունը:

48 Եղիր իմաստուն և եղիր ընկեր
Երեց Ռոբերտ Դ. Շելլս
Լավ ընկերները դյուրին են դարձնում պատվիրաններով սպրեյը:

51 Հագուստ պարի համար
Քրիսթի Մարտին
Ես գաղթակյալների հագնելու մի զգեստ, որը չէր ծածկում ուսերս, սակայն հիշեցի իմ հայրապետական օրհնությունը:

52 Երիտասարդներին զորացնելու համար: Հագուստ և արտաքին տեսք՝ «Թող Սուրբ Հոգին առաջնորդի»
Մարի Ն. Զուր

54 Զորացած խոսքով
Չորս դեռահասներ պատում են այն պահերի մասին, երբ հիշել են սուրբ գրությունները, որոնք օգնել են իրենց:

57 Պատահա: Ուղիղ և նեղ է ճանապարհը

51



58 Ավարտելով Երեխաների խումբը
Սիա մի քանի փորձառություններ, որոնք կարող եք ակնկալել Երիտասարդ Տղամարդկանց կամ Երիտասարդ Կանանց միություններում:

60 Սիրելի ընկերուհի
Միրաբելից
Նախակ ընկերուհուն, որն անհանգստանում էր Երեխաների խմբից տեղափոխվելու առիթով:

61 Ողջունելով կյանքի նոր փուլը
Մարիսա Վիդիսոն
Նորը, Դիլանը, Պատրիկը և Բենը պատրաստվում են ստանալ քահանայություն:

62 Երգ: Արի, Տեր Հիսուս

63 Հատուկ վկա. Ինչո՞ւ է կարևոր, որ ես հավատարմությամբ հետևեմ Հիսուս Քրիստոսին, անկախ նրանից, թե որտեղ եմ:
Երեց Դալլին Շ. Օուքս

64 Տուն բերենք Երեխաների խմբի դասը: Զահանայության օրհնությունները մատչելի են բոլորին

66 Կրկնակի օրհնություն
Ռիչարդ Մ. Ռոմկի
Ծանոթացե՛ք 10-ամյա երկորյակներ Մոֆիի և Էլոդիի հետ՝ Մադագասկարից:

68 Կարո՞ղ եմ ես էլ մկրտվել
Հիլարի Վոթկինս Լեմոն
Վեցամյա Պատվոն անհամբեր սպասում է, թե երբ է դառնալու Եկեղեցու անդամ:

70 Փոքր երեխաների համար

81 Մորմոնի Գրքի կերպարները

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ա. Մոնտես, Նենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուլտրոյթ

Տասներկու Առաջալսների Քննություն. Բոլոր Զ. Փաթեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դավիթ Ն. Օուգս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Նելսոն, Ջեֆրի Ռ. Նոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քոնստանց Լ. Բուր, Դ. Թոմ Բրիստոֆերսոն, Նիլ Լ. Մոլդերսոն

Խմբագիր. Բրեյդ Ա. Բարրոն
Խորհրդատուներ. Շեն Մ. Բոուն, Բրեյլի Դ. Ֆոսթեր, Բրիստոֆեր Գոլդեն Կրոս, Էնթոնի Փերքինս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Թ. Ուոլթեր
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վիլսոն Ս. Վոն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբերգ
Գործարար կառավարիչ. Գարթ Թեննոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնական.

Լամեն Փորթեր Գալսթ

Հրատարակչության օգնական. Մեկիսա Ջենտենո
Ստորագրողական և խմբագրական կազմ. Սյուզան Բարթե, Ռայան Բար, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆիլթոն, Միկոյի Ռեյ Ֆրիդման, Հիլարի Լոֆտաս, Լիա ՄակՔանահան, Մայքլ Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդերբերգ, Ջուլիա Վոլդերգ

Արվեստի գծով գործադիր տնօրեն.

Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի գծով տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Դիզայնի կազմ. Ջանեթ Էնդրյուս, Ջեյ Փ. Մորրոս, Ս. Բլանքա Բոթ, Թոմաս Չայլոր, Բերի Լին Ս. Ներին, Բոլին Հինգի, Էրիկ Դ. Ջոնսոն, Սքոթ Մ. Սոյ, Բրեդ Թիլդ
Մտավոր սեփականության համակարգող.

Բոլեթ Ներեթեր Օս

Հրատարակչության տնօրեն. Ջեն Էլն Փիթերս
Հրատարակչության կազմ. Քոնստանց Բոթ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարթե, Բրայան Վ. Գիլի, Բեթին Հովարդ, Դենիս Զորրի, Ջինի Զ. Նիլսոն, Թայ Փիլչեր, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Բրեյդ Վ. Սեյվիկ
Բաշխման տնօրեն. Էլան Լարեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծիխ/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝
liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կրթման ցույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսպան, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, ռուսերեն, թագալոգ, թայվերեն, թայերեն, թունգերեն, ինդոնեզերեն, իսպաներեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբատի, կորեերեն, հայերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագաչի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոյերեն, սլովեներեն, սլոնիսկերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակչության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների):

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:



Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներքոյում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով: Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով: cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
October 2012 Vol. 13 No. 3. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

Ավելին՝ առցանց Liahona.lds.org



ԶՄՓԱՀԱՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առաջին Նախագահության Ուղերձում (Էջ 4) ներման մասին կարդալուց հետո, դուք, մի գուցե, ցանկանաք Նույնպես կարդալ Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի համաժողովի ելույթը՝ «Ներման բուժող գործությունը» (Ապրիլ 2007), **conference.lds.org**:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Էջ 52-ում Մերի Ն. Զուրբ բացատրում է, թե ինչպես կարող է տաճարում զգացած մեր ակնածանքը ուղղորդել մեզ հագուստի ընտրության մեջ: **Youth.lds.org-ում** դուք կարող եք ավելին իմանալ «Հագուստ և արտաքին տեսք»-ի մասին և ցանկացած այլ չափանիշի մասին *Երիտասարդների գորսացնելու համար* գրքուկից:

ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք կարող եք կարդալ երկրորդական Էլոդիի և Սոֆիի մասին՝ Մադագասկարից «Կրկնապատկել օրհնությունները» հոդվածում (Էջ 66), և դիտել Նրանց զվարճալի լուսանկարները **liahona.lds.org** կայքում:

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **www.languages.lds.org** կայքում:

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Աղոթք, 38
Աշխատանք, 12
Առաջնորդության, 20
Բարություն, 28
Գերագույն համաժողով, 10
Դարձ, 39
Եկեղեցու պատմություն, 14
Երիտասարդ Կանայք, 58, 60
Երիտասարդ Տղամարդիկ, 58, 61
Ընկերներ, 48

Ընտանիք, 4, 16, 20, 22, 38, 66
Իմաստություն, 48
Ինքնապահովում, 12
Ծառայություն, 20, 39
Ծնողներ, 14, 16
Կիրակի, 40
Հագուստ, 9, 51, 52
Հավատք, 39, 80
Հիսուս Քրիստոս, 62, 63
Հնազանդություն, 40, 57
Ձախորդություն, 28
Մարգարեններ, 28
Մկրտություն, 68

Մորմոնի Գիրք, 28, 89
Նախապատրաստություն, 12
Ներում, 4
Ողջախոսություն, 16, 42
Ուխտեր, 8
Ուսուցում, 16, 20, 22
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 11, 54
Տաճարներ, 8, 52
Քահանայություն, 46, 64
Օրինակ, 40





**Նախագահ
Դիտեր Ն. Ունսոն**

Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Երջանիկ ընտանիքի

ԲԱՆԱԼԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ուս մեծ գրող Լև Տոլստոյը սկսեց իր *Աննա Կարենինա* վեպը այս խոսքերով. «Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար. յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի»¹ Թեև ես չունեմ Տոլստոյի վստահությունը, որ բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, ես հայտնաբերել եմ, որ նրանցից շատերն ունեն մեկ ընդհանրություն. նրանք կարողանում են ներել և մոռանալ ուրիշների անկատարությունները և փնտրել լավը:

Մյուս կողմից, դժբախտ ընտանիքները հաճախ սխալներ են գտնում, ովս են պահում և չեն կարողանում մոռանալ նախկին վիրավորանքները:

«Այո, բայց . . .» սկսում են նրանք, ովքեր դժբախտ են: «Այո, բայց դուք չգիտեք, թե որքան խորն է նա ինձ վիրավորել», ասում է մեկը: «Այո, բայց դուք չգիտեք, թե որքան սարսափելի անձնավորություն է նա», ասում է մյուսը:

Գուցե երկուսն էլ ճիշտ են. գուցե ոչ մեկն էլ ճիշտ չէ:

Վիրավորանքի տարբեր աստիճաններ կան: Ցավի տարբեր աստիճաններ կան: Մակայն ես նկատել եմ մի բան, որ հաճախ մենք արդարացնում ենք մեր գայրույթը և հանգստացնում ենք մեր խիղճը ինքներս մեզ պատմելով պատմություններ ուրիշների դրդապատճառների վերաբերյալ և դատապարտելով նրանց արարքները որպես աններելի և եսասեր, մինչդեռ, միևնույն ժամանակ, արդարացնում ենք մեր սեփական դրդապատճառները համարելով դրանք մաքուր և ոչ միտումնավոր:

Արքայազնի շունը

Կա 13-րդ դարի ուելսյան մի հին պատմություն մի արքայազնի մասին, ով տուն գալով գտնում է իր շանը՝

երեսից արյուն կաթկթելիս: Նա արագ ներս է վազում և սարսափահար տեսնում, որ իր արու զավակը այնտեղ չէ և նրա օրորոցը շրջված է: Իր բարկության մեջ արքայազնը հանում է թուրը և սպանում իր շանը: Շատ չանցած նա լսում է իր մանկան լացը. երեխան ողջ էր: Մանկան կողքին փռված էր մի սատկած գայլ: Շունն իրականում պաշտպանել էր արքայազնի որդուն մահաբեր գայլից:

Չնայած այս պատմությունը շատ հուզիչ է, այն նպատակ ունի: Այն հնարավոր է դարձնում, որ պատմությունը, որը մենք պատմում ենք ինքներս մեզ, թե ինչու են ուրիշները վարվում որոշակի կերպով, միշտ չէ, որ համապատասխանում է փաստերին, երբեմն մենք նույնիսկ չենք ուզում իմանալ փաստերը: Մենք նախընտրում ենք մեր գայրույթի մեջ արդարացնել ինքներս մեզ՝ հենվելով մեր ցավալի իրավիճակի և վիրավորվածության վրա: Երբեմն այս ռիսկալիությունը կարող է տևել ամիսներ կամ տարիներ: Երբեմն դա կարող է տևել մի ամբողջ կյանք:

Բաժանված ընտանիք

Մի հայր չէր կարողանում ներել իր որդուն, քանի որ նա շեղվել էր այն ճանապարհից, որը նրան սովորեցրել էին: Տղան ուներ ընկերներ, որոնց հայրը չէր հավանում, և նա արել էր շատ բաներ, որոնք հակասում էին այն ամենին, ինչ հայրն էր սովորեցրել իրեն: Սա անհամաձայնության պատճառ դարձավ հոր և որդու միջև, և հենց որ տղան կարողացավ, նա հեռացավ հայրական տնից և այլևս չվերադարձավ: Նրանք հազվադեպ էին կրկին խոսում իրար հետ:

Հայրը իրեն արդարացված էր զգում: Միգուցե:

Որդին իրեն արդարացված էր զգում: Միգուցե:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՍ ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻՑ

«Յուրաքանչյուր դար պատրաստելիս ինքներդ ձեզ հարցրեք, թե ինչով է տվյալ սկզբունքը նման նրան, ինչ ընտանիքի անդամները զգացել են իրենց կյանքում» (Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում [1999], 171): Կարող եք հրավիրել ընտանիքի անդամներին կիսվել իրենց ունեցած դրական փորձառություններով կամ ներման հետ կապված իրենց դիտարկումներով: Քննարկեք այդ փորձառությունները, շեշտելով ներման օրինությունները: Եզրափակեք, բերելով ձեր վկայությունը միմյանց ներելու կառնորդության մասին:

Ես ընդհամենը գիտեմ մի բան՝ այս ընտանիքը բաժանված և դժբախտ էր, քանի որ ոչ հայրը, և ոչ էլ որդին չկարողացան ներել իրար: Նրանք չկարողացան նայել դառը հիշողություններից այն կողմ, որ ունեին միմյանց մասին: Նրանք լցրեցին իրենց սրտերը բարկությամբ՝ սիրո և ներողամտության փոխարեն: Յուրաքանչյուրն ինքն իրենից գողացավ մյուսի կյանքում լավ ազդեցություն թողնելու հնարավորությունը: Նրանց մեջ բաժանումն այնքան խորացավ և այնքան մեծացավ, որ յուրաքանչյուրը դարձավ հոգևոր բանտարկյալ իր սեփական էմոցիոնալ կղզում:

Բարեբախտաբար, մեր սիրող և իմաստուն Հավերժական Երկնային Հայրը միջոցներ է նախապատրաստել այս հպարտության անդունդը հաղթահարելու համար: Մեծ ու անսահման Քավությունը ներման և հաշտության ամենամեծ գործն էր: Դրա կարևորությունը իմ հասկացողությունից վեր է, սակայն ես վկայում եմ իմ ողջ սրտով ու հոգով դրա իրականության և գերազույն գործության մասին: Փրկիչը Ինքն իրեն առաջարկեց որպես փրկագին մեր մեղքերի համար: Նրա միջոցով մենք ներում ենք ստանում:

Ոչ մի ընտանիք կատարյալ չէ

Չկա մեզանից և ոչ մեկը, որ մեղք գործած չլինի: Մեզանից յուրաքանչյուրն էլ սխալներ է գործում, ներառյալ դուք և ես: Մենք բոլորս էլ եղել ենք խորապես վիրավորված: Մենք բոլորս էլ խորապես վիրավորել ենք ուրիշներին:

Մեր Փրկչի զոհաբերության շնորհիվ է, որ մենք կարող ենք ձեռք բերել վեհացում և հավերժական կյանք: Երբ մենք ընդունում ենք Նրա ճանապարհները և հաղթահարում ենք մեր հպարտությունը փափկացնելով մեր սրտերը, մենք կարող ենք հաշտեցում և ներողամտություն բերել մեր ընտանիքներ և մեր անձնական կյանք: Մատված կօգնի մեզ լինել ավելի ներողամիտ, ավելի շատ կամենալ քայլել երկրորդ մղունը, լինել առաջինը, ով ներողություն է խնդրում, եթե նույնիսկ ինչ-որ բան մեր մեղքով չի եղել, մի կողմ դնել հին ոխը և այլևս չխորացնել այն: Փառք Աստծուն, որ տվեց Իր Միածին Որդուն, և փառք Որդուն, որ տվեց իր կյանքը մեզ համար:

Մենք կարող ենք զգալ Աստծո սերը մեր հանդեպ ամեն օր: Արդյոք չպե՞տք է մի փոքր ավելի նվիրվենք մեր մերձավորներին, ինչպես ուսուցանվում է «Քանի որ ինձ շատ է տրված» սիրված հիմնում:² Տերը ներման դուռ է բացել մեզ համար: Արդյո՞ք ճիշտ չի լինի մի կողմ դնել մեր սեփական եսասիրությունը և հպարտությունը և սկսել բացել ներման այդ օրհնյալ դուռը նրանց համար, ում հետ մենք խնդիրներ ունենք, հատկապես մեր ողջ ընտանիքի համար:

Ի վերջո, երջանկությունը ծնվում է ոչ թե կատարելությունից, այլ աստվածային սկզբունքները կիրառելուց, նույնիսկ՝ փոքր քայլերով: Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը հայտարարել են. «Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, *ներողամտության*, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով»:³

Մեր Երկնային Հոր երջանկության ծրագրում գտնվող այս պարզ ճշմարտությունների հենց կենտրոնում իր տեղն է զբաղեցնում ներողամտությունը: Քանի որ ներողամտությունը իրար է միացնում սկզբունքները, այն միացնում է նաև մարդկանց: Այն բանալի է, այն բացում է փակված դռները, այն ազնիվ ուղու սկիզբն է, և այն երջանիկ ընտանիքի լավագույն հույսն է:

Թող Աստված լինի մեզ օգնական, որպեսզի լինենք մի փոքր ավելի ներողամիտ մեր ընտանիքներում, ավելի ներողամիտ մեկս մյուսի հանդեպ և, գուցե, ավելի ներողամիտ նույնիսկ ինքներս մեր հանդեպ: Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք ունենալ ներողամտության փորձառությունը, որպես մի հրաշալի միջոց, որով բոլոր երջանիկ ընտանիքները իրար նման են: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լև Տոլստոյ, *Ամուս Կալենինսկու*, թարգմ. Վահան Տեր-Առաքելյան (1957), 3:
2. «Քանի որ ինձ շատ է տրված», *Hymns*, no. 219:
3. «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիստոնա*, Նոյեմբեր 2010, 129. ընդգծումներն ավելացված են:

Աղոթք և խաղաղություն

Լաուրեն Վ.

Մի երեկո ես վիճեցի մայրիկիս հետ և ինձ շատ վատ զգացի: Ուստի, որոշեցի աղոթել: Չնայած ես վատ տրամադրություն ունեի և չէի ուզում «հոգևոր» լինել, ես գիտեի, որ աղոթելը կօգներ ինձ մի փոքր երջանիկ զգալ և ավելի քիչ վիճաբանող լինել: Երբ մայրս դուրս եկավ իմ սենյակից, ես սկսեցի իմ աղոթքը: «Թանկագին Երկնային Հայր, այս երեկո ես գալիս եմ քո առաջ, որովհետև . . .»: Ոչ: Ես բացեցի իմ աչքերը և ձեռքերս ցած իջացրեցի. դա շատ դժվար էր թվում: Ես կրկին փորձեցի. «Երկնային Հայր ինձ պետք է . . .»: Դա նույնպես տարօրինակ թվաց: Ես զգացի, որ Սատանան դրդում էր ինձ հրաժարվել Երկնային Հորից օգնություն խնդրելու իմ աղոթքից:

Հանկարծ ես հուշում ստացա՝ շնորհակալություն ասել: Ուստի, ես ասացի, և մտքեր սկսեցին հորդել այն ամենի վերաբերյալ, ինչի համար ես կարող էի շնորհակալություն հայտնել իմ Երկնային Հորը: Երբ ես ավարտեցի շնորհակալություն հայտնելը, ես անմիջապես սկսեցի քննարկել խնդիրը:

Դրանից հետո ես հրաշալի խաղաղություն զգացի իմ մեջ, հոգևոր ջերմ զգացողություն, որ ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը և իմ ծնողները սիրում են ինձ, և որ ես Աստծո զավակ եմ: Ես կարողացա ներողություն խնդրել իմ մորից և ընդունել նրա ներողությունը:

Ներողամտությունը երջանկություն է բերում

Նախագահ Ուիլյամսը սովորեցնում է, որ մենք պետք է ներենք մեր ընտանիքի անդամներին: Տեսեք, թե ինչ ազդեցություն են թողնում Ջոզեֆի և Աննայի ընտրությունները իրենց ընտանիքի վրա:



Ջոզեֆն ու իր փոքրիկ քույր Աննան խաղում են միասին: Աննան Ջոզեֆի խաղալիքը խլում է նրանից: Ի՞նչ պետք է անի Ջոզեֆը:

Ջոզեֆը բարկանում է Աննայի վրա: Աննան լաց է լինում: Ջոզեֆի մայրը պատժում է նրան իր քույրիկի հետ կռվելու համար: Ջոզեֆը զղջում է, որ վատ ընտրություն էր կատարել:

Ջոզեֆը ներում է Աննային և մեկ այլ խաղալիք է գտնում խաղալու համար: Նրանք ուրախ խաղում են միասին: Նրանց մայրը ուրախ է, որ Ջոզեֆը բարի գտնվեց իր քրոջ հանդեպ և խաղաղություն պահպանեց ընտանիքում: Ջոզեֆը երջանիկ է, որ ընտրեց ներելը:



Ավելի ուշ Ջոզեֆն ու Աննան պետք է օգնեն իրենց մայրիկին պատրաստել ճաշը: Ջոզեֆը չի օգնում: Ի՞նչ պետք է անի Աննան:

Աննան դժգոհում է իր մորը: Աննան վիճում է գործը մենակ անելու համար: Ճաշին բոլորը տխուր են վիճաբանության պատճառով:

Աննան ներում է Ջոզեֆին և օգնում է ճաշի պատրաստություններում: Նրանց մայրը շնորհակալ է Աննայի օգնության համար: Ընտանիքը միասին վայելում է ճաշը: Աննան լավ է զգում, որ ընտրեց ներելը:

Ինչպե՞ս են ներելու ձեր ընտրությունները ազդում ձեր ընտանիքի երջանկության վրա:

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հայրնար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ակնարկել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Պատվել մեր ուխտերը

Այցելությամբ ուսուցանելը մեր Աաշակերտության արտահայտումն է և մեր ուխտերը պատվելու միջոց, մինչ մենք ծառայում և ամրացնում ենք միմյանց: Ուխտը սուրբ և հարատև խոստում է Աստծո և Նրա զավակների միջև: «Երբ մենք գիտակցում ենք, որ մենք ուխտի զավակներ ենք, մենք հասկանում ենք, թե ով ենք մենք և ինչ է մեզանից ակնկալում Աստված», ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնը: «Նրա օրենքը գրված է մեր սրտերում: Նա մեր Աստվածն է, և մենք՝ նրա ժողովուրդը»:¹

Որպես այցելող ուսուցիչներ մենք կարող ենք ամրացնել նրանց, ում մենք այցելում ենք, իրենց սուրբ ուխտերը պահելու ջանքերում: Մա անելով մենք օգնում ենք նրանց պատրաստվել հավերժական կյանքի օրհնություններին: «Այս եկեղեցու յուրաքանչյուր քույր, ով ուխտեր է կապել Տիրոջ հետ, ունի աստվածային հրահանգ օգնել փրկել հոգիներ, առաջնորդել աշխարհի կանաց, ամրացնել Միոնի տները և կառուցել Աստծո թագավորությունը»,² ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը:

Երբ մենք կապում և պահում ենք սուրբ ուխտեր, մենք դառնում ենք գործիքներ Աստծո ձեռքերում: Մենք կկարողանանք խոսել մեր համոզմունքների մասին և ամրացնել միմյանց հավատքը առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:



Սուրբ գործություններից

1 Նեփի 14.14, Մոսիա, 5.5–7, 18.8–13, Վարդապետություն և Ուխտեր 42.78, 84.106

ՀՂՈՒՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Ուխտեր», *Լիստոն*, Նոյեմբեր 2011, 88:
2. M. Russell Ballard, «Women of Righteousness», *Liahona*, Dec. 2002, 39.
3. *Իմ արքայության դաստիարակը*. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը (2011), 133:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս եմ իմ ուխտերն ամրացնում ինձ:
2. Ինչպե՞ս եմ ես օգնում քույրերին, որոնց համար ես հոգ եմ տանում, պահել իրենց ուխտերը:

Հավատք,
Ընտանիք,
Սփոփանք



Մեր պատմությունից

Տաճարը «գոհաբանության տեղ է բոլոր սրբերի համար», հայտնել է Տերը Ջոզեֆ Սմիթին 1833թ.: Այն «իրահանգների տեղ է բոլոր նրանց համար, ովքեր կանչված են ծառայության գործին՝ բոլոր իրենց տարբեր կոչումներում ու պաշտոններում. որպեսզի նրանք կատարելագործվեն իրենց ծառայության հասկացողության մեջ՝ տեսության, սկզբունքի և վարդապետության մեջ, երկրի վրա Աստծո արքայությանը վերաբերող բոլոր բաներում» (Վևու 97.13–14):

Սփոփող Միության քույրերը Նավուում, Իլիանոյս, 1840-ականների վաղ շրջանում օգնեցին միմյանց նախապատրաստվել տաճարային արարողություններին: Բարձրագույն քահանայության արարողություններում, որոնք Վերջին Օրերի Սրբերը ստացան Նավուի Տաճարում, «բացահայտվեց աստվածայնության գործությունը» (Վևու 84.20): «Մինչ Սրբերը պահում էին իրենց ուխտերը, այդ գործությունն ամրացնում և պաշտպանում էր նրանց իրենց փորձությունների ընթացքում օրեր ու տարիներ շարունակ»:³

Այսօր եկեղեցու հավատարիմ կանայք և տղամարդիկ ամբողջ աշխարհով մեկ ծառայում են տաճարում և շարունակում են ուժ գտնել օրհնություններում, որոնք հնարավոր է ստանալ միայն տաճարային ուխտերի միջոցով:

ՀԱԳՈՒՍ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔ

Այսօրվա աշխարհում շատերը չեն հասկանում կամ հարգում մեր մարմինների սուրբ էությունը: Վերջին Օրերի Սրբերը առանձնանում են իրենց հագուստի ոճով, որը ցույց է տալիս, որ մենք գիտենք, թե որքան թանկ են մեր մարմինները (տես *Երիտասարդներին Ձորացնելու համար* [գրքույկ, 2011], 14–16): Այս ամսագրի 52 էջում Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական Մերի Ն. Քուրթը քննարկում է այս չափանիշները:

«Տաճար կառուցելիս մեծ ուշադրություն է դարձվում, որպեսզի այն պաշտպանված և գեղեցիկ հարդարված լինի՝ ներքուստ և արտաքուստ: Տաճարներ նախագծելու բանալին հասկանալն է, որ տաճարը *ներկայացնում է Տիրոջը՝ դա Նրա տունն է: Մենք հարգանքով ենք վերաբերվում տաճարներին որպես սուրբ շինության, որտեղ կարող են մտնել միայն նրանք, ովքեր արժանի են: Մենք սկսածանք ունենք տաճարների հանդեպ, քանի որ սուրբ արարողություններն ու ուխտերը, որոնց մենք մասնակցում ենք, հնարավոր են դարձնում, որ մենք վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ:*»

Ձեր մարմինը ավելի թանկ է, քան աշխարհի ամենաքանձելի տաճարը: Դուք Աստծո սիրելի որդին կամ դուստրն եք: Այս նույն սկզբունքները՝ ներկայացնելը, հարգելը և ակնածանքով վերաբերվելը, նույնիսկ ավելի շատ վերաբերվում են ձեր մարմնին տրվող խնամքին ու պաշտպանությանը:

Հետևյալ խորհուրդները կօգնեն ձեզ սովորեցնել ձեր երեխաներին ճիշտ սկզբունքներ հագուստի և արտաքին տեսքի վերաբերյալ: Նաև հիշեք, որ համեստ հագուստ կրելու ձեր օրինակը կսովորեցնի ձեր երեխաներին, թե որքան կարևոր է պատշաճ հագուստը:

Խորհուրդներ Երիտասարդներին ուսուցանելու համար

- Ձեր դեռահաս որդու կամ դստեր հետ կարդացեք *Երիտասարդներին Ձորացնելու համար* գրքույկի հագուստ և արտաքին տեսք բաժինը: Միասին կարդալը ձեզ հնարավորություն կտա քննարկել այդ չափանիշին վերաբերող վարդապետությունները, օրինությունները և նախագծողացումները և պատասխանել ձեր որդու կամ դստեր ցանկացած հարցին:
- Խորհեք հագուստի և արտաքին տեսքի վերաբերյալ ընտանեկան երեկո անցկացնելու մասին: Դուք կարող եք հարցնել ձեր ընտանիքին. Եթե Տերը լինել էկեղեցում ձեր հետ միասին, ինչպե՞ս կուզեիք հագնված լինել: Ինչպե՞ս կուզեիք ներկայացնել ձեզ Նրան: Ինչպե՞ս եք դուք ձեզ զգում, երբ դուք համեստ եք հագնված: Դուք կարող եք նաև քննարկել, թե ինչպես պատշաճ կերպով հագնվել այլ դեպքերում, ինչպես օրինակ դպրոցում, աշխատավայրում կամ հասարակական միջոցառումների ժամանակ:

Խորհուրդներ Երեխաներին ուսուցանելու համար

- Մեր հագուստը ցույց է տալիս, թե ինչն է կարևոր մեզ համար: Այս սկզբունքը լուսաբանելու համար կարող եք ընտանեկան երեկո անցկացնել, որի ժամանակ բոլորը հագնված կլինեն միսիոներների պես կամ կհագնեն կիրակնօրյա լավագույն հագուստը:
- Նույնիսկ կրտսեր տարիքից երեխաները կարող են սկսել համեստ հագնվել: Ձեր երեխաների հետ միասին վերանայեք *Երիտասարդներին Ձորացնելու համար* գրքույկի 14 էջը և տրամադրեք հագուստներ, որոնք համապատասխանում են այդ կանոններին: ■



ՀԱԳՈՒՍԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծննդոց Ա.27,
Ա Կորնթացիս Զ.19,
Ավմա 1.27

Հոկտեմբերի Համաժողովի նորաստեղծ

«Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, . . . լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ժառանգրի ձայնով՝ միևնույն է» (ՎեՐ 1.38):

Ազատել մեր օրացույցը համաժողովի համար

Շերիլ Բուր

Քանի որ մեր ժամանակը զբաղեցված չէր լրացուցիչ միջոցառումներով, գերագույն համաժողովը լսելիս մենք կարողացանք ավելի շատ զգալ Հոգին:

Տարիներ առաջ, երբ մեր վեց երեխաները փոքր էին, մենք որոշեցինք, որ ուզում ենք դարձնել գերագույն համաժողովը ավելի իմաստալից մեզ համար: Մենք խոսեցինք այն մասին, թե որքան կարևոր է դիտել համաժողովը հստակ մտքով և հանգիստ առած մարմնով: Համաժողովը կարևոր ժամանակ է մեր ներկայիս մարգարեներից ուսուցում ստանալու համար: Ուստի, մենք նպատակ դրեցինք համաժողովից մի քանի օր առաջ կամ համաժողովի հանգստյան օրերին ոչ մի լրացուցիչ բան չծրագրել: Մենք նշեցինք այդ օրերը մեր օրացույցի վրա և մեզանից յուրաքանչյուրը պարտավորվեց չնախատեսել ոչ մի լրացուցիչ միջոցառում այդ օրերին:

Եթե դուք նման մոտեցում ընտրեք, այն հատուկ կլինի ձեր ընտանիքի և իրավիճակի համար, սակայն մեր ընտանիքի համար «լրացուցիչ միջոցառումներ» համարվեցին դպրոցական միջոցառումներին հաճախելը, հարևանների երեխաներին հյուր կանչելը, ընկերների հետ տանից հեռու ժամանակ անցկացնելը, ընկերների կամ հարազատների հետ երեկոյաններ ունենալը կամ նրանց հետ ընթրելը, համաժողովի նիստերի ընդմիջումների ժամանակ կամ ընթացքում ծրագրեր ունենալը կամ պարտեզում աշխատելը, դպրոցական ծրագրերը մինչև վերջին բոլոր հետաձգելը և աշխատավայրում լրացուցիչ հանձնարարություններ վերցնելը:

Երբ գերագույն համաժողովին նախորդող շաբաթը եկավ, երբեմն դժվար էր լինում այս միջոցառումներին ոչ ասելը, սակայն մեծամասամբ մեր ընտանիքի անդամները ուրախությամբ ճիշտ ընտրություններ կատարեցին մեր նպատակին հասնելու համար: Մենք հայտնաբերեցինք, որ մեր կրտսեր երեխաները ուզում էին ներկա լինել գերագույն համաժողովին: Ես կարծում եմ, որ դրա պատճառն այն էր, որ մենք կրկին ու կրկին խոսում էինք

համաժողովի կարևորության մասին ողջ շաբաթվա ընթացքում:

Ես ուրախ եմ գեկուցելու, որ մեր օրակարգը չծանրաբեռնելը գերագույն համաժողովից մի քանի օր առաջ և դրա ընթացքում ամբողջովին փոխեց մեր ընտանիքի փորձառությունը: Մեր սրտերն ու մտքերը պատրաստված էին համաժողովի համար: Մեր ժամանակը զբաղեցված չէր լրացուցիչ միջոցառումներով, ուստի մենք կարողացանք զգալ Հոգին, մինչև մենք նստեցինք ու լսեցինք մեր ղեկավարների խորհուրդները:

Մենք հավատարիմ մնացինք մեր նպատակին համաժողովից համաժողով, քանի որ այն լցնում է մեր տունը խաղաղությամբ: Չնայած մեր երեխաներից մի քանիսը այլևս մեր տանը չեն ապրում, մենք խրախուսում ենք նրանց շարունակել ազատ պահել իրենց օրացույցները համաժողովից մի քանի օր առաջ և դրա ընթացքում, ինչպես մենք անում ենք տանը: Մենք նաև փորձում ենք ժամանակ հատկացնել և համաժողովի մեկ նիստը դիտել միասին՝ ամբողջ ընտանիքով: Ես հուսով եմ, որ երբ մեր երեխաներն ամուսնանան և ունենան իրենց սեփական երեխաները, նրանք կշարունակեն մեծ կարևորություն տալ իրենց համաժողովի փորձառությունը պաշտպանելուն՝ իրենց օրացույցի վրա ազատ պահելով այդ օրերը: ■



ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԴԱՐՉՆԵԼ ԱՌԱՋ-ՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆ

«Որոշեք այժմ գերագույն համաժողովը դարձնել առաջնահերթություն ձեր կյանքում: Որոշեք ուշադիր լսել և հետևել ուսմունքներին, որոնք տրվում են»:

Երեք Փոլ Վ. Ջոնսոն, Յոթնամյակից, «Գերագույն համաժողովի օրհնությունները», *Լիսինա*, Նոյեմբեր 2005, 52:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Էմմա Ադամս

Ես հակված եմ իմ փորձությունների հետ կապված փառահեղ պատասխաններ փնտրել, խնդրել Տիրոջը օգնել ինձ գտնել այն մեկ բանը, ինչը կշտկի ամեն բան: Ես հասկացա, որ այդպիսի մոտեցումը կարող է ամեն բան ավելի խճճել:

Մինչ ես դասավանդում էի իմ ծխի Ավետարանի Վարդապետության դասարանում, ես վճռականությամբ լի տալիս էի լուրջ հարցեր, որոնք պահանջում էին երկար մտածելու և մեծ, նոր, խորաթափանց պատասխաններ գտնելու: Այլ կերպ ասած, ես փորձում էի խուսափել անգիր արված նույն հին «Կիրակնօրյա Դպրոցի պատասխաններից», որ թվում էր, թե ծխի անդամներն առաջարկում էին ամեն շաբաթ:

Մինչ պատրաստվելիս ես խորամուխ էի լինում Նոր Կտակարանի մեջ, ես անընդհատ հանդիպում էի *կենսալ* բառին: Օրինակ, Հովհաննես ԺԵ.10 ասում է. «Եթե իմ պատուիրանքները պահեք, իմ սերի մեջը *կկենսալ*»։ Ինչպես ես իմ Հօր պատուիրանքները պահեցի, եւ *կկենսու* եմ նորա սերի մեջ» (ընդգծումներն ավելացված են):

Իր հրաշալի Բարեխոսության Աղոթքում Փրկիչը աղոթում է, որ իր աշակերտները «մէկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ լինեն» և «Ես նորանցում՝ եւ դու ինձանում, որ կատարեալ լինեն միութիւնում» (Հովհաննես ԺԵ.21, 23):

Ամենաշատը ես փնտրում էի այն, թե ինչպես ես կարող էի մէկ լինել Տիրոջ հետ, ինչպես ես կարող էի *կենսալ* Նրա սիրտ մեջ, և արդյունքում, ինչպես ես կարող էի զարգացնել ավելի մեծ համբերություն, համբերություն, որի կարիքը ես այնքան շատ ունեի, որպէսզի ինձ ուժասպառ անող փորձառությունները վերածվեին ինձ գորացնող և սրբացնող փորձառությունների:

ճակատագրի հեգնանքով, մինչ ես փնտրում էի *կենսալ* բառի մեկնաբանությունը և ամեն օր ինձ հանդիպող բարդ խնդիրների լուծումները, ես ի վերջո կրկին հանգեցի Կիրակնօրյա Դպրոցի հստակ պատասխաններին, որոնցից ես փորձում էի խուսափել: Ես գտա իմ հարցերի պատասխանները՝ կարդալով սուրբ գրությունները, աղոթելով ամեն օր, ծառայելով իմ ընտանիքին և ուրիշներին և տաճար ու իմ կիրակնօրյա ժողովներին հաճախելով: Ես սովորեցի, որ այդ հասարակ բաները շատ բան են փոխում տոկալու և լավ ու համբերությամբ տոկալու միջև:

Կիրակնօրյա Դպրոցի պատասխանները իրոք ամենալավ պատասխաններն են: ■



ՄԵԾԱՑՆԵԼ ՄԵՐ ՆԱՎԱՏԵՐ

«Ծառայելը, ուսումնասիրելը, աղոթելը և երկրպագելը չորս սկզբունքներ են, որոնք կատարելագործում են «[մեր]

հավատքի պակասությունը լրացնելը»։ (Ա թես 9.10): Եթե մենք դադարենք մեծացնել մեր հավատքը այս չորս հատուկ սկզբունքներից մեկում, մենք խոցելի կդառնանք: . . .

Այս կարծրացող աշխարհում Տերը կարող է թափանցել մեր գիտակցության մեջ օգտագործելով «Հոգու սուրը, որ Աստծո խոսքն է»։ (Եփես. 2.17, տես նաև Հարոմ 1.12.): Ինչնից, լսելը պետք է «խառնվի հավատքի հետ» (Եբր. 7.2) և քրիստոնեական ծառայության հետ, ինչպես մենք լսել ենք կրկին ու կրկին»:

Elder Neal A. Maxwell (1926–2004) of the Quorum of the Twelve Apostles, "Lest Ye Be Wearied and Faint in Your Minds," *Ensign*, May 1991, 88.



ՕԳՏԱԳՈՐԾԵԼՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՆԱՍՏԱՏՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Ավետարանի վարդապետությունները ուսուցանելու և դրանց մասին վկայելու նպատակով, ուսուցիչները և ղեկավարները օգտագործում են սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների ուսմունքները, ուսումնական ծրագրի հաստատված նյութերը: Ուսումնական ծրագրի հաստատված նյութերը յուրաքանչյուր դասարանի կամ քվորումի համար տրված է *Ուսումնական ծրագրի վերաբերյալ հրահանգներում*: Անհրաժեշտության դեպքում, ուսուցիչները և ղեկավարները կարող են լրացնել ուսումնական ծրագրի նյութերը Եկեղեցու ամսագրերով, հատկապես *Ensign* և *Լիաժողով* ամսագրերի գերագույն համաժողովների համարներով:

26 նոյարկ 2. Ծառայել Եկեղեցում (2010), 5.5.4:

Հեռատես ապրելակերպը

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՄԵԶ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

Վերջին Օրերի Մրբերը հավատում են պատրաստված և ինքնավստահ լինելուն: Մենք հավատում ենք աշխատանքի համար կրթությամբ նախապատրաստվելուն, նեղ օրվա համար ֆինանսապես նախապատրաստվելուն և բնական աղետների կամ այլ դժվարությունների համար նյութապես նախապատրաստված լինելուն: Ամենակարևորը, մենք հավատում ենք, որ պետք է հոգևորապես նախապատրաստվենք Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստյան և մեր Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար: Այսպիսի նախապատրաստվածությունը կոչվում է հեռատես ապրելակերպ:

Հեռատեսորեն ապրելը անդրադառնում է մեր իսկական հավերժական էության վրա. մենք կանչված ենք «գործելու ինքնուրույն և չներգործվելու» (2 Նեփի 2.26): Տերը ուզում է, որ մենք լինենք պատասխանատու և անկախ (տես ՎևՈՒ 78.14): Նա ուզում է, որ մենք հեռատեսորեն ապրենք այն պատճառով, թե մենք ինչպիսին կդառնանք այդ ընթացքում. պատասխանատու, առատաձեռն, խելահաս, բարի: Քանի որ որքան ավելի ինքնավստահ մենք դառնանք, այնքան ավելի լավ մենք կարող ենք օգնել մեր ընտանիքներին և ուրիշներին: Ինչպե՞ս մենք կարող ենք կերակրել սովածներին, եթե մենք ինքներս սոված ենք: Ինչպե՞ս մենք կարող ենք գիտելիք

տալ, երբ մենք ինքներս գիտելիքի պակաս ունենք: Ինչպե՞ս մենք կարող ենք գորացնել ուրիշների հավատը, եթե մենք ինքներս հավատի պակաս ունենք:

Հեռատես ապրելակերպի սկզբունքները ներառում են հետևյալը.

- Նախապատրաստություն.
«Պատրաստվեք այն բանի համար, որը պետք է գա, քանզի Տերը մոտ է» (ՎևՈՒ 1.12):
- Աշխատասիրություն. «Ծույլ մի եղիր» (ՎևՈՒ 42.42):
- Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎևՈՒ 88.118):

Երբ Եկեղեցու անդամները կատարում են այն ամենը, ինչ կարող են իրենց ապահովելու համար, սակայն դեռևս չեն կարողանում բավարարել իրենց հիմնական կարիքները, առաջին հերթին նրանք պետք է օգնության խնդրանքով դիմեն իրենց ընտանիքներին: Եթե դա չի բավականացնում, Եկեղեցին կարող է օգնել: Եպիսկոպոսներն ու ճյուղի նախագահները կարող են օգտագործել «Տիրոջ շտեմարանի» միջոցները անդամներին օգնելու համար (տես ՎևՈՒ 82.18–19): Եկեղեցու կողմից ցանկացած աջակցություն նպատակ ունի օգնել անդամներին օգնել իրենց և խրախուսել աշխատանքը նրանց կյանքում: ■

Լրացուցիչ տեղեկության համար տես Ծննդոց ԽՍ, ՎևՈՒ 38.30:



«Մենք բոլորս պատասխանատու ենք ապահովելու ինքներս մեզ և մեր ընտանիքներին աշխարհիկ և հոգևոր առուվով: Տնտեսվար ձևով ապահովելու համար մենք պետք է կիրառենք տնտեսվար ապրելակերպի սկզբունքներ, ուրախ ապրելով մեր միջոցների սահմանում, գոհանալով մեր ունեցածով, խուսափելով մեծ պարտքերից և ջանասիրաբար խնայելով և նախապատրաստվելով նեղ օրվա համար»:

Երեց Ռոբերտ Դ. Ջեյլս, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Դառնալ տնտեսվար մատակարար՝ աշխարհիկ և հոգևոր», *Լիաժոնա*, Մայիս 2009, 7:

Մենք կարող ենք աշխատել, որ դառնանք ինքնավստահ հետևյալ բնագավառներում.

Հոգևոր ուժ. Վստահել
Տիրոջը, հնազանդվել
պատվիրաններին, աղոթել
և ուսումնասիրել սուրբ
գրությունները ամեն օր,
ծառայել ուրիշներին:



Աշխատանք. Աշխատեք, որպեսզի ապահովեք ձեր սեփական և ձեր ընտանիքի կարիքները:



Տնային պահեստ.
Պահեստավորեք մաքուր
խմելու ջուր և քիչ-քիչ
հավաքեք հաճախակի օգ-
տագործվող ուտելիքներ
և երկար պահպանման
ժամկետ ունեցող ուտե-
լիքներ, ինչպես օրինակ՝
հացահատիկային բույսեր
և յոթի:

Կրթություն. Լինել գրա-
ճանաչ, ձեռք բերել աշխա-
տանքային հմտություններ,
սովորել «լավագույն գրքե-
րից» (ՎԼՈՒ 88.118):



ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ

Ոմանց մոտ կարող է հարց առաջանալ, թե ինչու են Վերջին Օրերի Սրբերը սննդի պաշար հավաքում: Իրականում, մենք մթերում ենք սնունդ և ջուր, որպեսզի պատրաստ լինենք այնպիսի ժամանակներին, երբ սնունդն ու խմելու ջուրը սակավ կամ անհասանելի լինեն, կամ երբ ընտանիքի դրամական միջոցները սուղ լինեն: Ծայրահեղ իրավիճակներում հայտնվելով, նրանք, ովքեր սննդի պաշար ունեն, ավելի ապահով կզգան և ավելի լավ կկարողանան օգնել իրենց ընտանիքներին և հարևաններին ճգնաժամի պայմաններում:

Փոքր և հասարակ բաներ

«Փոքր և հասարակ բաներով են իրականացվում
մեծ բաները» (Աղևա 37.6):

ՄԵԾ ԿՅԱՆՔԵՐԸ ՇԻՇՎՈՒՄ ԵՆ

Նյուել Բ. Վիթնի (1795–1850)

Ստորև, ձախ
ներդիր. Նյուել Բ.
Վիթնիի փորագր-
ված դիմանկարը:
Ստորև, աջ
ներդիր. Քիրթ-
լենդում, Օհայո,
Նյուել Բ. Վիթնիի
խանութի վերնա-
հարկը, որտեղ
անց էին կացվում
Մարգարեների
Դպրոցը և Եկեղե-
ցու ժողովները:
Ներքևում. Վիթ-
նիի խանութը:

Նյուել Քիմբալ Վիթնին ծնվել է Վերմոնտում, ԱՄՆ, 1795թ. փետրվարի 5-ին: Նա տաղանդավոր բիզնեսմեն էր և հիմնել էր ընկերական և գործնական հարաբերություններ Միդնի Գիլբերտի հետ: Իրենց գործարարական վաղ շրջանում նրանք հաճախ էին ճանապարհորդում: Գործնական այցերից մեկի ժամանակ Քիրթլենդում, Օհայո, Նյուելը հանդիպեց Էլիզաբեթ Էն Սմիթին: Նյուելը և Էնը երեք տարի հանդիպեցին և 1823թ. ամուսնացան:

Միասին նրանք փնտրում էին

ճշմարտությունը, որոշ ժամանակ մասնակցեցին Քամբելիթի շարժմանը, որը հայտարարում էր, որ ուներ վերականգնված հնադարյան քրիստոնեությունը: Մի երեկո Նյուելը և Էնը աղոթեցին, որ իմանային «Տիրոջից, թե ինչպես ստանային Սուրբ Հոգու պարգևը»: Էնը նկարագրում է ի պատասխան իրենց աղոթքին ստացած տեսիլքը. «Հոգին իջավ մեզ վրա և մի ամփ ծածկեց տունը: . . . Ապա մենք լսեցինք մի ձայն ամփի միջից. «Պատրաստվեք ստանալու Տիրոջ խոսքը, քանզի այն գալիս է»:¹

Աղոթքի այս պատասխանից ոչ շատ անց՝ 1830թ. հոկտեմբերին, Վերջին Օրերի Սրբերի միսիոներները եկան Քիրթլենդ: Նոյեմբերին Նյուելը և Էնը մկրտվեցին: Մի քանի ամիս անց Ջոզեֆ և Էմմա Սմիթները թակեցին Վիթնիների դուռը: Երբ Ջոզեֆը ողջունեց Նյուելին անունով, Նյուելը չկարողացավ ասել, որ չգիտեր Մարգարեի անունը, այնպես որ Ջոզեֆն ասաց. «Ես Մարգարե Ջոզեֆն եմ, դուք աղոթել եք, որ ես գամ այստեղ, ի՞նչ եք ցանկանում ինձանից»:² Վիթնիները մի քանի շաբաթ հյուրնկալեցին Սմիթներին և տնով ապահովեցին նրանց 1832թ. սեպտեմբերին:

Սմիթներին մնալու տեղով ապահովելուց բացի, Նյուելները տվեցին Եկեղեցու օգտագործման համար իրենց խանութի ամբողջ վերին տարածքը: Վիթնիների խանութում Եկեղեցու ղեկավարները վարում էին իրենց ժողովները և Մարգարեների Դպրոցը:

1831թ. դեկտեմբերին Նյուելը կանչվեց որպես Եկեղեցու երկրորդ եպիսկոպոս, իսկ ավելի ուշ ծառայեց որպես Եկեղեցու ֆինանսական գործերի տնօրեն, օգնելով կառավարել Եկեղեցու ֆոնդերը և ազատվել պարտքից: 1838թ. աշնանը Վիթնիները տեղափոխվեցին Ֆար Վեստ, Միսսուրի, որտեղ Նյուելը կրկին կանչվեց որպես եպիսկոպոս, իսկ 10 տարի անց նա և նրա ընտանիքը հատեցին տափաստանները, հասնելով Սուրբ Լեյք Միթի, որտեղ նա ծառայեց որպես Եկեղեցու Նախագահող եպիսկոպոս:

Նյուելը մահացավ 1850թ.



המחברת, ד"ר חגית גורן, היא חוקרת בתחומי הנדסת תוכנה ופיתוח מערכות מידע. היא מכהנת כראש תחום הנדסת תוכנה במחלקת הנדסת תוכנה, מכללת תל אביב. היא גם מכהנת כראש תחום הנדסת תוכנה במחלקת הנדסת תוכנה, מכללת תל אביב. היא גם מכהנת כראש תחום הנדסת תוכנה במחלקת הנדסת תוכנה, מכללת תל אביב.

1. Elizabeth Ann Whitney, quoted in Edward Tullidge, *The Women of Mormonism* (1877), 41–42.
2. Joseph Smith, quoted in Elizabeth Ann Whitney, “A Leaf from an Autobiography,” *Woman’s Exponent*, Aug. 15, 1878, 51.

*Հայկից. Ունեյի միսիոներն Դեն Չոնսի
դիտանկարը: Շոգենակը, որի նման մեկի
նախապեսն է եղել Դեն Չոնսը, մոտե-
նում է Լալոյի հորերին, Բիլնոյ: Դեն
Չոնսը օգնում է Ունեյի զարթույններին:*

The image is a composite of two illustrations. The top illustration is a vibrant, detailed scene from Charles Dickens' 'A Christmas Carol'. It depicts Scrooge and Tiny Tim in the foreground, surrounded by a crowd of people in Victorian-era clothing on a ship's deck. The bottom illustration is a smaller, sepia-toned landscape painting of a rural scene with a church and houses.

Ուսուցանել ՄԱՔՐԱԲԱՐՈՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ



**Մեթյու Օ.
Ռիչարդսոն**

Կիրակնօրյա
Դպրոցի Գերագույն
Նախագահություն
Երկրորդ Խորհրդական

*Սեռական
հարաբերու-
թյան վերա-
բերյալ իրենց
երեխաներին
ուսուցանե-
լիս ծնողները
կարող են
օգտագոր-
ծել այս վեց
մեթոդները:*

Ես արտոնություն եմ ունեցել հանդի-
պելու տարբեր խավի և աշխարհի
բոլոր ծայրերի պատանիների ու
երիտասարդների հետ: Մի առիթով ես
խոսել եմ շատ տպավորիչ դեռահասների
խմբի հետ առաքինության, մաքրաբարո-
յության և բարոյական կյանքով ապրելու
մասին: Այն բանից հետո, երբ ես նրանց
ասացի, թե որքան տպավորված էի նրանց
մեկնաբանություններից, համոզմունքնե-
րից, արտաքին տեսքից և վարքագծից,
ես հարցրեցի. «Ինչպե՞ս է ձեզ հաջողվում
այդքան լավ արտահայտվել, ձեր պատաս-
խանների վրա վստահ լինել և այսպիսի
նուրբ թեմայի շուրջ այդքան ազատ խո-
սել: Ինչպե՞ս եք դուք դարձել այդպիսին»:
Մի երիտասարդ կին առանց հասպտակա-
կան ասաց. «Ես ունեմ ծնողներ, որոնք ուսուցա-
նում են»: Մնացածները գլխի շարժումով
համաձայնվեցին նրա հետ: Այս հասարակ,
սակայն մեծ փորձառությունը ընդգծում է
ազդեցությունը, որ ծնողները ունեն իրենց
երեխաների կյանքում, հասկապես առա-
քինություն, մաքրաբարոյություն, սեռական
մոտեմություն և պատշաճ հարաբերություն-
ներ ուսուցանելու նրանց դերը:

Դժբախտաբար, շատ ծնողներ չեն ու-
սուցանում իրենց երեխաներին սեռական
հարցերի շուրջ այնքան լավ, որքան կարող
էին: Օրինակ, հարցում անցկացնելով 200
-ից ավելի Վերջին Օրերի Մրբերի ակտիվ
երիտասարդ ամուրիների հետ ես պար-
զեցի, որ միայն 15 տոկոսն էին համարում
իրենց ծնողներին սեռական հարցերի
վերաբերյալ տեղեկության հիմնական աղ-
բյուր: Այս երիտասարդ անդամներն ասա-
ցին, որ իրենք սովորել էին այս կարևոր
թեմայի մասին հիմնականում ընկերներից
կամ հասակակիցներից, ինտերնետից,
զանգվածային լրատվամիջոցներից,
ուրախ ժամանցներից, ձեռնարկներից,

ազգականներից կամ իրենց Եկեղեցու
ղեկավարներից:

Իհարկե, սա հեշտ թեմա չէ ուսուցանելու
համար: Մակայն ես կարծում եմ, որ ծնող-
ները այսպիսի սուրբ սկզբունքներ հաղոր-
դելու լավագույն ուսուցիչներն են: Հետևյալ
մեթոդները կօգնեն ձեզ զարգացնել պարզ,
արդյունավետ և հարատև սկզբունքներ
և փորձառություններ, որոնք կնպաստեն
արդյունավետ սովորելուն և սովորեցնելուն,
հասկապես, երբ սովորեցնեք ձեր երե-
խաներին, թե ինչպես ապրել առաքինի ու
մաքրաբարո կյանքով:

Սովորեցնելն ու սովորելը պետք է վաղ սկսել:

Այն ծնողները, ովքեր արդյու-
նավետ կերպով ուսուցանում են իրենց
երեխաներին սեռական թեմաներով
հասկանում են, որ երեխաներից շատերը
առաջին անգամ հանդիպում են այդպիսի
թեմաների շատ ավելի վաղ տարիքում,
քան նրանք կամ նրանց ծնողները սկսնկա-
յում կամ ցանկանում են: Շատ երեխաներ
հաղորդակից են դառնում սեռական բո-
վանդակության թեմաներին Ինտերնետի
միջոցով վաղ տարիքից սկսած, ինչպես
օրինակ 11 տարեկանում, իսկ ոմանք նույ-
նիսկ ավելի փոքր տարիքում: Ուրախ ժա-
մանցները, սպորտային միջոցառումները,
գովազդները և նույնիսկ հասարակական
զանգվածային լրատվամիջոցները ավելի
ու ավելի են հեղեղվում սեքսուալ պատկեր-
ներով և անուղղակի ակնարկներով:

Որոշ ծնողներ արդարացիորեն հարց-
նում են. «Ե՞րբ ես պետք է սկսեմ խոսել
սեռական թեմաներով»: Դա կախված է
տարիքից և երեխայի հասունությունից և
առանձնահատուկ իրադրությունից: Հոգևոր
առաջնորդությունը կզա, երբ ծնողները
աղոթքով և զգուշությամբ զննեն իրենց
երեխաների վարքագիծը, ուշադրությամբ
լսեն իրենց երեխաներին և ժամանակ
տրամադրեն խորհելու և հասկանալու, թե
երբ և ինչ սովորեցնեն: Օրինակ, ես հիշում
եմ, որ իմ տղան ինձ հարցեր տվեց անա-
տոմիայից, երբ նրա հինգ տարեկանը դեռ
նոր էր լրացել: Մինչդեռ դա մի փոքր անսո-
վոր էր, սակայն ակնհայտ էր, որ ճիշտ ժա-
մանակն էր խոսելու համար: Ինչևիցե, մինչ
ես մտածում էի, թե ինչպես պատասխանեմ,
ես պարզ զգացի, որ դա ճիշտ ժամանակը
չէր իմ տղայի հետ սեռական ցանկացած
թեմայով խոսելու համար:

Պետք է հաճախակի սովորեցնել և սովորել:

Սովորելը գործընթաց է, և ոչ
թե եզակի իրադարձություն: Երբ խոսքը
վերաբերվում է երեխաներին սեռական



հարաբերությունների կամ այլ նմանատիպ թեմաների մասին ուսուցանելուն, մարդիկ հաճախ հիշատակում են այն որպես «այդ զրույցը»: Նրանք դա նկատի ունեն թե ոչ, սակայն այս տերմինը հուշում է, որ ծնողները սովորեցնում են այս թեման մեկ զրույցի ընթացքում: Երեխայի համար դա սովորելու ամենաարդյունավետ եղանակը չէ: Փրկիչը ուսուցանել է, որ մենք սովորում ենք «տող առ տող, ցուցում առ ցուցում» (2 Նեփի 28.30): Մենք ուսուցանելու ավելի մեծ հաջողություն կունենանք, եթե մենք վերադառնանք այդ թեմային մեր երեխաների հետ միասին, մինչ նրանք մեծանում և ավելի գիտակից են դառնում: Այն ծնողները, ովքեր հասկանում են այս սկզբունքը, պատրաստվում են մտավոր, էմոցիոնալ և հոգևոր առումներով, որպեսզի ուսուցանեն իրենց երեխաներին սեռական թեմաներով նրանց վաղ տարիքի և պատանեկության ընթացքում:

Արդյունավետ սովորելն ու սովորեցնելը կախված է սովորեցնողի և սովորողի միջև հարաբերություններից: Երբ խոսքը գնում է երեխաներին սեռական թեմաներով ուսուցանելու մասին, ծնողների մեծամասնությունը անհանգստանում են

գրեթե բացառապես այն մասին, թե *ինչ* պետք է իրենք ասեն: Միևնույն ժամանակ, արդյունավետ սովորեցնելն ու սովորելը շատ ավելին է, քան խոսելն ու թեմայի շուրջ պատմելը: Իրականում իրենց երեխաներին սովորեցնելու ծնողների մոտեցման *եղանակը* կարող է ավելի կարևոր լինել, քան այն, ինչ նրանք իրականում կարող են ասել: Հետազոտությունները հանգեցնում են այն եզրակացությանը, որ երբ խոսքը վերաբերվում է սեռական դաստիարակությանը, իրենց երեխաների վրա ավելի շատ ազդեցություն են ունենում այն ծնողները, ովքեր մտերմիկ հաղորդակցվում են, արտահայտում են իրենց սերն ու մտահոգությունը և ակտիվորեն ներգրավված են իրենց երեխաների կյանքում:¹

Ոչ պաշտոնական իմ հարցումների ժամանակ Երիտասարդ Վերջին Օրերի Սրբերը իրենց մեկնաբանություններում բազմիցս կենտրոնանում են այն բանի վրա, որ կցանկանային իրենց ծնողներն ավելի բաց լինեին կամ խոսեին սեռական հարաբերությունների վերաբերյալ թեմաներով: Այս երիտասարդները հայտնեցին, որ իրենք ցանկանում էին, որ իրենց ծնողները

Երբ խոսքը վերաբերվում է սեռական դաստիարակությանը, իրենց երեխաների վրա ավելի շատ ազդեցություն են ունենում այն ծնողները, ովքեր մտերմիկ հաղորդակցվում են, արտահայտում են իրենց սերն ու մտահոգությունը և ակտիվորեն ներգրավված են իրենց երեխաների կյանքում:

ոչ միայն ներգրավված լինեին այդ գործընթացում, այլ նաև «գրուցեին» իրենց հետ, և ոչ թե լոկ *ասեին* իրենց ասելիքը: Նրանք փափագում էին այնպիսի գրույցներ ունենալ, որոնք «բնական», «նորմալ», «հարմար» էին, և ոչ թե «շփոթեցնող»: Մա պետք է դրդի ծնողներին ավելի ջանասեր լինել, որպեսզի լինեն շփվող, ոչ շատ զբաղված, բնական և հանգիստ զգան իրենց այս թեմայով խոսելիս, այս իրավիճակում կամ անգամ ժամանակի առումով: Եթե կա գին, որ պետք է ծնողները վճարեն, իրենց զավակներին արդյունավետ ուսուցանելու համար այն բաների վերաբերյալ, որոնք ամենակարևորն են, դա այն է, որ ծնողները պետք է գործեն այնպես, որ օգնեն իրենց երեխաներին հարմար զգալ և ապահով բոլոր թեմաներով խոսելիս, հատկապես ավելի անձնական թեմաներով:

Սովորելն ու սովորեցնելը ամենաարդյունավետն է լինում այն ժամանակ, երբ թեման տեղին է ընտրված և էական նշանակություն ունի: Ելնելով մեր մոտեցումից, սեռական մոտեցման մասին սովորեցնելը կարող է շփոթեցնող, ոչ իրական, ոչ պրակտիկ կամ նույնիսկ բարոյախրատական թվալ: Հաջողության բանալին այն է, որ գիտակցենք, որ երեխաները ավելի շատ հարցեր և մտահոգություններ են ունենում իրական կյանքի իրադրություններին և օրենքներին արձագանքելիս: Երբ մենք ուշադրություն դարձնենք, լսենք և զննենք մեր երեխաներին, մենք կհասկանանք, թե մենք ինչ պետք է ուսուցանենք:

Օրինակ, կինոնկարները, նորաձևությունները, տարօրինակ քմահաճույքները, հեռուստատեսային ծրագրերը, գովազդները կամ երգի բառերը միանգամայն բավարար հնարավորություն են տալիս բարոյական չափանիշների մասին խոսելու համար: Այլ հնարավորություններ առաջ կգան, մինչ մենք դիտենք մեր երեխաների հարաբերությունները և փոխազդեցությունները ուրիշների հետ, նրանց և նրանց հասակակիցների հագնվելու ձևը, նրանց օգտագործած բառապաշարը, ինչպես են նրանք իրենց զգում հակառակ սեռի ներկայությամբ, ինչպես նաև հասարակության մեջ մաքրաբարոյության և բարոյական չափանիշների վերաբերյալ մեկնաբանությունները զանազանելիս: Կան բազմաթիվ հնարավորություններ իրական կյանքում գրուցելու երեխաների *հեն* բարոյականության և առաքինության մասին:

Հավանաբար, իրական կյանքի ուսուցման ամենակարևոր ոլորտում հանդես են գալիս ծնողները որպես օրինակ՝ իրենց սեփական կյանքում լինելով մաքրաբարո, համեստ և առաքինի: Երեխաները ամենից շատ պատրաստակամորեն կլսեն և կհետևեն իրենց ծնողների խորհրդին, երբ նման խորհուրդը հիմնված է իրենց ծնողների լավ օրինակների վրա:

Հակառակը նույնպես ճշմարիտ է: Ինչպես ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը. «Ամեն առումով մեր գործերը ավելի բարձր են

*Երբ
ուշադրություն
դարձնենք,
լսենք և զննենք
մեր երեխա-
ներին, մենք
կհասկանանք,
թե ինչ պետք է
ուսուցանենք:*

խոսում, քան մեր խոսքերը: Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77) ուսուցանել է. «Մենք պետք է այնպիսի օրինակ ծառայենք [մեր երեխաների] համար, որը մենք կուզեինք, որ նրանք ընդօրինակեին: Մենք գիտակցում ենք սա: Որքան հաճախ ենք մենք տեսնում ծնողների, ովքեր երեխայից կամ երեխաներից պահանջում են հնազանդություն, լավ վարքագիծ, բարի խոսքեր, հաճելի հայացքներ, քաղցր ձայն և պայծառ աչքեր, երբ իրենք անձամբ լի են դառնությամբ ու հանդիմանությամբ: Որքան հակասական ու անխոհեմ է սա»: Մեր երեխաները կնկատեն այսպիսի հակասությունները մեր մեջ և հավանաբար արդարացում կգտնեն նմանատիպ վարք ունենալու համար»:²

Սովորողները ամենալավը սովորում են այն ժամանակ, երբ նրանք հասկանում են, թե ինչ են նրանց սովորեցնում: Բազմաթիվ պատանիներ և երիտասարդներ իրենց զայրույթն են արտահայտում այն կապակցությամբ, որ իրենց ծնողները և նույնիսկ Եկեղեցու ղեկավարները հակված են օգտագործելու «գաղտնագիր բառեր» և պարզ չարտահայտված ուղերձներ, որոնք իրականում ավելի շատ հարցեր են առաջացնում, քան պատասխաններ տալիս, և ավելի շատ լարվածություն առաջացնում, քան օգնում: Մա հատկապես ճշմարիտ է, երբ հարցը վերաբերվում է սեռական թեմաներին:

Մինչ ես ծառայում էի որպես եպիսկոպոս երիտասարդ ամուսինների ծխում, ինձ հաճախ հարցնում էին, թե ինչ է նշանակում «կրքոտ գրկել»: Իմ ծխի հավատարիմ անդամներին սովորեցրել էին, որ նրանք չպետք է դա անեին, սակայն նրանց երբեք չէին սովորեցրել, թե ինչ է դա իսկապես նշանակում: Դժվար էր նրանց համար հնազանդվել հրահանգին, որը նրանք չէին հասկանում:

Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական Նախագահ Մարիոն Գ. Ռոմին (1897–1988) բացատրել է, որ բավական չէ այնպես սովորեցնել, որ ուրիշները հասկանան, այլ մենք նաև պետք է այնպես սովորեցնենք, որ ոչ ոք սխալ չհասկանա: ³ Գաղտնաբառերով կամ նույնիսկ ժարգոնով խոսելու փոխարեն մենք ավելի շատ հաջողության կհասնենք, եթե մենք օգտագործենք ճիշտ և պատշաճ տերմիններ: Մա նպաստում է հասկացողությանը և հարգանք է առաջացնում:

Խորհեք այն մասին, թե ինչպես է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթը արդյունավետորեն սովորեցրել բարոյական սկզբունքներ և չափանիշներ: Նա ասել է. «Ամուսնական կապերից դուրս ցանկացած սեռական հարաբերություն, ես նկատի ունեմ ցանկացած կանխամտածված հարաբերություն մեկ ուրիշի մարմնի սրբազան, անձնական մասերի հետ, հազուստով կամ առանց հազուստի, մեղք է և արգելված է Աստծո կողմից: Նաև զանցանք է համարվում ձեր սեփական մարմնում միտումնավոր այդպիսի զգացմունքներ առաջացնելը»:⁴



Արդյունավետ սովորեցնելու համար մենք պետք է վստահ լինենք, որ նրանք, ում մենք սովորեցնում ենք, հասկանում են ուղերձը: Շատ են օգնում հասարակ հարցերը, ինչպես օրինակ «Սա պատասխանե՞ց ձեր հարցին» կամ «Ես բավականին լավ կարողացա՞ բացատրել դա» կամ «Դուք ունե՞ք որևէ այլ հարց»:

Սովորողները դարձնի են գալիս, երբ ուսուցիչները կապում են ուղերձը հավիտենական սկզբունքների ու չափանիշների հետ: Ավետարանի հրահանգների արդյունավետ ուսուցում է տեղի ունենում, երբ միայն պատշաճ «կյանքի փաստերի» վրա կենտրոնանալու փոխարեն մենք կապում ենք այդ փաստերը «հավերժական կյանքի փաստերի» հետ: Օրինակ, երբ խոսում ենք մեր մարմինների մասին, մենք կարող ենք խոսել այն մասին, թե ինչպես է մեզ սիրող Երկնային Հայրը ստեղծել մեր մարմինները և թե ինչպես մենք պետք է վերաբերվենք Նրա ստեղծածներին հարգանքով և Նրա ակնկալիքներին համապատասխան:

Մինչ աշխարհն ընկղմվում է անբարոյականության մեջ, այնուամենայնիվ մի փոքր հույս կա ապագա սերունդների համար:

Այս հույսը կենտրոնանում է ծնողների վրա, ովքեր նվիրագործում են իրենց լավագույն ջանքերը ուսուցանելով աճող սերնդին լինել առաքինի և մաքրաբարո: Այն ծնողները, ովքեր սովորեցնում են իրենց զավակներին ապրել առաքինի և մաքրաբարո կյանք, ձգտում են մեծացնել իրենց հասկացողությունը և լավացնել իրենց ուսուցանելու հմտությունները: Սա անելով նրանք հասկանում են, որ «Տերը կմեծարի [իրենց] մինչ [նրանք] ուսուցանեն այնպես, ինչպես Նա է պատվիրել»: Այս ամենից հետո, սա «սիրո աշխատանք է, հնարավորություն օգնելու ուրիշներին արդար կերպով գործածել իրենց ազատ ընտրությունը, գալ դեպի Քրիստոսը և ստանալ հավերժական կյանքի օրհնությունները»:⁵ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Shu Bonita F. Stanton and James Burns, "Sustaining and Broadening Intervention Effect: Social Norms, Core Values, and Parents," in *Reducing Adolescent Risk: Toward an Integrated Approach*, ed. Daniel Romer (2003), 193–20:
2. Robert D. Hales, "Our Parental Duty to God and to the Rising Generation," *Liahona*, Aug. 2010, 74.
3. Stu Jacob de Jager, "Let There Be No Misunderstanding," *Ensign*, Nov. 1978, 67:
4. Richard G. Scott, "Serious Questions, Serious Answers," *Liahona*, Sept. 1997, 31.
5. *Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* (1999), 4:

Հավանաբար, իրական կյանքի ուսուցման ամենակարևոր ոլորտում հանդես են գալիս ծնողները որպես օրինակ՝ իրենց սեփական կյանքում լինելով մաքրաբարո, համեստ և առաքինի:

Ուսուցանել ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆԸ

*Ծնողների պարտականությունն
ու օրհնությունն է՝ ուսուցանել
իրենց երեխաներին արդար
ապրել:*



**Երեց
Դեյբերտ Լ.
Ստեպի
(1896–1978)**

Տասներկու
Առաքյալների
Քվորումից

*Դեյբերտ Լ. Ստեպիին ծնվել է 1896թ.
դեկտեմբերի 11-ին Արիզոնայի ՄԼՆ:
Նա հաստատվել է որպես Տասներկու
Առաքյալների Քվորումի անդամ 1950թ.
հոկտեմբերի 5-ին և ծառայել է այդ քվո-
րումում մինչև իր մահը՝ 1978թ. օգոս-
տոսի 19-ը: Այս հոգևոր եղությոն տրվել է
Բրիզոն Զանգի Համալսարանում 1977թ.
փետրվարի 1-ին: Այս ելույթն ամբողջու-
թյամբ կարող եք գտնել speeches.byu.edu
կայքում:*

Ծնողները հնարավորություն ունեն
ուսուցանելու իրենց փոքր երե-
խաներին և ձևավորելու նրանց
բնավորությունը, նախքան Մատանան
գործություն կունենա զայթակղելու նրանց
և մինչև նրանք կհասնեն ութ տարեկանին,
երբ նրանք պատասխանատու կդառնան
Մատծո առաջ: . . . Տերը տվել է ծնողներին
այս թանկարժեք տարիները, երեխայի
կյանքի առաջին տարիները, երբ երեխա-
ները պատասխանատու չեն այն բաների
համար, ինչ նրանք ասում և անում են:
Ծնողների պարտականությունն ու օրհնու-
թյունն է՝ ուսուցանել իրենց երեխաներին
արդար ապրել:

Տանը արդարություն և կրոն ուսուցանե-
լու ամենաարդյունավետ միջոցը օրինակն
է: Հուսով ենք, ծնողներն իրենց իսկ կյանքն
ապրում են անբիծ ու մաքուր, ուստի կկա-
րողանան արդյունավետորեն օգտագործել

իրենց կյանքի օրինակը իրենց սեփական
երեխաներին ուսուցանելիս: [Նախագահ
Դեյվիդ Օ. Մակքեյը (1873–1970) ուսուցա-
նել է.] «Եթե դուք ուսուցանեք հավատք առ
Մատված, ինքներդ հավատք ցուցաբերեք
առ Նա. եթե դուք աղոթք ուսուցանեք,
ինքներդ աղոթեք. . . եթե ցանկանում եք
նրանք զսպված լինեն, ինքներդ խուսա-
փեք անզուսպ լինելուց. եթե դուք ցան-
կանում եք ձեր երեխան ապրի առաքինի
կյանքով, ինքնատիրապետող լինի, բարի
համբավ ունենա, ապա արժանի օրինակ
ծառայեք նրան այս բոլոր բաներում»:¹ Այդ
անելը այս ուսուցանումը կդարձնի ավելի
տպալորիչ ձեր երեխաների համար. և
նրանք, ծնողներից ստանալով այսպիսի
առաջնորդություն, կարող են ուժեղացնել
իրենց պաշտպանությունը Մատանայի
զայթակղությունների դեմ, ում նպատակն
է կործանել նրանց կյանքը, երբ նրանք
հասնեն պատասխանատվության տարի-
քին: Ծնողները պարտականություն ունեն
լինելու այնպիսին, ինչպիսին ուզում են
իրենց երեխաները դառնան, ինչ վերաբեր-
վում է քաղաքավարությանը, ազնվությանը,
զսպվածությանը և բոլոր ժամանակներում
ճիշտ վարվելու քաջությանը: Օրինակը
շատ ավելի ազդեցիկ է, քան ցուցումներ
տալը:

Առօրյա կյանքը տանը պետք է
համապատասխանի մեր Եկեղեցու
սկզբունքներին ու չափանիշներին: Մեր
աշխատանքային գործարքները պետք
է համապատասխանեն մեր կրոնի հետ:
Երեխաները հեշտությամբ են նկատում
կեղծավորությունը: Ջոն Միլթոնն ասել է,
որ կեղծավորությունը միակ մեղքն է, որ
քայլում է աննկատ, և նկատվում է միայն
Մատծո կողմից: Երեխաները, այնուա-
մենայնիվ, զգայուն են սխալ բաների
նկատմամբ, և նրանց զայրացնում են
կեղծավորությունը և կեղծ ձևականությու-
նները: Մենք գիտենք, որ երեխաների վրա
ավելի շատ ներգործում են այն քարոզ-
ները, որոնցով մենք ապրում ենք, քան
այն քարոզները, որոնք մենք սովորեցնում
ենք: Ծնողները պետք է միշտ ազնիվ լի-
նեն իրենց զավակների հետ, պահելով
երեխաներին տված իրենց խոստումները
և նաև ճիշտ խոսելով: Հետևողական
ծնողն է, որ արժանանում է իր երեխայի



վստահությանը: Երբ երեխան զգում է, որ դուք հարգում եք նրա վստահությունը և փոխադարձ վստահություն եք դրսևորում, նա չի չարաշահի այն կամ անպատվություն չի բերի ձեր անվանը: . . .

Ծնողները երբեք չպետք է վիճեն իրենց երեխաների ներկայությամբ: Երբեմն վեճերը ծագում են երեխային ուղղելու կամ պատժելու փորձ կատարելիս: Ծնողներից մեկը քննադատում է, մյուսը առարկում է: Եվ երեխայի վրա տան միասնական ներգործությունը վերանում է: Ծնողները պետք է միասնական կարծիք ունենան, թե որ ճանապարհով պետք է երեխան գնա. հակառակ դեպքում նա շփոթության պատճառով կարող է սխալ ճանապարհներով գնալ: Ռիչարդ Լ. Էվանսն ասել է. «Տարաձայնությունը ծնողների միջև անընդունելի ու շփոթեցնող է, այն թուլացնում է ընտանիքի հիմքերը: Նրանք, ում երեխան պետք է նայի առաջնորդության համար, պետք է միասնական լինեն իրենց տված առաջնորդությունում»: ² Մենք գիտենք, որ երեխաները զգայուն են ընտանիքի տրամադրության և զգացմունքների հանդեպ. նրանք կարող են զգալ հակասություններն ու տարբերությունները, որոնք նրանք ոչ միշտ են կարողանում հասկանալ կամ գնահատել: . . .

Երեխան իրավունք ունի զգալու, որ իր տանը նա ապաստան ունի, պաշտպանության վայր արտաքին աշխարհի վտանգներից ու վնասակար ազդեցությունից:

Ընտանիքի համերաշխությունն ու մաքրությունը անհրաժեշտ են այս կարիքը բավարարելու համար: Չկա մեկ այլ տեղ բացի տնից, որտեղ ճշմարիտ և հարատև երջանկություն կարելի է գտնել այս կյանքում: Հնարավոր է տունը դարձնել երկնքի մի մասնիկ. իսկապես, ես պատկերացնում եմ երկինքը որպես երկրային կատարյալ ընտանեկան կյանքի շարունակություն: ³ . . .


Ավետարանը ինչպես որ քարոզվում է, ճշմարիտ է: Քրիստոսն ապրում է, Աստված ապրում է և փառահեղ բնակարաններ են պատրաստված վերևում Նրա բոլոր հավատարիմ ու նվիրված զավակների համար: Ծրագրեք այժմ ձեր ցանկացած տունն ու ընտանիքը և թե ինչպես եք հոգալու ձեր երեխաների կարիքները, որ պահեք նրանց արդար ուղղու վրա, որը կտանի ընտանիքը դեպի հավերժական կյանք երկնային տանը: Թող Աստված օրհնի ձեզանից յուրաքանչյուրին, իմ եղբայրներ և քույրեր: Ես կարծում եմ, որ դուք կկարողանաք հասկանալ ասվածից այնքանը, որքանը որ վերաբերվում է ձեզ: Եվ ձեր տունը սուրբ ձևով կազմակերպելն ու առաջ տանելը շատ կարևոր է փոքրիկների համար, որոնք կգան օրհնելու ձեր կյանքը: ■

Մեծատառերով գրելն ու կետադրությունը ստանդարտացված է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. David O. McKay, *Secrets of a Happy Life*, comp. Llewelyn R. McKay (1967), 11.
2. Richard Evans' *Quote Book* (1975), 23.
3. Stu David O. McKay, *Gospel Ideals* (1953), 525–26:

Երեխան իրավունք ունի զգալու, որ իր տանը նա ապաստան ունի, պաշտպանության վայր արտաքին աշխարհի վտանգներից ու վնասակար ազդեցությունից: Ընտանիքի համերաշխությունն ու մաքրությունը անհրաժեշտ են այս կարիքը բավարարելու համար:



ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոչ ոք չի կարող ստիպել դե-
ռահասաներին ունենալ հոգևոր
փորձառություններ, սակայն
ինչպես քաջահայտել են այս
ծնողներն ու ղեկավարները,
քաղում եղանակներով կարող
ենք նպաստել ունենալ փորձա-
ռություններ, որոնք կառաջնոր-
դեն դեպի դարձի գալը:

Երբ Վլադեալալ և Ջոյա Գուլկոները Ուկրաինայից սկսեցին ուսումնասիրել Եկեղեցու վարդապետությունը, նրանց 13-ամյա դուստրը՝ Կիրան, այնքան էլ ոգևորված չէր: Նա հրաժարվեց մասնակցել միախմբերական դասերին, և երբ նա իմանում էր, որ երեցները պիտի զան իրենց տուն, նա «ի ցույց բոլորին փակում էր իր սենյակի դուռը», հիշում է նրա մայրը:

Եղբայր և քույր Գուկոնեերը, ովքեր որոշեցին միանալ Եկեղեցուն, ենթադրում էին, որ եթե նրանք կարողանային միայն մի հնարավորություն տալ Կիրային զգալ Հոգին, նրա սիրտը կարող էր փափկել: Քանի որ Քույր Գուկոյի անձնական վկայությունը սկիզբ էր առել, երբ նա մասնակցել էր մեկ այլ անձնավորության մկրտությանը, նա խնդրեց Կիրային գալ *հի* մկրտությանը, որպեսզի ընդամենը օգներ նրան վերջում հազնել չոր շրերը: Ի զարմանս Քույր Գուկոյի՝ Կիրան համաձայնվեց:

«Դա տեղի ունեցավ», հիշում է Քույր Գուկուն: «Երկնային Հայրը աշխատում էր շատ

հրաշալի ձևով: Կիրան *զգաց* Հոգին, և իր ծնողների մկրտությունից մեկ շաբաթ անց նա համաձայնվեց հանդիպել միսիոներների հետ: Նա սկսեց կարդալ Մորմոնի Գիրքը: Մի քանի շաբաթ անց Քույր Գուլկոն նկատեց Կիրայի սեղանի վերևում կախված մի թերթիկ, որի վրա գրված էին 2 Նեփի 2.25-ի բառերը: Իրենց սեփական մկրտությունից երկուս ու կես ամիս անց Գուլկոները մասնակցեցին իրենց աղջկա մկրտությանը: Այժմ, 20 տարի անց, Կիրան ամուսնացել է: Նա և իր ամուսինը՝ Դեյվը, կնքվել են տաճարում և մեծացնում են իրենց երկու տղաներին ավետարանում: Նա հավատարմորեն ծառայել է մի շարք կոչումներում և ակտիվ է մնացել Եկեղեցում:

Ձոյան ասում է, որ այդ փորձառության միջոցով նա մի շատ կարևոր դաս քաղեց, որն այնքան կիրառելի է այն ծնողների համար, ովքեր մտադրեցին կյանքում եղել են Եկեղեցու անդամներ, ինչպես իր և ամուսնու դեպքում էր՝ որպես նոր անդամներ. ծնողներն ու ղեկավարները չեն կարող հարկադրաբար մղել իրենց երեխաներին դեպի ավետարանը, սակայն նրանք *կարող են* հրավիրել նրանց վայրեր և ստեղծել փորձառություններ, որտեղ դեռահասները կարող են իրենց սեփական հոգևոր փորձառություններն ունենալ: Այդ փորձառությունները կարող են իրենց հերթին առաջնորդել դեպի դարձի գայուն:

Սակայն ո՞րն է արդյոք այսպիսի փորձառություններ ստեղծելու ամենալավ եղանակը: Աշխարհի տարբեր ծայրերի ծնողներ և դեկավարներ կիսվում են, թե ինչն է արդյունավետ եղել իրենց դեպքում:

A composite image featuring a white football in the foreground, partially visible on the left. The football has a black signature and a red circular stamp that reads "SAN MARINO STATE COLLEGE" and "1915". The background is a blurred action shot from a football game, showing players in white and maroon uniforms running on a green field.

Սան Պաղոս Բրազիլիա Կոտյա Ցցի Գրանջա Վիանա ծուլը ուներ երիտասարդ տղամարդկանց միջոցառումների բարձր ցուցանիշ: Մասկայն նրանց ղեկավարները նկատեցին, որ նրանցից ոմանք հանդիպում են անձնական խնդիրների և դժվարանում են կատարել իրենց քահանայության պարտականությունները:

սեմինարիայում և կիրակի օրերին (տես
2 Նեփի 2.26):

«Մենք ապշած էինք, երբ մի ծովի կիրակի մեր բոլոր երիտասարդ տղամարդիկ բերեցին իրենց վկայությունները», ասաց նա: «Այդ ընթացքում նրանցից շատերը արցունքներով վերհիշում էին լավ հոգին, որ նրանք զգացել էին այդ առիթներով: Մի երիտասարդ տղամարդ կիսվեց իր փորձառությամբ, թե ինչպես էր հաղորդություն մատուցել մեր ծխի մի ծեր անդամի, ով անկողնուն էր զամված երեք տարի: Նրա կինը՝ մի հավատարիմ քույր, մեր երիտասարդին ընդունել էր ուրախությամբ ու հույսով: Արարողությունից հետո նա կիսվել էր նրանց հետ ավետարանի շնորհիվ իր կյանքում ապրած ուրախությամբ, չնայած որ հանդիպում էր մեծ դժվարությունների ու խնդիրների: Նրանք զգացին Հոգին և գիտակցեցին, թե ինչ է փոխում ավետարանը մարդկանց կյանքում: Այս փորձառությունը այնքան հզոր էր, որ նրանք կհիշեն այն հետագա տարիների ընթացքում, հավանաբար իրենց ողջ կյանքի ընթացքում»:

«Հասարակական միջոցառումները կարևոր են», շարունակում է նա: «Մակայն հոգևոր փորձառությունները էական նշանակություն ունեն օգնելու երիտասարդներին կառուցել իրենց սեփական վկայությունները»:

Ամեն կիրակի Ռեննիս ծխում, Անգերս
Ֆրանսիա Ցցում, Քույր Դելֆին Լեթորթը՝
Երիտասարդ Կանանց նախագահը, պատ-
րաստում էր բացիկ յուրաքանչյուր ներկա
Երիտասարդ կնոջ համար և խնդրում նրան
ընտրել զույգ, ով չէր եկել եկեղեցի և գրել
նրան: Երիտասարդ կանայք գրում էին այդ
շաբաթվա դասի մասին, ինչ էին նրանք
սովորել կամ ինչն էր ոգեշնչելիրենց, ինչ-
պես նաև ընկերական, անձնական երկտող:
Այնուհետև Քույր Լեթորթը կամ նրա խորհր-
դականներից մեկը փոստով ուղարկում էին
բացիկները նրանց, ովքեր չէին եկել եկեղեցի:

24 L h w h n u w

համար, ովքեր չէին հաճախում, որպեսզի իմանային, որ իրենց հիշում են, այլ նաև նրանց համար, ովքեր գրում էին երկտողերը լինելով ավելի ուշադիր իրար հանդեպ:

«Փոքր բաներով են իրականացվում մեծ հրաշքները», ասում է նա (տես Ալմա 37.6): «Մենք տեսել ենք դրա դրսևորումը: Երիտասարդ կանայք քաջալերվել են և այս փորձառությունը նպաստել է նրանց վկայություններին»:

Միավորեք երիտասարդներին Աստծո խոսքով

Ալման ուսուցանել է, որ Աստծո խոսքը քարոզելը մեծ գործություն ունի (տես Ալմա 31.5): Դեյվիդ Էլմերը, Երիտասարդ Տղամարդկանց ղեկավարը Տեխասում, ԱՄՆ, գիտեր դա և ցանկանում էր երիտասարդ տղամարդկանց համար, ում նա առաջնորդում էր շատ արկածային Սկաուտական ուղևորությունում, ստեղծել իմաստավոր փորձառություն, որը կնախապատրաստեր նրանց ապագայի համար:

Եղբայր Էլմերը աղոթում ու մտածում էր, թե ինչ կարող էր նրանց պատմել և նրա ուշադրությունը կենտրոնացավ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի ելույթի վրա: Ուղևորության ժամանակ Եղբայր Էլմերը ուսուցանեց այդ ուղերձից, ներառյալ այն պատմությունը, որ Երեց Անդերսենը կիսվել էր Միդնի Գոմինգի մասին, Նոր Զելանդիայի ռեգբիի աստղի, ով դադարեցրեց սպորտային կարիերան միսիա ծառայելու համար: «Չե՛ր միսիան սուրբ հնարավորություն կլինի՝ ուրիշներին ղեպի Քրիստոս բերելու և օգնելու համար նրանց նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին», ասել է Երեց Անդերսենը:¹


Փորձառությունը հրաշալի ստացվեց, ասում է Եղբայր Էլմերը, քանի որ նա ուսուցանեց ապրող մարգարեի խոսքերը: Հավաքի վերջում բոլոր երիտասարդ տղամարդիկ և ղեկավարները գրեցին իրենց անունները ռեգբիի գնդակների վրա որպես միսիա ծառայելու խոստում և որպես տեսանելի հիշեցում այն ամենի, ինչ նրանք սովորեցին և զգացին: Հայրերից ու ղեկավարներից շատերը արթուն մնացին այդ գիշեր, խոսելով պատանիների հետ այն մասին, թե միսիան ինչ ազդեցություն է թողել իրենց կյանքում:

«Մեր Աստվածը անձամբ մեր Աստվածն է. Նա գիտի Իր պատանիներին», ասում է Եղբայր Էլմերը: «Նա տեղյակ է նրանց կյանքին ու դժվարություններին, և թե ինչ է կատարվում այս երեխաների հետ: Դուք երբեք չգիտեք, թե ինչպես է Նա աշխատում նրանց կյանքում: Ուստի, մենք որպես ղեկավարներ նրանց համար պատրաստում և ապահովում ենք այնպիսի մթնոլորտ, որ նրանք զգան Հոգին: Դուք կարող եք անել դա սուրբ գրությունների միջոցով և մարգարեների խոսքերի միջոցով, սակայն դա ոչ թե մենք, այլ Տերն է, որ գործում է նրանց սրտերում»:

Եղեք հետևողական

Եղբայր Էլմերն ասում է, որ նա ցանկանում է, որ երիտասարդ տղամարդիկ մեկ այլ բան էլ հիշեն

Ուսուցանեք օգտագործելով ինչպես ապրող, այնպես էլ հնօրյա մարգարեների խոսքերը:



ուղևորության մասին. նրանց ավետարանի ուսումնասիրությունը հետևողական բնույթ էր կրում:

«Ես զգում էի, որ իմ պարտականության մի մասն էր կազմում տալ նրանց Հոգին զգալու փորձառություններ, և եթե ես ուզում էի, որ դա պատահեր, ես պետք է կատարեի դրանք ծրագրելու իմ մասը», ասում է նա: «Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը սովորեցրել է մեր կյանքում ստեղծել հոգևոր սովորույթներ, այնպիսի սովորույթներ, ինչպես սուրբ գրությունների ուսումնասիրությունը, աղոթքը և ընտանեկան երեկոն:² Եվ այդ շաբաթ ուղևորության մեջ գտնվելու ընթացքում, մենք պահեցինք մեր հոգևոր սովորույթները: Մենք խմբով աղոթում էինք: Մենք հանձնարարում էինք երիտասարդ տղամարդկանց առավոտյան կիսվել 10 րոպեանոց հոգևոր մոտքով, իսկ նրանց ղեկավարներն ու հայրերը հոգևոր մոտքեր էին պատրաստում երեկոյան հավաքների համար:

Իմաստը կայանում էր նրանում, որ չնայած մենք հեռու էինք տնից և մեր միջոցառումները տարբերվում էին սովորական միջոցառումներից, մեր հոգևոր սովորույթները չընդհատվեցին: Երիտասարդ տղամարդիկ կարող են հիշել կամ չհիշել որոշակի դասեր, սակայն ես հուսով եմ, որ նրանք կհիշեն հոգևոր հավաքներ ունենալու, աղոթելու և սուրբ գրությունները ուսումնասիրելու մեր պարբերաբար պահած սովորույթները»:

Մայրա Բոքոբա Գարսիան Ֆիլիպիններից նույնպես

*Ամենօրյա միջոցառումներում գտեք ուսուցանման
պահեր:*



գիտի հետևողական լինելու արժեքը, և նա գիտի, որ դա ուսուցանելը սկսվում է տանը: Քույր Գարսիան և նրա ամուսինը՝ Էդվինը, ունեն 8-22 տարեկան երեք տղաներ և վեց աղջիկներ, յուրաքանչյուրը ներգրավված տարբեր լավ միջոցառումներում: Չնայած որ դա նշանակել, որ շատերը գնում են շատ տարբեր ուղություններով, ընտանիքը ջանասիրաբար աշխատում է միասին ընթերցել:

«Եփելն ու ուրախ ուտելիք պատրաստելն ու միասին ուտելը լավագույն եղանակներից մեկն է, որով մենք հավաքում ենք մեր երեխաներին միասին», ասում է քույր Գարսիան: Նա նշում է, որ ճաշի ժամը օգտագործվում է նորացնելու մեր հարաբերությունները, կապվելու իրար հետ և երախտագիտություն հայտնելու Տիրոջ օրհնությունների համար:

**Օգտագործեք սովորեցնելու և լսելու
առկա հնարավորությունները**

Ջոսելին Ֆիլդենը Նովա Սկոչիայի, Կանադա, ասում է, որ ամենակարևոր դասերը, որ նա սովորել է վեց երեխաներ մեծացնելուց, ովքեր հիմա 20-ից 30 տարեկան են, կապված են ոչ միայն

ուղղակի ուսուցանելու, այլ նաև «այնպիսի միջավայր ստեղծելու հետ, որտեղ երեխաները կարող են ինքնուրույն սովորել ճշմարտություններ»:

«Մի շտապեք կատարել նրանց բոլոր ընտրությունները կամ պատասխանել նրանց բոլոր հարցերին», ասում է նա: Դրա փոխարեն նա խորհուրդ է տալիս առաջնորդել երեխաներին «դեպի սուրբ գրությունները կամ խորհուրդներ տալ մեր մարգարեից առաջնորդության և պատասխանների համար»: Նա ավելացնում է, «Եվ պատրաստ եղեք քննարկել նրանց եզրակացությունները»: Որպես լրացում, երբ նա հարցեր է ստանում իր երեխաներից, նա երբեմն պատասխանում է դրանց իր հարցով. «Քո կարծիքով, դու ի՞նչ պետք է անես»:

«Կատահ եղեք, որ նրանք ճիշտ ընտրություն կկատարեն», ասում է նա: «Երբ մենք օգնում ենք մեր երեխաներին ճանաչել Հոգին իրենց կյանքում ամեն օր նրանց հետ ունեցած բազմաթիվ ուսուցման պահերին, և երբ նրանք գիտեն, թե ինչ զգացողություն են ունենում Հոգին զգալիս, դա խթան կհանդիսանա նրանց համար փնտրելու ավելի շատ հոգևոր փորձառություններ, որոնց միջոցով էլ կամրանան նրանց վկայությունները մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի իրական լինելու վերաբերյալ: Դա ավելի մեծ ազդեցություն է գործում. որքան ավելի են նրանք զգում Հոգու բերած լույսն ու մխիթարությունը, այդքան ավելի նրանք կցանկանան այդ և կձգտեն անել բաներ, որոնք Հոգին ավելի առատ կդարձնեն իրենց կյանքում»:

Նա անմիջապես նշում է, որ իր համար իր ընտանեկան կյանքում արդյունավետ սկզբունքներ են եղել նրանք, որոնք Եկեղեցու ղեկավարները բազմիցս ուսուցանել են: Օրինակ, նա ասում է, մինչդեռ որոշ ուսուցումներ կարող են առաջ զալ այնպիսի գրույցների ժամանակ, ինչպիսիք մենք ունենում ենք ընտանեկան երեկոների, ընտանեկան սուրբ գրություններ ուսումնասիրելու և ընտանեկան աղոթքի ժամանակ, ծնողները կարող են Հոգով առաջնորդվել փնտրելով ուսուցանման պահեր:³

«Զբոսնելը, միջոցառումների գնալը, շրջանակի մեջ գնդակ նետելը լրասկետբոլ խաղալը, ընտանիքով ճաշելը, միասին աշխատելը, երգելը և ուրիշներին ծառայելը միջոցառումներից ընդամենը մի քանիսն են, որոնց ժամանակ ավետարանը ուսուցանվել է մեր ընտանիքում», ասում է նա:

Ինչպես ես ամուր մնացի ավետարանում

Տուա Ռոջերս

Ես մկրտվեցի 12 տարեկանում, և երկար տարիներ ես իմ ընտանիքի միակ Եկեղեցու անդամն էի: Դա միշտ չէր հեշտ, սակայն բարեխառնաբար ես օրհնված էի լավ դեկավարներով, ովքեր օգնեցին ինձ ավետարանի վարդապետությունները սովորելու և այդ վարդապետությունները օգտագործելու իմ ճամփորդությունում, որպեսզի ամրացնեի և զարգացնեի իմ կյանքը: Քանի որ ես որոշեցի հավատարիմ մնալ այն ամենին, ինչին ես հավատում էի, ես տեսա մեծ օրհնություններ իմ կյանքում և շատ ժամանակ անց նաև իմ ընտանիքի անդամների կյանքում:

Ահա որոշ բաներ, որոնք օգնեցին ինձ ամուր մնալ.

- Մոտ մնացեք Երկնային Հորը աղոթքի ու սուրբ գրություններ ուսումնասիրելու միջոցով: Նա տեղյակ է այն հանգամանքներին, որոնց մենք հանդիպում ենք: Նրան մոտ մնալը օգնեց ինձ հիշել, թե ով եմ ես:
- Հետևեք Եկեղեցու ղեկավարների խորհրդին: Ես իմ սեփական կյանքում տեսել եմ մարգարեների և առաքյալների խորհրդի ճշմարտացիությունը:
- Իմացեք, որ ավետարանով ապրելը ավելի լավ կյանքի հնարավորություն է տալիս այժմ և հավիտյան: Մա օգնել է ինձ պահպանել իմ

չափանիշներն ու հավատքը: Դեկավարները խրախուսել են ինձ հաճախել տաճար, որն օգնել է ինձ պատկերացնել հավերժական կյանքը:

- Շրջապատեք ձեզ լավ ընկերներով, ովքեր ապրում են ձեր չափանիշներով: Ես օրհնված էի լավ ընկերներով, ովքեր հեշտացրեցին լավ որոշումներ կայացնելը և իմ հավատքը պահելը:
- Մոտ մնացեք ձեր ընտանիքին: Ես սիրել եմ իմ ընտանիքը և ցանկացել եմ ամուր հարաբերություններ հաստատել նրանց հետ:
- Մպրեք հավատքով: Հետևեք չափանիշներին և մասնակցեք Եկեղեցու ծրագրերին: Դրանք կօգնեն ձեզ հավատք ցուցաբերել և լավ ընտրություններ կատարել: Լավ ընտրությունները հաճախ կյանքն ավելի են հեշտացնում, և դրանք միշտ կյանքը ավելի երջանիկ են դարձնում:

«Ավետարանի թեմաներով խոսելը հաճախ բնականորեն է ստացվում, երբ մենք ներգրավված ենք այլ միջոցառումների մեջ»:

Միասին աշխատեք միասնական նպատակի համար

Բրիգամ Յանգ Համալսարանի Հավայան կղզիների ճյուղն ավարտելուց անմիջապես հետո Կայան Դանիս Մոքը տուն վերադարձավ Հոնգ Կոնգ և կոչում ստացավ որպես Երիտասարդ Կանանց նախագահ: Մինչդեռ նա ընտելանում էր տանը լինելուն, կարիերա սկսելուն և շարունակում էր ասպիրանտուրայում սովորել, նա անկեղծորեն աղոթեց ռզեշնչման համար, որպեսզի օգներ երիտասարդ կանանց, ում հետ նա աշխատում էր, զարգացնել վկայություններ նախապատրաստելով նրանց ապագայի համար:

Մի կիրակի մինչ նա ուսուցանում էր հավերժական հեռանկարի վերաբերյալ, Քույր Մոքը հուշում զգաց կարդալ Մորմոնի Գիրքը այն երիտասարդ աղջկա հետ, ով այդ օրը եկեղեցում նրա միակ աշակերտն էր:

«Իմ խորհրդականը և ես արագ արձագանքեցինք նպատակներ դնելով ավարտել Մորմոնի Գիրքը որպես թիմ երիտասարդ կնոջ հետ միասին», ասում է Քույր Մոքը: «Նա ընդունեց առաջարկն առանց վարանելու, քանի որ մենք միասին էինք հասնելու մեր նպատակին»:

Սկսած այդ պահից Քույր Մոքը, նրա խորհրդականը և այս երիտասարդ կինը ստեղծեցին «ընկերական

համակարգ» ֆեյսբուքում և հաղորդագրությունների միջոցով հիշեցնում էին իրար կարդալու մասին և կիսվում իրար հետ, թե ինչ էին իրենք սովորում:

Քույր Մոքն ասում է, որ նա ակնառու փոփոխություն տեսավ այս երիտասարդ կնոջ կյանքում, որը նրա սուրբ գրություններ կարդալու հետևանքն էր: Եվ մինչ Քույր Մոքը կարդում էր սուրբ գրությունները ամեն օր գնացքով երթևեկելուց, նա նույնպես օրհնություններ գտավ իր համար: «Ես նույնպես զգացի Հոգին և ստացա պատասխաններ իմ աղոթքներին, մինչ ես շարունակեցի առաջ գնալ կյանքում», ասում է նա:

«Ինչպես ցույց է տալիս իմ փորձը, որոշ երիտասարդներ անհանգստանում են և վստահ չեն այն մասին, թե նրանք կարող են վկայություն ստանալ և ունենալ հոգևոր փորձառություններ, ինչպես ուրիշներն ունեն», շարունակում է նա: «Միասին աշխատելով մենք վստահեցնում ենք նրանց մեր գործողություններով, որ սա աշխատում է, և որ մենք այնտեղ ենք աջակցելու նրանց ճանապարհի ամեն քայլին»: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Նիլ Լ. Մոդերսոն, «Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալստին», *Լիսինուս*, Մայիս 2011, 49:
2. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Ավելի ջանասեր և մտառոգ տան համար», *Լիսինուս*, Նոյեմբեր 2009, 17-20:
3. Տես, օրինակ, Ռոբերտ Դ. Հեյլս, «Մեր պարտականությունը Աստծո առաջ. աճող սերնդի հանդեպ ծնողների և ղեկավարների առաքելությունը», *Լիսինուս*, մայիս 2010, 95-98, Դեյվիդ Ա. Բեդնար, «Ավելի ջանասեր և մտառոգ տան համար», *Լիսինուս*, նոյեմբեր 2009:



Երեց
Փոլ Բ. Փայփեր
Յոթանասունից

ԱԼՄԱՅԻ ԳԻՐՔԸ. ԴԱՍԵՐ ԱՅՍՈՐՎԱ ՀԱՄԱՐ

Նեփիսացիները հավատալովորեն դիմանում էին իրենց օրերի փորձություններին և վկաներ են, որ Տերը կապահովի մեզ անհրաժեշտ օրհնություններն ու պաշտպանությունը, որպեսզի հաջողություն ունենանք աշխարհում դժվարություններին հանդիպելիս:

Ի թագավորության ավարտին Թագավոր Մոսիան առաջարկեց, որ միապետությունը փոխարինվեր մի համակարգով, որտեղ կլինեին ժողովրդի կողմից ընտրված դատավորներ: Առաջարկված համակարգը պետք է հիմնված լիներ Աստծուց տրված օրենքների վրա, որը կկառավարվեր դատավորների կողմից, ովքեր պետք է ընտրվեին ժողովրդի կողմից:

Առաջարկված համակարգի հիմքը ազատ ընտրության սկզբունքն էր, անհատները, և ոչ թե թագավորը, պետք է ընդունեին պարտականություններ և պատասխանատվություններ գործելու համաձայն օրենքի: Քանի որ «ընդունված չէ, որ ժողովրդի ձայնը ցանկանա որևէ բան հակառակ նրա, ինչը ճշմարիտ է» (Մոսիա 29.26), այս համակարգը ավելի մեծ պաշտպանություն կապահովեր անհատների իրավունքների համար և հասարակության ընդհանուր արդարության համար:

Ի պատասխան Մոսիայի առաջարկի, մարդիկ «դարձան չափազանց մտառոտ, որ ամեն մարդ պիտի ունենա հավասար

հնարավորություն ամբողջ երկրով մեկ. այո, և ամեն մարդ պատրաստակամություն հայտնեց պատասխան տալ իր անձնական մեղքերի համար» (Մոսիա 29.38):

Այժմյի գիրքը պարունակում է ժողովրդի պատմությունը 40 տարիների ընթացքում առաջարկված համակարգը ժողովրդի կողմից ընդունելուց հետո: Այժմյի արձանագրությունների վերջին գլուխներում, գլուխներ 43-62, տրվում է ահռելի դժվարությունների ու փորձությունների պատմությունը: 19 տարվա այս կարճ ժամանակաընթացքում մարդիկ հանդիպեցին ներքին քաղաքական խնդիրների, արտաքին վտանգների և գրեթե մշտական զինված հակամարտությունների:

Երկու անգամ պետական համակարգը ներքին սպառնալիքի տակ հայտնվեց այն մարդկանց կողմից, ովքեր ձգտում էին հաստատել իրենց որպես թագավորներ և զրկել մարդկանց իրենց ղեկավարներին ընտրելու և ազատ երկրպագելու իրավունքից: Միաժամանակ, մարդիկ պետք է պաշտպանեին իրենց բազմաթիվ արտաքին հարձակումներից լամանացիների



Իրենց բոլոր
փորձություն-
ների մեջ ար-
դարակյաց
Նեփիսացիները
կարողանում
էին ուժ ստանալ
այն պատճա-
ռով, որ գործում
էին պատշաճ
նպատակներով:
Նրանց միակ
նպատակն էր՝
«պաշտպանել
իրենց, և իրենց
ընտանիքներին,
և իրենց հողերը,
իրենց երկիրը և
իրենց իրավունք-
ները, և իրենց
կրոնը»:



Կարիքավոր-
ների հանդեպ
բարի և առա-
տաձեռն լինելու
ցանկությունը
կարևոր գոր-
ծոն էր նեոիսա-
ցիների ազգը
պահպանելու
և արժանացրեց
նեոիսացինե-
րին երկնքի
օրհնություն-
ներին իրենց
ծայրահեղ
իրավիճակում:
Բարի վերա-
բերվումը, որ
նեոիսացիները
ցուցաբերեցին
Ամմոնի ժո-
ղովրդի հանդեպ
փոխադարձ
էր և ի վերջո
նպաստեց
2000 դեռահաս
զինվորների
կազմավորմանը:

ամենաոգեշնչող զինվորական խմբի՝ 2000 դեռահաս զինվորների կազմավորմանը: Ճակատագրի հեզմանքով այս երիտասարդ տղամարդկանց ծառայությունը կարող էր լինել բանալին, որ նեփիացիների հասարակությունը պահպանվեց վաղաժամ կործանումից:

Ներքին անհամաձայնությունների, արտաքին հարձակումների և տնտեսական խնդիրների ժամանակ հակում կա բացասական վերաբերմունք դրսևորելու նրանց հանդեպ, ովքեր «մեզ նման չեն»: Հեշտանում է նրանց հանդեպ քննադատող դառնալը և դատավճիռ կայացնելը: Մեկը կարող է հարցականի տակ դնել նրանց հավատարմությունը և հասարակության մեջ նրանց արժեքը և նրանց ազդեցությունը մեր տնտեսական բարօրության վրա: Այս բացասական արձագանքները հակասում են Փրկչի պահանջին՝ սիրելու մեր հարևաններին ինչպես ինքներս մեզ, և դրանք առաջ են բերում բևեռացումներ, վիճաբանություններ և տարանջատումներ: Եթե Ամմոնի ժողովուրդը լավ չընդունվեր նեփիացիների հասարակության մեջ, այն կարող էր հաջորդ սերնդի մեջ միգրացե առաջ բերել զայրույթ, այլ ոչ թե երախտագիտություն: 2000 հավատարիմ զինվորներ տալու փոխարեն նոր սերունդը կարող էր դառնալ օտարված և վերամիավորվել լամանացիների հետ:

Կարիքավորների հանդեպ բարի և առատաձեռն լինելու ցանկությունը կարևոր գործոն էր նեփիացիների ազգը պահպանելու և արժանացրեց նեփիացիներին երկնքի օրհնություններին իրենց ծայրահեղ իրավիճակում: Աստծո ժողովուրդը նման օրհնությունների կարիք ունի այսօր:

3. Լսեք և հետևեք ոգեշնչված ղեկավարներին:

Տերը գիտեր ղվարությունները, որոնց նեփիացիները կհանդիպեին, և Նա բարձրացրեց ոգեշնչված ղեկավարներ, որ օգնեն նրանց հանդիպել այդ ղվարություններին: Մորոնի գորապետը զինվոր էր, սակայն ոգեշնչվել էր պատրաստելու լանջապանակներ, բազպաններ, սաղավարտներ և հաստ հագուստներ իր ժողովրդին պաշտպանելու համար (տես Ալմա 43:19): Որպես արդյունք նեփիացիները շատ ավելի լավ կռվեցին, քան լամանացիները (տես Ալմա 43:37–38): Ավելի ուշ Մորոնին կարգադրեց մարդկանց փորել-հանել հողակույտեր իրենց քաղաքների շուրջը և այս հողեր եզրաթմբերի գազաթին հեծաններից կառույցներ լինեն և ցցաշարք (տես Ալմա 50:1–3): Այս ոգեշնչված նախապատրաստությունները օգնեցին պաշտպանել նեփիացիներին կործանումից:

Մինչ Մորոնին նախապատրաստվում էր պատերազմին, Հելամանն ու իր եղբայրները քարոզում էին Աստծո խոսքը և հորդորում մարդկանց լինել ազնիվ, որպեսզի Տիրոջ Հոգին կարողանար առաջնորդել և պաշտպանել նրանց: Լսելով ոգեշնչված ղեկավարների նյութական և հոգևոր կարգադրությունները նեփիացիները պահպանվեցին: Միայն երբ ներքին անհամաձայնություններ բարձրացան և ժողովուրդը

հրաժարվեց լսել ոգեշնչված նախագուշացումներին, դրա արդյունքում եղան անհաջողություններ և տառապանք:

Մենք օրհնված ենք ապրելու այն օրերում, երբ Տերը կանչում է ապրող մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ նախագուշացնելու և առաջնորդելու մեզ այսօրվա ղվարությունների համար: 1998թ. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) Եկեղեցու անդամներին տվեց ոգեշնչված հրահանգ և նախագուշացում.

«Ժամանակը եկել է մեր տներում կարգ ու կանոն հաստատելու համար:

Ուստի մեր ժողովրդից շատերը ապրում են իրենց եկամտի վերջին գումարներով: Իրականում որոշները ապրում են պարտքերով: . . .

Տնտեսությունը փխրուն բան է: . . . Առջևում փոթորկոտ եղանակ է սպասվում, որին մենք լավ կլինի ուշադրություն դարձնենք»:²

Վերջերս ես խոսեցի մի մարդու հետ, ով լսել էր Նախագահ Հինքլիի խոսքերը և Հոգու հուշումները: Նա և իր կինը որոշել էին լուծարել իրենց ներդրումները, վճարել իրենց տան համար և մարել պարտքերը:

Այսօր այդ մարդը ապրում է իր սեփական միջոցներով: Հետագա տնտեսական ճգնաժամը չնչին ազդեցություն ունեցավ նրա ընտանիքի վրա: Նույնիսկ նրա միջոցները թույլ տվեցին իրեն ու իր կնոջը միսիա ծառայել:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բարձրացվել է մեր օրերի համար: Նրա կյանքն ու ուսմունքները այն ուղերձն են, որ Աստված ուղարկել է մեզ այսօր պաշտպանելու և օրհնելու համար: Մինչ շատերը անհանգստանում են այն բանի համար, ինչ չունեն, Նախագահ Մոնսոնը սովորեցնում է մեզ երախտապարտ լինել այն բազում օրհնությունների համար, որոնք Տերը տվել է մեզ: Մինչ շատերը կենտրոնանում են իրենց սեփական խնդիրների վրա, Նախագահ Մոնսոնը հորդորում է մեզ օգնության հասնել և փրկել՝ մոռանալով ինքներս մեզ ուրիշներին օրհնելով: Նախագահ Մոնսոնի հրահանգները լսելը մեր ընտանիքին կտա հոգևոր պաշտպանություն և օրհնություններ, որոնք անհրաժեշտ են մեր օրերում:

Ես երախտապարտ եմ, որ ապրում եմ այն օրերում, երբ ավետարանը վերականգնված է: Ես երախտապարտ եմ, որ Տերը նախապատրաստել է Մորմոնի Գիրքը մեր օրերի համար: Նեփիացիները հավատարմորեն տարան իրենց օրերի ղվարությունները և վկաներ են, որ Տերը կապահովի օրհնությունները և պաշտպանությունը, որը անհրաժեշտ կլինի մեր օրերի ղվարություններին հաջողությամբ դիմակայելու համար: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ezra Taft Benson, “The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign*, Nov. 1986, 6.
2. Gordon B. Hinckley, “To the Boys and to the Men,” *Ensign*, Nov. 1998, 53.



Լսելով Մո-
րոնիի պես
ոգեշնչված
դեկավարների
նյութական և
հոգևոր հրա-
հանգները
նեփիսցիները
սրահպանվե-
ցին: Միայն,
երբ ներքին
հակասություն
ստաջացավ և
մարդիկ հրա-
ժարվեցին
լսելու ոգեշնչ-
ված նախագ-
գույնացումները,
հետևեցին
նահանջ և տա-
ռապանքներ:



ԳՈՅԱՏԵՎԵԼ



ԻՆՉՊԵՍ

ԹՇՆԱՄՈՒ
ՏԱՐԱԾՔՈՒՄ



**Նախագահ
Բոյդ Զ. Փաքյան**

Տասներկու Առաքյալների
Զվորումի Նախագահ

Մենք նշում ենք Եկեղեցու սեմինարիայի 100- ամյակը: Եկեք հետ զնանք այն ժամանակները, երբ այս ծրագրի միջոցները շատ սակավաթիվ էին:

Այդպիսի համեստ սկիզբ ունենալով՝ մենք այժմ սեմինարիայի դասարաններում ունենք 375008 ուսանողներ 143 երկրներում, 38000-ից ավելի հանձնառու և լրիվ դրույքով աշխատող ուսուցիչներ ամբողջ աշխարհում: Մենք շատ բան ենք ներդնում մեր երիտասարդների համար: Մենք գիտենք ձեր արժեքը և ձեր ներուժը:

Իմաստությունը կօգնի ձեզ կասեցնել թշնամուն

Ես խոսում եմ որպես մեկը, ով տեսել է անցյալը և կնախապատրաստի ձեզ ապագայի համար:

Դուք մեծանում եք թշնամու տարածքում: Երբ դուք հոգևոր առումով հասունանաք, դուք կհասկանաք, թե ինչպես է հակառակորդը սողոսկել ձեզ շրջապատող աշխարհը: Նա տներում է, ուրախ ժամանցներում, զանգվածային լրատվամիջոցներում, լեզվում՝

ամենուր ձեր շուրջը: Շատ դեպքերում նրա ներկայությունն աննկատ է:

Ես ուզում եմ ասել ձեզ այն, ինչը կլինի ամենաարժեքավորը և ամենացանկալին: Սուրբ գրություններն ասում են. «Իմաստության սկիզբն է՝ «Իմաստության ստացիր» և ես կավելացնեի. «քո ամեն ստացվածքի հետ լրթացքստացիր» Առակաց Դ.7: Ես ավելորդ ժամանակ չունեմ և դուք նույնպես: Ուստի, ուշադիր լսեք:

Ես պարզ հիշում եմ այն պահը, երբ որոշեցի ուսուցիչ դառնալ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ես 20 տարեկան էի և օդաչու էի ռազմաօդային ուժերում: Ես տեղավորվել էի Այ Շիմա փոքրիկ կղզում: Այս փոքրիկ, մեկուսի կղզին, որը գրեթե դրոշմանիշի մեծության էր, Օկինավայից մի փոքր հյուսիս էր գտնվում:

Ամառային մի միայնակ երեկո ես նստեցի քարափին դիտելու, թե ինչպես է արևը մայր մտնում: Ես խորհում էի այն մասին, թե ինչ էի անելու ես իմ կյանքում պատերազմից հետո, եթե ես այնքան հաջողակ լինեի, որ գոյատևեի: Ի՞նչ էի ես ուզում դառնալ: Դա հենց այդ գիշեր էր, որ ես որոշեցի, որ ուզում էի ուսուցիչ դառնալ: Ես եկա այն եզրակացության, որ ուսուցիչները միշտ սովորում են: Սովորելը կյանքի հիմնական նպատակն է:

Ես նախ դասավանդեցի սեմինարիայում 1949թ. Բրիզամ Սիթիում: Ես այդ սեմինարիայի ուսանող եմ եղել իմ ավագ դպրոցի օրերին:

Սեմինարիայում երեք դասընթացներ էին դասավանդվում. Հին Կտակարան, Նոր Կտակարան և Եկեղեցու Պատմություն: Ես արտոնություն ունեցա ավելացնելու վաղ առավոտյան Մորմոնի Գրքի դասարանը: Ես պատերազմից տուն վերադարձա Մորմոնի Գրքի վերաբերյալ վկայությունով և հասկացողությամբ, թե ինչպես է գործում Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգու պարզև կապշտպանի ձեզ թշնամու տարածքում

Ձեր ողջ կյանքի ընթացքում ձեզ սովորեցրել են Սուրբ Հոգու պարզև մասին, սակայն ուսուցանելը սահմանափակ է: Դուք կարող եք և իրականում դուք պետք է անցնեք մնացած ճանապարհը միայնակ, բացահայտելու ինքներդ ձեր մեջ, թե ինչպես կարող է Սուրբ Հոգին լինել առաջնորդող և պաշտպանող ազդեցություն:

Երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց համար գործընթացը նույնն է: Բացահայտելը, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում ձեր կյանքում, պահանջում է փնտրել ամբողջ կյանքում: Հենց որ դուք բացահայտեք դա ձեր մեջ, դուք կարող եք ապրել

թշնամու տարածքում և չեք մոլորվի կամ կործանվի: Այս Եկեղեցու ոչ մի անդամ, և դա նշանակում է ձեզանից յուրաքանչյուրը, երբևիցե լուրջ սխալ թույլ չի տա, առանց նախօրոք նախազգուշացվելու Սուրբ Հոգու հուշումումներով:

Երբեմն, երբ դուք սխալ եք թույլ տալիս, դուք այնուհետև ասում եք. «Ես գիտեի, որ չպետք է դա անեի: Ես զգում էի, որ դա ճիշտ չէր» կամ հավանաբար. «Ես գիտեի, որ պետք է դա անեի: Ես միայն համարձակություն չունեցա գործելու»: Այդ տպավորությունները ստացվում են, երբ Սուրբ Հոգին փորձում է առաջնորդել ձեզ դեպի լավը կամ նախազգուշացնում է ձեզ հեռու մնալ փորձանքից:

Կան որոշ բաներ, որոնք դուք չպետք է անեք, եթե ուզում եք, որ հաղորդակցման ուղիները բաց մնան: Դուք չեք կարող ստել, անագնիվ վարվել, գողանալ կամ անբարոյական վարք դրսևորել և այդ ուղիները ազատ պահել արգելքներից: Մի գնացեք այնտեղ, որտեղ միջավայրը դիմակայում է հոգևոր հաղորդակցությանը:

Դուք պետք է սովորեք փնտրել զորությունն ու ուղիությունը, որը հարմար է ձեզ համար, և այնուհետև հետևեք այդ ուղիությանը, անկախ ամեն ինչից:

Ձեր «Ինչ պետք է անել» ցուցակում առաջինը գրեք *սիրոթ* բառը: Շատ ժամանակ ձեր աղոթքները լուռ կասվեն: Դուք կարող եք մտքում աղոթել:

Դուք կարող եք միշտ ուղիղ հաղորդակցման կապ ունենալ ձեր Երկնային Հոր հետ: Թույլ մի տվեք հակառակորդին համոզել ձեզ, որ ոչ ոք չի լսում մյուս կողմում: Ձեր աղոթքները միշտ լսվում են: Դուք երբեք միայնակ չեք:

Հոգ տարեք ձեր մարմնի համար: «Զգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակվում է ձեզանում» (Ա Կորնթացիս 3.16):

Ուշադիր կարդացեք խոստումները, որոնք գտնվում են Վարդապետություն և ուխտերի 89 բաժնում: Իմաստության Խոսքը չի խոստանում կատարյալ առողջություն, այլ, որ հոգևոր գործոնները ձեր մեջ ավելի կամրանան:

Հեռու մնացեք դաշվածքներից և նմանատիպ բաներից, որոնք վնասում են ձեր մարմինը: Ձեր մարմինը ստեղծվել է Աստծո պատկերով:

Մարգարեական խորհուրդը սովորեցնում է, թե ինչն է ճիշտ

Այժմ ես ուզում եմ պարզ խոսել մեկ այլ հարցի շուրջ:

Մենք գիտենք, որ սեռը նախասահմանված էր նախաերկրային կյանքում:¹ «Ոգին ու մարմինը մարդու հոգին են» (ՎեՈՒ 88.15): Մեծի հետ կապված այս

խնդիրը մեծ մտահոգության է արժանացել Եկեղյանների կողմից, ինչպես բոլոր բարոյականության հետ կապված խնդիրները:

Ձեզանից ոմանք կարող է զգացած լինեն կամ ձեզ կարող է ասած լինեն, որ դուք ծնվել եք որոշակի խնդիրներով, և որ դուք մեղավոր չեք լինի, եթե դուք գործեք համաձայն այդ գայթակղությունների: Վարդապետությունից ելնելով մենք գիտենք, որ եթե դա ճիշտ լիներ, ձեր ազատ ընտրությունը կվերցվեր ձեզանից, իսկ դա չի կարող տեղի ունենալ: Դուք միշտ ունեք ընտրություն հետևելու Մուրֆ Հոգու հուշումներին և ապրելու բարոյապես մաքուր և մաքրաբարո կյանքով, որը լցված է առաքինությամբ:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հայտարարեց հետևյալը գերագույն համաժողովի ժամանակ. «Մարդիկ հարցնում են մեր տեսակետի մասին նրանց վերաբերյալ, ովքեր իրենց համարում են . . . միաստեամտ տղամարդիկ և միաստեամտ կանայք: Իմ պատասխանն է, որ մենք սիրում ենք նրանց որպես Աստծո որդիներ և դուստրեր: Նրանք կարող է ունեն որոշակի հակումներ, որոնք շատ ուժեղ են և որոնք կարող է դժվար լինի կառավարել: Շատ մարդիկ տարբեր ժամանակներում ունենում են մի տեսակի [գայթակղություն] կամ այլ տեսակի: Եթե նրանք չեն գործում համաձայն այդ հակումների, ապա նրանք կարող են առաջ գնալ ինչպես անում են Եկեղեցու մնացած բոլոր անդամները: Եթե նրանք խախտում են մաքրաբարոյության օրենքը և Եկեղեցու բարոյական չափանիշները, ապա նրանք պատժվում են կարգազանցության համար Եկեղեցու կողմից, ճիշտ ինչպես ուրիշները:

Մենք ուզում ենք օգնել . . . ամրացնել նրանց, աջակցել նրանց իրենց խնդիրների հետ կապված և օգնել նրանց իրենց դժվարություններում: Մակայն մենք չենք կարող ձեռնպահ մնալ, եթե նրանք անձնատուր են լինում անբարոյական միջոցառումներին, եթե նրանք փորձում են աջակցել և պաշտպանել և ապրել այսպես կոչված նույնասեռ ամուսնական իրավիճակում: Այսպիսի բան թույլ տալը կնշանակեր թեթև վերաբերվել շատ լուրջ և սուրբ հիմքեր ունեցող Աստծո կողմից հաստատված ամուսնությանը և դրա բուն նպատակին՝ ընտանիքներ մեծացնելուն»:²

Նախագահ Հինքլին խոսում էր Եկեղեցու համար:

Օգտագործեք ձեր ազատությունը ապահով հիմքերը պահպանելու կամ կրկին հաստատելու համար

Առաջին պարզև, որ Ադամն ու Եվան ստացան, ազատ ընտրությունն էր. «Դու կարող ես ընտրել քեզ համար, քանզի դա տրված է քեզ» (Մովսես 3:17):

Դուք ունեք այդ նույն ազատությունը: Իմաստությամբ օգտագործեք այն մերժելու ցանկացած ոչ մաքուր դրդումից մղվող գործողություն կամ ոչ սուրբ գայթակղություն, որ կարող է գալ ձեր մտքում: Պարզապես մի գնացեք այդտեղ, և եթե դուք արդեն այդտեղ եք, դուրս եկեք այդտեղից: «Հրաժարվեք ամեն

անաստվածությունից» (Մորոնի 10:32):

Մի դիպեք ձեր մարմնի կյանք տվող գործություններին միայնակ կամ ցանկացած սեռի անդամների հետ: Դա եկեղեցու չափանիշն է, և այն չի փոխվի: Երբ դուք հասունանաք, գայթակղություն կա փորձելու կամ հետագոտելու անբարոյական միջոցառումները: Մի արեք դա:

Գաղտնաբառը *դաստիարակությունն* է՝ ինքնադաստիարակությունը: *Դաստիարակություն* բառը անգլերենում առաջ է գալիս *աշակերտ* կամ *հետևորդ* բառերից: Եղեք Փրկչի աշակերտ-հետևորդները, և դուք ապահով կլինեք:

Ձեզանից մեկը կամ երկուսը կարող են մտածել. «Ես արդեն իսկ մեղանչել եմ այս կամ այն լուրջ սխալը թույլ տալով: Շատ ուշ է ինձ համար»: Երբեք շատ ուշ չէ:

Ձեզ սովորեցրել են տանը և սեմինարիայում Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Քավությունը նման է ջնջոցի: Այն կարող է մաքրել մեղքի զգացումը և դրա ազդեցությունը, ինչ էլ որ այն լինի, որը պատճառ է հանդիսանում ձեզ մեղավոր զգալու համար:

Մեղքի զգացողությունը հոգևոր ցավ է: Մի տառապեք շարունակ կրկնվող ցավից: Ազատվեք դրանից: Վերջ դրեք դրան: Ապաշխարեք և եթե հարկավոր է ապաշխարեք կրկին ու կրկին ու կրկին ու կրկին, մինչև դուք, ոչ թե թշնամին, կարողանաք կառավարել ձեզ:

Տևական խաղաղությունը գալիս է հաճախ ապաշխարելուց

Կյանքը փորձությունների ու սխալների շարան է: Ավելացրեք «հաճախակի ապաշխարելը» ձեր այն բաների ցուցակում, որոնք պետք է անեք: Մա ձեզ տևական խաղաղություն կբերի, ինչը չենք կարող գնել աշխարհիկ ոչ մի գնով: Քավությունը հասկանալի կարող է լինել ամենակարևոր ճշմարտություններից մեկը, որը դուք կարող եք սովորել, քանի դեռ երիտասարդ եք:

Եթե դուք շփվում եք ուրիշների հետ, ովքեր ձեզ վար են ձգում ձեզ բարձրացնելու փոխարեն, կանգ առեք և փոխեք ձեր շրջապատը: Դուք կարող եք մենակ լինել և միայնակ ժամանակ առ ժամանակ: Կարևոր հարցը կարելի է տալ այդ ժամանակ. «Երբ դուք մենակ եք, դուք լավ շրջապատում եք»:

Վատ սովորությունից ազատվելը, որը դուք թույլ եք տվել, որ ձեզ պարտի, կարող է դժվար լինել: Մակայն դուք ուժ ունեք ձեր մեջ: Մի հուսահատվեք: Մարգարե Ջոզեֆ Միթլը սովորեցրել է, որ «բոլոր արարածները, ովքեր մարմին ունեն, գործություն ունեն նրանց վրա, ովքեր չունեն»:³ Դուք կարող եք հաղթահարել փորձությունը:

Հավանական չէ, որ դուք երբևէ անձնական հանդիպում ունենաք հակառակորդի հետ. նա իրեն այդպես չի դրսևորում: Մակայն եթե նա նույնիսկ գար ձեզ մոտ անձամբ ձեզ փորձելու և գայթակղելու համար, դուք առավելություն ունեք նրա հանդեպ: Դուք կարող եք հաստատել ձեր ազատ ընտրությունը, և նա ստիպված կլինի ձեզ հանգիստ թողնել:

Օգտվեք սեմինարիայի օրհնություններից

Դուք հասարակ էակ չեք: Դուք շատ յուրահատուկ եք: Դուք բացառիկ եք: Ինչպե՞ս ես գիտեմ դա: Ես գիտեմ դա, քանի որ դուք ծնվել եք այն ժամանակաշրջանում և վայրում, որտեղ Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է լինել ձեր կյանքում ձեր տան և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ուսմունքների և միջոցառումների միջոցով: Ինչպես Տերն ինքն է ասել՝ սա է «միակ ճշմարիտ ու կենդանի եկեղեցին ողջ երկրի երեսի վրա» (Վևու 1.30):

Կան այլ բաներ, որոնք մենք կարող ենք ավելացնել ցուցակում, սակայն դուք գիտեք, թե դուք ինչ պետք է և չպետք է անեք ձեր կյանքում: Դուք գիտեք ճիշտն ու սխալը և կարիք չունեք, որ ձեզ կարգադրեն ամեն բանում:

Մի վատնեք սեմինարիայի այս տարիները: Օգուտ քաղեք Եկեղեցու վարդապետությունները և մարգարեների ուսմունքները սովորելու մեծ օրհնությունից: Սովորեք այն, ինչը ամենամեծ արժեքն ունի: Այն կօրինի ձեզ և ձեր սերունդներին գալիք շատ սերունդների ընթացքում:

Կարճ ժամանակ անց դուք կամուսնանաք և երեխաներ կունենաք, ամուսնություն, որը կկնքվի տաճարում: Մեր աղոթքն է, որ դուք զոնեք ինքներդ ձեզ իր ժամանակին, ապահով տեղավորվելով ընտանեկան ծխում կամ ճյուղում:

Առաջ գնացեք հույսով և հավատքով

Մի վախեցեք ապագայից: Առաջ գնացեք հույսով ու հավատքով: Հիշեք Սուրբ Հոգու այդ հրաշալի պարզևի մասին: Սովորեք ուսուցանվել նրա կողմից: Սովորեք փնտրել նրան: Սովորեք ապրել նրանով: Սովորեք միշտ աղոթել Հիսուս Քրիստոսի անունով (տես 3 Նեփի 18.19–20): Տիրոջ Հոգին կայցելի ձեզ և դուք կօրհնվեք:

Մենք խորապես հավատում ենք ձեզ:

Ես իմ վկայությունն եմ բերում ձեզ, վկայություն, որը ես ստացել եմ երիտասարդ տարիքում: Եվ դուք չեք տարբերվում որևէ մեկից, ինչպես և ես: Դուք այնքան իրավունք ունեք այդ վկայությունն ունենալու, որքան և ցանկացած մեկ ուրիշը: Դուք կստանաք այն, եթե դուք վաստակեք այն: Ես Տիրոջ օրհնություններն եմ խնդրում ձեզ համար, որ այդ վկայության օրհնությունները լինեն ձեր կյանքում և առաջնորդեն ձեզ, մինչև դուք կկերտեք երջանիկ ապագա: ■

Սեմինարիայի հարյուրամյակին նվիրված հեռուստամիասն ելույթից՝ տրված 2012թ. հունվարի 22-ին:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես «Հնտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիստոնա*, Նոյեմբեր 2010, 129, տես նաև Մովսես 3.5, Աբրահամ 3.22–23:
2. Gordon B. Hinckley, "What Are People Asking about Us?" *Ensign*, Nov. 1998, 71.
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. ԶոգեՖ Սմիթ* (2007), 379:




Տես ամբողջ ուղերձը

Դիտեք կամ լսեք Նախագահ Փաքերի բոլոր ելույթները seminary.lds.org/history/centennial կայքում:



Մի վատնեք սեմինարիայի այս տարիները: Օգուտ քաղեք Եկեղեցու վարդապետությունները և մարգարեների ուսմունքները սովորելու մեծ օրհնությունից: Սովորեք այն, ինչը ամենամեծ արժեքն ունի:



ԵՍ ԱՂՈԹԵՑԻ ՔԱԶՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ծնողներս Եկեղեցու անդամներ են, սակայն նրանք այնքան էլ ակտիվ չեն: Դա երբեմն վեճերի տեղիք է տալիս, որովհետև նրանք հավատում են, որ ընտանիքի ժամանակը պետք է վեր դասվի ամեն ինչից՝ Եկեղեցի գնալուց, Եկեղեցու մեր կոչումները մեծարելուց և այլ միջոցառումներից:

Քանի որ ես ղեկավար եմ Երեխաների Խմբում և ծխի երգչախմբի անդամ, իմ Եկեղեցական ժողովները երբեմն խանգարում են ընտանեկան պարտականություններին: Մի օր, երբ ես նախընտրեցի հաճախել գերագույն համաժողովի հեռարձակմանը մեր հավաքատանը՝ Անտանանարիվոյում, ծնողներս ինձ հիշեցրեցին, որ հյուրեր ունեինք տանը:

«Դու պետք է ընտրես քո ընտանիքի և Եկեղեցու միջև, - ասաց մայրս: - Դու պետք է մնաս մեզ հետ տանը և չգնաս համաժողովին, իսկ եթե գնաս համաժողովին, կպատժվես»:

Ես որոշեցի չլիճել մայրիկիս հետ, փոխարենը, պահն օգտագործելով, խնդրեցի Երկնային Հորը, որ ինձ քաջություն և ուժ տա: Ես նաև խնդրեցի Նրան, որ օգնի ինձ իմանալ՝ ինչ անեմ: Պետք է ընտանիքիս հետ մնայի տանը, թե գնայի Եկեղեցի և լսեի մարգարեի խոսքը:

Երբ ավարտեցի աղոթքս, զգացի

Սուրբ Հոգին: Ես զգացի, որ Հոգին խրախուսեց ինձ մայրիկիս ասել, թե որքան կարևոր է ինձ համար գնալ և լսել մարգարեին: Ես զգացի, որ պետք է ասեմ նրան, որ իմաստուն խորհուրդ կստանամ իմ կյանքի ոչ միայն ներկայի, այլև ապագայի համար:

Աստված կարող է հրաշքներ կատարել, և Նա փափկացրեց ծնողներիս սիրտը, որպեսզի նրանք ինձ թույլ տային համաժողովին ներկա լինել առանց պատժվելու:

Աղոթքս ավարտելուն պես ես զգացի, ինչպես Սուրբ Հոգին քաջալերեց ինձ մայրիկիս ասել, թե որքան կարևոր է ինձ համար գնալ և լսել մարգարեին:

Դա հրաշալի փորձառություն էր իմ կյանքում: Այն հաստատեց ինձ համար սուրբ գրությունների ճշմարտությունը. «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5):

Ես գիտեմ, որ եթե մենք գործենք հիմնվելով ավետարանի սկզբունքների վրա և լսենք Հոգուն, միշտ կարող ենք ուրախանալ մեր ընտրություններով: Այդ փորձառությունը ամրացրեց իմ վկայությունը, որ Աստված նեցուկ է մեզ, և Սուրբ Հոգին օգնում է մեզ կյանքում: ■

Ֆե Տիանարիվելո, Մադագասկար



ՈՐՏԵՂ ԵՄ ԵՍ ՊԱՏԿԱՆՈՒՄ

Եկեղեցուն միանալուց առաջ կյանքս դժբախտությամբ լի էր: Յոթ տարեկան էի, ծնողներիս բաժանվելուց հետո հայրս բանտարկվեց: Մայրս ակոհողիկ էր և կորցրեց այն ամենը, ինչ կարևոր էր իր համար: Ես գնացի ապրելու խնամատար ընտանիքում:

Այդ ամենի պատճառով ես իմ շատ հասակակիցներից ավելի արագ մեծացա: Ես երբեք չէի զգում, որ կգտնեմ իմ տեղը, և այդ պատճառով մշտապես ըմբոստանում էի: Երբ դեռևս շատ փոքր էի, սկսեցի ծխել և անել բաներ, որոնք այժմ եմ հասկանում, որ հակասում էին Իմաստության Խոսքին: Ես համոզված էի, որ կյանքում դատապարտված էի ձախողման:

Միակ բանը, որ ինձ երջանկություն էր բերում, մարդկանց օգնելն էր՝ դա լինել նրանց հետ մաքրություն անելը, թե իրենց կյանքի պատմությունները լսելը: Ես շատ էի ուզում, որ մարդիկ իմանային, որ կարող եմ վստահել ինձ: Մի տարի գնացի արձակուրդ և հանդիպեցի մի տարեց կնոջ, որին որոշեցի ծառայել՝ լսելով նրան: Նա քրիստոնյա էր և ինձ հետ սկսեց խոսել կրոնի մասին:

Ես երբեք իսկապես չէի հավատացել Աստծուն: Այն պահերին, երբ մտածում էի, որ *զուգի*՝ Նա գոյություն ունի, ես մեղադրում էի Նրան իմ ապրած բոլոր դժբախտությունների համար: Մակայն, երբ այդ կինը նկարագրեց Աստծուն հավատալու կարևորությունը, իմ հետաքրքրությունը շարժվեց: Նախքան իմ հեռանալը, նա մի հետաքրքիր բան ասաց. «Մորմոնները հետևում են Աստծո պատվիրաններին»:

Ես երբեք չէի լսել Մորմոնների մասին: Գնալով տուն, մտա համացանց և փնտրեցի: Ես գնացի Mormon.org և Մորմոնի Գրքի

անվճար օրինակ պատվիրեցի: Մի քանի օր անց միսիոներներն ուղարկեցին այն:

Ես վստահ չէի, որ կսկսեմ հավատալ Աստծուն, սակայն միսիոներներն օգնեցին ինձ բացահայտել, որ ես կարող էի ոչ միայն հավատալ Նրան, այլև ճանաչել Նրան: Սկսելով աղոթել և ուսումնասիրել Մորմոնի Գիրքը, ես հայտնվեցի երջանկության որոնման մի հրաշալի ճանապարհի վրա: Ես թողեցի ծխելը: Ես դադարեցի մեղադրել Աստծուն և սկսեցի Նրան շնորհակալություն հայտնել լավ բաների համար, որ ունեցել եմ իմ կյանքում: Ես իմացա, որ Նրա Որդին տառապել էր իմ մեղքերի և երբևէ կրած իմ բոլոր ցավերի համար: 2007թ. հոկտեմբերին ես մկրտվեցի Նրա Եկեղեցում:

Եթե ինքս չապրեի հիասթափությունից երջանկություն փոփոխությունը, ես չէի հավատա, որ դա հնարավոր է: Այսօր ես սիրում եմ

իմ կոչումը Երեկանների խմբում և երախտապարտ եմ, որ հնարավորություն ունեմ օգնել կազմակերպելու ծառայության ծրագիր Լեհաստանում երիտասարդ ամուրի չափահասների համաժողովում: Եկեղեցու ծառայության մեջ մշտապես մյուսներին օգնելն ավելացրել է իմ ուրախությունը, որ գտել եմ Հիսուս Քրիստոսի ավետարանում: Այժմ այն ամենը, ինչ ես անում եմ, անում եմ Հիսուս Քրիստոսի հանդեպ մաքուր սիրով: Ես հավատում եմ, որ կյանքը գեղեցիկ է, և եթե անգամ մենք դժվարություններ ենք ունենում, Փրկչին հետևելով մենք չենք կորչի:

Կինը, որին ես հանդիպեցի, ճիշտ էր՝ առ Աստված հավատքը կարևոր է: Մենք չենք կարող գտնել մեր տեղն այս աշխարհում, եթե չենք ճանաչում Նրան: Ես երախտապարտ եմ, որ վերջապես գտել եմ տեղը, որին, գիտեմ, որ պատկանում եմ: ■

Դոռոտա Մուշալ, Լեհաստան

Նա ասաց հատկապես հետաքրքիր մի բան. «Մորմոնները հետևում են Աստծո պատվիրաններին»:



ՊԱՏՄԻՐ ՄԵՋ ՔՈ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Ես գնում էի եղբորս այցելության, և օդանավում նստատեղս գտնվում էր վերջում, որտեղ ուղեկցորդներն են նստում: Այդ մասում նստատեղերն իրար դիմաց էին դրված:

Ես ներկայացա շուրջս նստած մարդկանց և ապա նշեցի, որ հաճախելու եմ Բրիգամ Յանգ Համալսարան: Իմ դիմաց նստած տղամարդն ասաց, որ իր դուստրը մի լավ ընկեր ունի, որը նոր է ավարտել իր լիաժամկետ միսիան: Նրա դուստրը մի փոքր գիտեր Եկեղեցու մասին, սակայն նա գրեթե ոչինչ չգիտեր: Ուղեկցորդուհին անմիջապես հայտարարեց, որ ինքը չէր ցանկանա պատկանել «այդ եկեղեցուն», որովհետև այն դեմ է կանանց: Տղամարդն ասաց, որ ինքը ինչ-որ նման բան լսել է, որ Վերջին Օրերի Սրբերը կանանց ավելի քիչ տեղ են տալիս, քան տղամարդկանց, որ նրանք չեն կարող քահանայություն կրել կամ ժողովներին նախագահել, և որ Եկեղեցում տղամարդիկ են գերիշխում:

Ապա դառնալով ինձ, նա հարցրեց. «Դուք ի՞նչ եք մտածում այդ մասին»: Բոլոր յոթ հոգին շրջվեցին իմ կողմը՝ սպասելով պատասխանին:

Մի րոտս սկսեց բաբախել: Մանուկ հասակում անգիր էի սովորել Հավատո Հանգանակը նման պահի համար, իսկ դեռահաս և երիտասարդ տարիքում սովորել էի վկայություն բերել Ջոզեֆ Սմիթի տեսիլքի և Մորմոնի Գրքի մասին: Մակայն ես չնչին պատկերացում անգամ չունեի ինչպես պատասխանել այդ տղամարդու հարցին: Մտքումս աղոթեցի Երկնային Հորը, որ ինձ առաջնորդեր:

Ապա ես ասացի միտքս եկած առաջին բառերը. «Դուք պարզապես չգիտեք Սփոփող Միության

մասին»: Նրանց հայացքներից ակնհայտ էր, որ նրանք չգիտեին:

«Քահանայությունը գործում է կանանց հետ համատեղ, որոնք բոլորը Սփոփող Միության անդամներ են, - բացատրեցի ես: - Մենք ունենք Սփոփող Միության կին նախագահ, որը ղեկավարում է Եկեղեցու կանանց գործունեությունը ողջ աշխարհում: Կանանց պատասխանատվությունն է մեղմություն և զթություն բերել անդամների և, հատկապես, նրանց ընտանիքների կյանք»:

Իմ շուրջը գտնվողներն ուշադիր լսում էին:

«Մենք ապրում ենք տարօրինակ ժամանակներում, երբ որոշ կանայք ուզում են, որ կանայք գործեն, մտածեն և լինեն տղամարդկանց պես: Բայց մենք

հավատում ենք, որ Աստված բաժանում է գործերը: Մենք ակնկալում ենք, որ կանայք լինեն առաջնորդներ կանանց շրջանում և համատեղ ղեկավարներ իրենց տներում: Տղամարդիկ շատ հարցերում ապավինում են մեր խորհրդին: Դա արդար հավասարակշռություն է: Դա է հաջողության գրավականը Եկեղեցու կազմակերպություններում և մեր տներում: Եվ մենք իսկապես հավատում ենք, որ ոչ տղամարդն է առանց կնոջ, ոչ էլ կինն է առանց տղամարդու Տիրոջ (տես Ա Կորնթացիս ԺԱ.11): Մենք հավատում ենք, որ մենք ամբողջական չենք առանց միմյանց: Մենք հավատում ենք, որ ստեղծվել ենք ոչ թե մրցակցելու միմյանց հետ, այլ լրացնելու միմյանց»:

Ես ասացի առաջին բանը, որ միտքս եկավ. «Դուք պարզապես չգիտեք Սփոփող Միության մասին»:



Ավարտելով խոսքս, ես ինձ օրհնված զգացի: Ես գիտեի, որ իմ արտասանած խոսքերը Հոգուց էին գալիս: Յուրաքանչյուր ոք, կարծես, բավարարված էր իմ բացատրությամբ: Այնուհետև այդ տղամարդն ասաց. «Ավելին պատմիր մեզ քո եկեղեցու մասին»:

Ապա, երկու ժամ շարունակ ես օգտագործեցի այդ հաճելի առիթը՝ խոսելով Վերականգնման մասին, պատասխանելով հարցերին և վկայություն բերելով իմ սիրելի ավետարանի մասին: ■

Շոնա Մուր, Վիրջինիա, ԱՄՆ

ՊԵՏՔ Ե ԸՆՏՐԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԹԵ ԵԿԵՂԵՑԻՆ:

Ես և կինս ամուսնացանք 1981թ. Տոկիո ճապոնիա Տաճարում: Ամուսնությունից հետո մեր կյանքը սկզբում հեշտ չէր: Ես ուրախ էի, որ աշխատանք ունեի, սակայն մենք մեր ծախսերը չէինք կարողանում հոգալ: Մենք խնդրեցինք Երկնային Հորը, որ օգներ մեզ, և հնարավոր ամեն ինչ անում էինք ծայր-ծայրին հասցնելու համար, և վճարում էինք մեր տասանորդը: Մենք գիտեինք, որ եթե վստահեինք Տիրոջը, Նա կօգներ մեզ:

Մի շաբաթ կինս և ընկերս ինձ տվեցին լրագրից կտրված նույն փոքր շերտը: Դա լրիվ դրույքով անգլերենի ուսուցչի գովազդ էր:

Ես ուղարկեցի իմ ռեզյումեն այդ ընկերությանը և ինձ կանչեցին հարցազրույցի: Վերջում, հարցազրույց վարողն ասաց. «Դուք ձեր ռեզյումեում գրել եք, որ կամավոր աշխատանք եք կատարել որպես միսիոներ Վերջին Օրերի Սրբերի եկեղեցում: Դա նշանակում է, որ դուք եկեղեցի եք գնում կիրակի օրերին, այնպես չէ՞: Եթե դուք ընտրություն կատարեիք կիրակի օրերին եկեղեցի գնալու և աշխատանքի գալու միջև, ո՞րը կընտրեիք»:

Բարդ հարց էր, որովհետև ես ավելի լավ աշխատանքի կարիք ունեի: Սակայն մի պահ մտածելուց հետո, ես պատասխանեցի. «Կգնայի եկեղեցի»:

Հարցազրույց վարողը, թեթև ժպտալով, ասաց. «Պարզ է: Այնուհետև նա ինձ ճանապարհեց, խոստանալով, որ ընկերությունն այդ երեկո որոշում կկայացնի, և ես պետք է զանգահարեի արդյունքների մասին տեղեկանալու համար: Մենյակից դուրս գալով, ես մտածեցի, որ չեմ անցել:

Ավելի ուշ այդ երեկո, ես վերցրեցի խոսափողը և երկյուղով հավաքեցի այդ ընկերության համարը:

«Չէի՞ք ասի, ինչպիսին են հարցազրույցի արդյունքները, - հարցրեցի ես քարտուղարուհուն, - ես չեմ անցել, չէ՞»:

Նրա պատասխանն ինձ ապշեցրեց, և միևնույն ժամանակ ուրախություն պատճառեց:

«Մենք ուզում ենք խնդրել ձեզ աշխատել մեզ մոտ», - ասաց նա:

Մոտ մեկ ամիս անց ես իմացա, թե ինչու էի ընդունվել աշխատանքի: Քարտուղարուհին բացատրեց, որ հարցազրույց վարողն ապրում էր Վերջին Օրերի Մուրբ միսիոներների հարևանությամբ: Նա հաճախ էր տեսնում, ինչպես են միսիոներներն առավոտյան հեծանիվն արագ վարելով գնում իրենց աշխատանքին:

«Նա հավատացած էր, որ դուք



Հարցազրույց վարողը հարցրեց ինձ. «Եթե ընտրություն կատարեիք կիրակի օրերին եկեղեցի գնալու և աշխատանքի գալու միջև, ո՞րը դուք կընտրեիք»:

նույն եկեղեցու անդամը լինելով նույնքան տքնաջան կաշխատեք, ինչպես միսիոներներն էին աշխատում իրենց եկեղեցու համար, - ասաց նա: - Ձեր բախտը բերել է»:

Դրանից հետո մեր ընտանիքը միշտ ունեցել է այն, ինչի կարիքը զգացել է:

Երբ մտածում եմ այդ ընտրության մասին, ես քաջալերվում և սփռվում եմ: Ես գիտեմ, որ Աստված հաճախ օգտագործում է մյուսներին Իր գավակներին օրհնելու համար: Ես չեմ կարող լիովին արտահայտել իմ երախտագիտությունը կնոջս և ընկերոջս իրենց ոգեշնչման համար, որ ինձ տվեցին լրագրի հայտարարությունը, այն աշխատասեր միսիոներների և իրենց մեծ օրինակի համար, և մեր ռոդումած, սիրող և հոգացող Երկնային Հորը, որը հրաշալի զորություն ունի նվիրագործելու մեր փորձությունները մեր բարիքի համար: ■

Քենյա Իշի, ճապոնիա

Մաքրաբարոյություն

ԱՆԲԱՐՈ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Եկեղեցու ամսագրերը հանդիպեցին աշխարհի տարբեր վայրերից ժամանած մի խումբ երիտասարդ չափահասների հետ քննարկելու մաքրաբարոյ մնալու դժվարություններն ու օրհնությունները մի աշխարհում, որը չի գնահատում, և նույնիսկ ծաղրում է բարոյականությունը: Մենք գտնում ենք, որ նրանց բաց, ազնիվ և սրտահույզ քննարկումը վեհացնող ու ոգեշնչող է, և հույս ենք տածում, որ դուք ևս կարող եք նրանց մեկնաբանություններում գտնել ինչ-որ բան, որը կօգնի արժեքներ ստանալու և ֆիզիկական մտերմության սրբությունը:

Երբ այնքան շատ մարդիկ են արդարացնում անբարո վարքը, ավետարանի ո՞ր ճշմարտություններն են օգնում ձեզ մնալ սեռական առումով մաքուր:

Մարտին Բասկսեն, Նորվեգիա. Սուրբ գրություններում ասվում է՝ պետք է մաքրաբարո լինել: Դա բավական է ինձ համար:

Լիզի Զենկինս, Կալիֆոռնիա, ԱՄՆ. Մաքրաբարոյությունը պարտավորություն է: Դու այդպես ես ապրում, դա ապրելակերպ է:

Լիզ Վեսթ, Անգլիա. Ինձ շատ է օգնում այն, որ ես հասկանում եմ, թե ով եմ ես, հասկանում եմ, որ կյանքն ավելին է, քան այս պահը և այս մեկ գիշերը: Փրկության ծրագիրը, նույնիսկ երբ դեռահաս էի, չէի կարողանում որոշակիորեն բացատրել, թե որքան օգտակար է: Հավերժական ամուսնության գաղափարը հրաշալի է: Երբ մարդիկ հասկանում են այդ պարտավորությունը, նրանք գիտակցում

են կարևորությունն այն բանի, որ Աստված մեզ բերել է այստեղ՝ ընտանիք և տվել է մեզ պատվիրաններ, որ մենք լինենք ապահով և երջանիկ: Երբ ես ապրում եմ այդ սկզբունքներով և կիսվում դրանցով իմ ընկերների հետ, ասելով՝ «Ես չեմ խմում» կամ «Ես չեմ գա այդ հավաքույթին» կամ «Ես դա չեմ անի», նրանք հարգում են ինձ: Ի վերջո, նրանք իրականում պաշտպանում են ինձ: Ես հասկանում եմ, որ ես որպես Աստծո զավակ արժեք ունեմ, և որ Երկնային Հայրը գիտի, թե ով եմ ես, և հոգ է տանում իմ մասին, և դա ինձ ուժ է տալիս:

Աննա (Անյա) Վլասովա, Ռուսաստան. Ինձ շատ է օգնում, երբ մտածում եմ Երկնային ընտանիքի անդամ լինելու մասին: Ես սիրում և հարգում եմ Աստծուն, և չեմ ցանկանում, որ Նա ամաչի իմ կատարած ընտրությունների համար:

Կայլի Վիթմոր, Ֆլորիդա, ԱՄՆ. Ես միանշանակ կարծում եմ,

որ ընտանիքի սրբությունը հասկանալը ինձ ամուր վճռականություն է տվել մաքրաբարոյության օրենքով ապրելու համար: Նաև ես հասկանում եմ, որ երբ մենք խախտում ենք պատվիրանները, բացասական հետևանքներ են լինում, որոնք ես չեմ ուզում ունենալ:

Ֆալանդ (Ֆի) Թոմաս, Հաիթի. Ես իսկապես մտածել եմ, թե ինչպես եմ մարդիկ ասում. «Ինչո՞ւ սպասել, երբ կարող ես ամեն ինչ ունենալ այժմ»: Բայց ես մտածել եմ, թե որքան կարող է տևել այդպիսի երջանկությունը: Ես գերադասում եմ ապրել մաքրաբարոյության օրենքով և, ի վերջո, ունենալ խաղաղություն:

Հիփոլայթ (Հիփ) Քոուադիո, Այվորի Քոուսթ. Ինձ շատ է օգնում ընտանիքի հեջակազիրը. «Մենք . . . հայտարարում ենք Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ գործությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ամուսնացած են որպես ամուսին և կին»:¹

Մյուս բանը, որ օգնում է ինձ, այն է, թե ինչպես եմ Եղբայրները մեզ բացատրում մաքրաբարոյությունը: Նրանք զգուշացնում են մեզ, թե ինչպես է անբարոյականությունը սկսվում, և ուսուցանում են, որ չարաշահելով մարմինը մենք չարաշահում ենք հոգին: Երեց Զեֆրի Ռ. Հովանդոն ուսուցանել է, որ Փրկիչը մեզ համար

«Փրկիչը մեզ համար վճարել է մի օր հարություն առած մարմին ունենալու գինը: Որպեսզի Նրա վճարած գնի համար երախտապարտ լինենք, մենք պետք է մաքուր պահենք մեր մարմինները:»

վճարել է գինը, որ մի օր հարություն առած մարմին ունենանք: Նրա վճարած գնի համար մենք կարող ենք երախտապարտ լինել, մեր մարմինը մաքուր պահելով:²

Լիզ. Ես հիշում եմ, երբ 15 տարեկան էի, մի շատ առանձնահատուկ զրույց ունեցա մի աղջկա հետ: Մենք խոսեցինք այն մասին, որ ես չեմ հավատում ամուսնությունից առաջ սեռական հարաբերությանը, և հիշում եմ, ինչպես նա ասաց. «Այո, բայց ի՞նչ կլինի, եթե դա պատահի: Ի՞նչ կլինի, եթե մի գիշեր դու պարզապես . . .»: Բայց ես գիտեի, որ ես ընտրություն ունեի: Ոչինչ հենց այնպես չի «պատահում»:

Ինձ համար շատ կարևոր է, որ Երկնային Հայրը մեզ տվել է ազատ կամք և պատվիրաններ, որ մեզ ազատ են դարձնում, և որ սատանան հնարավորինս ամեն ինչ անում է մեզ կապելու կամ սահմանափակելու համար: Ընկերուհիս խոսում էր, որ խնջույք հավաքույթների ժամանակ է, որ կարող է ինչ-որ բան «պատահել», երբ մարդիկ խմում են ոգելից խմիչքներ և զույգերով առանձնանում: Այնպես որ ես չեմ դնում ինձ նման իրավիճակներում: Ընտրությունը չպետք է կատարել վերջում, երբ դու ստիպված ես ասել՝ այո կամ ոչ: Ընտրությունը կատարվում է, երբ դու հարցնում ես ինքդ քեզ՝ «Արդյո՞ք գնում եմ ես հավաքույթի»:

Շատերը, եթե նախապես չեն մտածում, ինչ կարող է պատահել և չեն մտածում հետևանքների մասին, վարվում են ըստ տվյալ պահի ցանկության: Բայց եթե դու ասում ես. «Ես սա եմ ուզում որպես իմ վերջնական արդյունք և ես կկայացնեմ այս ընտրությունները», այդ ժամանակ դու խույս կտաս շատ դժվարություններից:

Դուք հիշատակեցիք ազատ կամքը և պատվիրանները: Իսկ ուխտերը՝ մկրտության ուխտերը կամ տաճարային ուխտերը, օգնո՞ւմ են ձեզ ապրել ձեր չափանիշներով:

Ֆե. Ես հիշում եմ իմ կյանքը նախքան մկրտվելը, և որքան ավելի շատ իմաստ ունի կյանքն այժմ ուխտեր կապելուց հետո: Հրաշալի է, թե ինչպես կարող ենք ներվել Քավության շնորհիվ: Երբ ես հիշում եմ իմ ուխտերը, մտածում եմ, թե ինչպես կարող եմ ապաշխարել, դառնալ ավելի լավ և շարունակ առաջ գնալ:

Անյա. Հատկապես տաճարում դու տեսնում ես հավերժական հեռանկար: Տաճարն օգնում է քեզ մտածել ոչ միայն այսօրվա, այլև քո հավերժության մասին, և դու ավելի իմաստուն ընտրություններ ես կատարում:

Լիզի. Շատ դեպքերում մենք հավատում ենք, որ սեռական հարաբերությունը վատ է, սակայն այդպես չէ: Այն ուղղակի պետք է թույլատրվի ճիշտ իշխանությամբ, ճիշտ ժամանակին և ճիշտ անձնավորության հետ: Դու պարտավորություններ ես ստանձնում: Դու ասում ես. «Ես իսկապես պատրաստ եմ այս քայլին իմ կյանքում»: Ովստերն օգնում են ինձ, որովհետև ես գիտեմ, որ գործում եմ ըստ հավուր պատշաճի: Եվ ես գիտեմ, որ եթե գործեմ այնպես, ինչպես Երկնային Հայրն է ցանկանում, ես ավելի երջանիկ կլինեմ:

Զոնաթան Թոմասինի, Ֆրանսիա. Ես ազնիվ չեմ լինի իմ և Սատոն հետ, եթե դրժեմ իմ ուխտերը: Սմուսական ուխտերն օգնում են ինձ տեսնել, որ ես ցանկանում եմ իմ կնոջ համար լինել այն մարդը, ով ունի ինքնատիրապետում, պատրաստվել է լինել լավ ամուսին և իրեն մաքուր է պահել:



**ԶԱՓԱՆԻՇ
ԵՎ
ԲԱՆԱԼԻ**

«Չափանիշ

է մնում ամուսնությունից առաջ զսպվածություն դրսևորելը, իսկ ամուսնության մեջ՝ լիակատար հավատարմություն պահպանելը: Որքան էլ մեզ համարեն ոչ ժամանակակից, որքան էլ չափանիշները նվաստացվեն, որքան էլ մյուսները տեղի տան, մենք տեղի չենք տա, մենք չենք կարող տեղի տալ: . . .

Ձեզ շնորհվել է Սուրբ Հոգու պարգևը: Որոշումներ կայացնելիս դուք հաստատման կամ զգուշացման հուշում կստանաք: Եթե մոլորվել եք և կորցրել ձեր ուղին, Սուրբ Հոգին կարող է հեռացնել ձեզ չարից և ետ բերել: Երբեք մի մոռացեք, որ դուք Աստծո որդիներն ու դուստրերն եք: Սատանան չի կարող մշտապես բանտարկել ձեզ: Դուք միշտ ունեք բանտի դուռը բացող ապաշխարության բանալին»:

Նախագահ Բոյդ Զ. Փաքեր, Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, "The Standard of Truth Has Been Erected," Liahona, Nov. 2003, 26:

Աշխարհում կան, կարծես, համոզիչ և բարդ շատ պատճառաբանություններ, թե ինչու է մաքրաբարոյության օրենքը հնացած: Ի՞նչ պատճառաբանություններ եք լսել և ինչպե՞ս եք արձագանքել, երբ խոսքը վերաբերվել է ձեր չափանիշներին:

Լիզի. Ես հիշում եմ ավագ դպրոցում ինչպես էր մեր ուսուցիչը մեզ «խորհուրդ» տալիս: Նա ամուսնացել էր ավագ դպրոցում, և այն վատ ավարտ էր ունեցել, և նա հիմնականում ասում էր, որ «շատ ձկներ կան ծովում»: Նա ի նկատի ուներ, որ շատ բաներ կան փորձելու, շատ թեկնածուներ կլինեն: Ես հիշում եմ, ապշել էի, որ նման բան էր ասում իմ ուսուցիչը: Դրանից հետո ես մտածել եմ՝ այո, կան շատ մարդիկ, սակայն ես չեմ ցանկանում շատ մարդկանց:

Ջոնաթան. Իմ ծանոթ մի աղջիկ մի անգամ ասաց, որ երբ ինքը գտնվում է հարաբերության մեջ, նա ցանկանում է իմանալ, արդյոք իրենք սեռական առումով համատեղելի են: Նա մի օրինակ բերեց, որ ժամադրվել է մի տղայի հետ, որին հավանում էր, և սեռական հարաբերություն ունենալուց հետո, զգացել էր, որ իրենք համատեղելի չէին և այդ ընկերությունը ավարտվել էր: Նա օգտագործեց այդ փորձառությունը, որպեսզի հիմնավորեր իր խոսքը, և դա շատ համոզիչ թվաց: Ի վերջո, ես բացատրեցի նրան, որ ես հավատում եմ, որ դուք կարող եք միմյանց շատ լավ ճանաչել այլ եղանակներով, այդ դեպքում վստահություն կկառուցեք, պահելով մաքրաբարոյության օրենքը, և ամուսնանալիս ավելի մեծ համատեղելիություն կունենաք:

Անյա. Սմենատարածված պատճառաբանությունը, որ ես միշտ լսում եմ, այն է, որ երբ երկու մարդիկ սիրում են իրար, դա նորմալ է, սեռական հարաբերությունը լոկ սիրո արտահայտում է:

Մարտին. Երբ ես լսում եմ «Մենք սիրում ենք միմյանց»

արդարացումը, միտքս է գալիս Նախագահ Սպենսեր Վ. Քլեմբալի խոսքերը: Նա ասում է, որ շատ հաճախ կիրքն է սողոսկում դռնից, երբ մարդիկ մտածում են, որ իրենք սիրահարված են:³ Այդպես է լինում շատ մարդկանց հետ, երբ նրանք սեռական հարաբերություն են ունենում մինչև ամուսնությունը՝ դա կիրք է, չնայած որ նրանք մտածում են, որ սիրում են միմյանց: Եթե նրանք իսկապես սիրում են միմյանց, նրանք ավելի շատ կհարգեն միմյանց, կօգնեն միմյանց և կհասկանան, որ սեռական կապի համար ժամանակ կա: Եվ, իմ կարծիքով, մինչամուսնական սեռական կապը ցույց է տալիս, որ դուք իրականում չեք օգնի միմյանց այնքան, որքան կարծում եք: Որովհետև եթե դուք չեք կարողանում օգնել միմյանց ձեր չափանիշներով ապրել այժմ, ուրեմն ինչպե՞ս կարող եք օգնել միմյանց հետագայում:

Քեյլի. Որոշ մարդիկ, ովքեր չեն հավատում Աստծուն, մտածում են, որ Աստվածաշունչը և մաքրաբարոյության օրենքը հնացած են: Ավագ դպրոցում ես ընկերներ ունեի, ովքեր հիմնականում աթեիստ կամ ագնոստիկ էին, և ես մի ընկերուհի ունեի, որը իրականում չէր հավատում իր կրոնի ուսմունքներին: Նա պարզապես ապրում էր իր ցանկություններով, ինչն իր կարծիքով ճիշտ էր իր համար: Նրա կարծիքով սեռական մտերմությունը ինքնաբավարարում է, և անցանկալի է այն, ինչը կսահմանափակի այդ բավականությունը:

Կարծում եմ, ընկերուհիս զարմացած էր, որ ես հավատում էի Աստվածաշնչին և Աստծո պատվիրաններին, սակայն ես փորձեցի օգնել նրան հասկանալ, որ ես պատվիրանները չեմ համարում սահմանափակում: Ես ապրում եմ դրանցով, որովհետև դրանք ինձ երջանկություն են բերում: Թեպետ մենք համաձայնության չենք կնք, նա հարգեց ինձ, և մենք լավ ընկերուհիներ մնացինք:

Լիզ. Այդ բոլոր փաստարկները իրենց պատասխաններն ունեն ավետարանի հիմնական սկզբունքներում: Երբ հավատում ես, որ Աստված կա, երբ հավատում ես, որ ավելի մեծ ծրագիր և պատասխանատվություն կա, որ կա մեկը, որը սիրում է քեզ և հոգ է տանում քեզ համար, և երբ դու հավատում ես, որ դու ունես ներքին արժեք, որովհետև դու Աստծո զավակն ես, այդ դեպքում դու քեզ ավելի արժեքավոր կհամարես և կհարգես քո մարմինը: Երբ մարդիկ չգիտեն կամ չեն հավատում այդ սկզբունքներին, նրանք նայում են մյուս մարդկանց կամ վայրերին, որ տեսնեն ինչ արժեք ունեն նրանք:

Ի՞նչ ազդեցություններ կամ օրինակներ են օգնել ձեզ պարտավորվել մաքրաբարոյության օրենքով ապրել:

Հիփ. Ես սենյակի հարևան ունեի, որը նշանված էր: Մի օր մենք խոսում էինք իր մոտավորապես ամուսնության մասին, և մեկը հարցրեց.

«Ես պատվիրանները չեմ դիտում որպես սահմանափակումներ. ես ապրում եմ դրանցով, որովհետև դրանք ինձ երջանկություն են բերում:»

«Ինչպիսի՞ պարտավորություններ եք ստանձնել, որոնք կօգնեն ձեզ երկուսիդ ամուր մնալ»: Նա պատասխանեց. «Մաքրաբարոյության օրենքը խախտելը կկործանի մեր հարաբերությունը: Այնպես որ մենք որոշել ենք, որ չենք անի այն, ինչը չէինք անի եպիսկոպոսի կամ մեր ծնողների առջև»: Դա մինչ օրս տպավորել է ինձ:

Չոնաթան. Այժմ երբ ես երիտասարդ չափահաս եմ, հեշտ է լսել մարգարեներին և խորհել Եկեղեցու ղեկավարների խոսքերի շուրջ: Մինչ այդ, թեև շատ պատասխանատվություն է ընկած մեր ծնողների և ընտանիքների վրա: Եկեղեցին կարող է տեղեկություն և շատ հրաշալի բաներ տալ, սակայն իմ ընտանիքի օրինակն իսկապես օգնել է ինձ հասկանալ, որ ավետարանը հրաշալի բան է, և այն երջանկություն է բերում:

Լիզ. Երբ ես մեծանում էի, Եկեղեցում իմ տարիքի մի անդամ էր ապրում մեկուկես ժամ հեռավորության վրա, այնպես որ իմ դպրոցում այլ անդամներ չկային: Բայց ես իրոք գնահատում եմ այն, որ թեև ես մենակ էի, իմ ղեկավարները միշտ գալիս էին Միացյալին, նրանք միշտ գալիս էին սեմինարիային, նրանք միշտ գալիս էին ուսուցանելու իմ դասը, ամեն անգամ: Նրանք երբեք չէին ասում՝ «Դե մենք մի ուսանող ունենք, այնպես որ դաս չենք անի»: Վստահ եմ, որ շատ բան եմ սովորել, Բայց ինձ վրա տպավորվել է այն, որ իմ ղեկավարները հետևողական էին: Եվ նրանց շնորհիվ ես Հոգին զգալու հնարավորություններ եմ ունեցել:

Ես կարծում եմ, մենք երբեք չենք կարող լիովին գնահատել Սուրբ Հոգու պարզևը: Թեև կային իմ ծնողները, իմ ընտանիքը և իմ ղեկավարները, երբ ես դպրոցում էի, ես մենակ էի: Բայց Հոգին ինձ հետ էր: Այնպես որ, այն ինչը պահում է Հոգին որևէ մեկի կյանքում, հրաշալի ազդեցություն կլինի, որը կօգնի այդ անձնավորությանը պահել մաքրաբարոյության օրենքը:

Լիզի. Իմ ամենամեծ տպավորություններից մեկը եղել է վկայություն ձեռք բերելը: Եթե դու ամուր արմատներ չես գցել ավետարանում, իրականում շատ հեշտ է այլ ուղով գնալը: Բայց եթե դու սկսում ես վստահ լինելով, որ ամուր հիմք ունես ավետարանում, մնացած ամեն ինչ իր հունով կընթանա:

Հիփ. Եթե ուզում ես ֆիզիկապես ուժեղ լինել, մարզվում ես, իսկ երբ մարզվում ես, տեսնում ես արդյունքը: Եթե մենք դա կիրառում ենք հոգևոր ոլորտում, մենք պետք է մարզվենք հոգևոր առումով: Հոգեպես մարզվելու համար բազմաթիվ բաներ կան անելու, որոնք են սուրբ գրություններ կարդալը և անել հնարավորինս ամեն ինչ Հոգին ունենալու համար: Մենք նաև պետք է արդար նպատակներ դնենք և աշխատենք այդ ուղղությամբ: Բայց այդ նպատակներին մենք չենք կարող հասնել միայնակ: Տեղը պետք է լինի մեզ հետ: Նրանից մենք ստանում ենք ուժ և Հոգին՝ հաղթահարելու մեր դժվարությունները: Այնուհետև մենք կարող ենք հետևել Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնի խորհրդին:

«Թույլ մի տվեք, որ կիրքը կործանի ձեր երազանքները: Դիմակայեք գայթակղությանը:

Հիշեք Մորմոնի Գրքից այս խոսքերը. «Մմբաբարությունը երբեք երջանկություն չի եղել»:⁴ ■

ՀՂՈՒՄԵՐ

1. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Liahona*, նոյ. 2010, 129:
2. Stu Jeffrey R. Holland, "Of Souls, Symbols, and Sacraments," in *Brigham Young University 1987–88 Devotional and Fireside Speeches* (1988), 77–79:
3. «Մեղանչելու պահին մի դռնից դուրս է մղվում մաքուր սերը, միևնույն ժամանակ մյուս դռնից տղոսկում է կիրքը: Այդ ժամանակ հրապուրանքը փոխարինվում է մարմնական ցանկությամբ և անկառավարելի կրքով: Ընդունվել է մի համոզմունք, որը սատանան այնքան շատ է ցանկանում հաստատել, այն է՝ արդարացվում են անօրինական սեռական հարաբերությունները» (*Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 279):
4. Thomas S. Monson, "Be Thou an Example," *Liahona*, May 2005, 113.

«Ի՞նչ է նշանակում պատվել Աստծո քահանայությունը»:

Քահանայությունը գործություն է, որով Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը կատարում են Իրենց աշխատանքը: Դա Երկրի վրա գոյություն ունեցող ամենահզոր ուժն է: Քահանայությամբ ծեսեր են կատարվում, օրհնություններ են տրվում, տաճարային աշխատանք է իրականացվում, ավետարան է քարոզվում և հրաշքներ են գործվում:

Քահանայություն կրողները ներկայացնում են Փրկչին, այնպես որ նրանք պատվում են քահանայությունը, կատարելով այն, ինչ Փրկիչը կկատարեր, եթե այստեղ լիներ: Նրանք պատվում են քահանայությունը՝ արժանի ապրելով դրան: Նրանք պատվում են քահանայությունը իրենց հագուստով, գործով, խոսքով, ծառայությամբ և անգամ՝ մտքերով:

Երիտասարդ կանայք նաև կարող են պատվել քահանայությունը, պահելով իրենց մկրտության ուխտերը և ակնածանքով մասնակցելով քահանայության արարողություններին, ինչպիսիք են՝ հաղորդությունը կամ տաճարային աշխատանքը: Նրանք կարող են աջակցել իրենց հայրերին, եղբայրներին և քահանայության այլ կրողներին, որպեսզի պատվիրանները պահեն և արժանի ապրեն իրենց քահանայական պարտականությունները կատարելու համար:

Մենք բոլորս կարող ենք պատվել քահանայությունը, հավատարիմ ծառայելով մեր կոչումներում, հարգելով քահանայություն կրողներին, հարգելով կատարվող աշխատանքը, ծեսերն ու ուխտերը, որ այն օգնում է մեզ ստանալ:

Գործեր որպես Աստծո ներկայացուցիչ



Երբ մենք սկսում ենք հասկանալ, թե որքան հրաշալի է, որ Աստված տվել է այդ պարզև, այդ ժամանակ քահանայությունը պատվելը դառնում է հեշտ՝ գործիք երախտագիտությամբ և հարգիք այն գործությունը, որ վստահվել է քեզ: Հարցրու ինքդ քեզ՝ արդյո՞ք իմ շրջապատում գտնվողները իմացել են, որ ես կրում եմ Աստծո գործությունը, Նրա մասին ավելի շատ, թե՞ ավելի քիչ են մտածել: Պատվել

քահանայությունը նշանակում է գիտակցել, որ դու Աստծո ներկայացուցիչն ես, և կատարել առավելագույնը, հարգանք դրսևորելով քո հանդեպ Նրա ցուցաբերած վստահության համար:

Մելսոն Ռ., 19 տարեկան, Կոլորադո, ԱՄՆ

Եղեք առաքինի



Որպես երիտասարդ աղջիկ ես կարող էի ասել, որ կարիք չունեմ պատվելու քահանայությունը: Բայց բոլոր երիտասարդ կանայք պետք է պատվեն այն: Մենք պատվում ենք քահանայությունը, լինելով առաքինի: Մենք պատվում ենք քահանայությունը, օգնելով երիտասարդ տղաներին ունենալ մաքուր մտքեր: Մենք հագնվում ենք համեստ և խոսում ենք մաքուր լեզվով: Այդպիսով, մենք օգնում ենք երիտասարդ տղաներին պատվել քահանայությունը, և ուրեմն մենք ևս պատվում ենք քահանայությունը:

Մարիսսա Բ., 14 տարեկան, Արիզոնա, ԱՄՆ

Կատարեք Աստծո հանդեպ ձեր պարտականությունը

Իմ կարծիքով, քահանայությունը պատվելու հիմնական եղանակն է՝ անել այն, ինչ Տերն Ինքը կաներ այստեղ Երկրի վրա, որովհետև մենք ներկայացնում ենք Հիսուս Քրիստոսին: Դա նշանակում է՝ մենք կատարում ենք բոլոր պարտավորությունները, պարտականություններն ու խոստումները, որ տվել ենք Աստծուն քահանայությանը կարգվելիս: Պատվելով Նրա քահանայությունը, մենք հետևում ենք Նրա պատվիրանին՝ «Վեր կացեք և շողացեք, որպեսզի [մեր] լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար» (Վևու 115.5): Մենք օգնում ենք մյուսներին իմանալ, որ Աստծո շատ լիազորված ծառաներ կան Երկրի վրա:

Բիանկա Բ., 18 տարեկան, Մանսոն Դոմինիգո, Դոմինիկյան Հանրապետություն

Հարգանք դրսևորեք քահանայության հանդեպ

Ես կարծում եմ, որ քահանայությունը պատվելը նշանակում է հարգանք և վստահություն ունենալ քահանայությունն օգտագործելիս: Երբ դուք ունեք Ահարոնյան Քահանայության անդամներ, ովքեր հարգում են քահանայությունը և հաղորդությունը, ինչպես մենք ենք հարգում մեր ծխում, ուրեմն դուք հաղորդությունը բաժանելու և պատրաստելու հրաշալի փորձ ունեք: Մենք բոլորս հագնում ենք սպիտակ վերնաշապիկ և կրում ենք փողկապ: Մենք գիտենք, որ դա մեծ ազդեցություն է գործում ծխում, և այն ազդեցություն է գործել ինձ վրա: Ես գիտեմ, որ քահանայություն կրելը ինձ հետ տեղի ունեցած լավագույն բանն է:

Հանսեն Բ., 15 տարեկան, Տեխաս, ԱՄՆ

Հիշեք Փրկչին



Քահանայությունը Աստծո միակ ճշմարիտ գործությունն է Երկրի վրա և ցույց է տալիս մեզ Իր մոտ վերադառնալու ուղին: Երբ մենք մտածում ենք քահանայությունը պատվելու մասին, մենք մտածում ենք Նախագահ Թոմաս Ս. Մոնտանի և մյուս Առաքյալների ուսուցումներին հետևելու մասին: Քահանայությունը լավագույնս պատվելու ուղին է՝ կատարել այն, ինչ մեզ ուսուցանվել է, որը թույլ կտա մեզ հիշել Փրկչին: Երբ մենք հիշենք Նրան, Նրա Հոգին մեզ հետ կլինի: Հոգին ունենալը թույլ է տալիս մեզ պահել նպատակը և լինել ավետարանի չափանիշների օրինակ:

Կիրակնօրյա Դպրոցի դասարան՝
Կայլի Բ., Ջեյթեն Բ., Ջոզեֆ Բ.,
Ալեքսանդրա Ռ., Կայլի Վ., Ալիշա Ֆ. և
Հայլի Վ. (չկա նկարում), Ադաիտ, ԱՄՆ

Մի վտանգեք ձեր չափանիշները

Պատվել քահանայությունը նշանակում է չդնել ձեզ այնպիսի իրավիճակներում, որտեղ դուք գուցե վտանգեք ձեր չափանիշները: Երբ մենք սեմինարիայում ուսումնասիրում էինք Հին Կտակարանը, Ծննդոց ԼԹ-ում կարդացինք Եգիպտոսի Հոփսեփի մասին, որը պատվեց իր քահանայությունը, փախչելով Պետափրեսի կնոջ գալթակությունից:

Երիտասարդ կանայք կարող են օգնել մեզ պատվել քահանայությունը՝ հետևելով *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի չափանիշներին և հազնվելով համեստ:

Ջոզեֆ Բ., 16 տարեկան, Տեխաս, ԱՄՆ

Պահպանեք Քահանայությունը

Պատվել քահանայությունը ինձ համար նշանակում է, որ երիտասարդ տղաները հարգեն և պահպանեն այն պարզը, որ Տերը տվել է իրենց: Երբ ես տեսնում եմ երիտասարդ տղան հարգում է քահանայությունը, ես ավելի շատ խաղաղություն եմ զգում և ավելի շատ եմ հարգում այդ երիտասարդին: Երկնային Հայրը վստահել է

նրան քահանայությունը, այնպես որ ես կարծում եմ երիտասարդի պարտականությունն է ոչ միայն պահել, այլև պահպանել այդ քահանայությունը:

Մեյլինդա Բ., 16 տարեկան,
Վաշինգտոն, ԱՄՆ



ԴԱ ՍՈՒՐԲ Է

«Երիտասարդ տղաներ ու աղջիկները . . . պետք է պատվեն [քահանայությունը] և ընդունեն այն որպես սուրբ մի բան, . . .

քանզի այդ իշխանության շնորհիվ է, որ ավետարանի արարողությունները կատարվում են ողջ աշխարհում և ամեն սուրբ վայրում, և առանց քահանայության դրանք չեն կարող կատարվել: Ովքեր կրում են այդ իշխանությունը, պետք է Նաև պատվեն այն ներքուստ: Նրանք պետք է այնպես ապրեն, որ արժանի լինեն իրենց վստահված այդ իշխանությանը»:

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ (1838–1918),
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները.
Ջոզեֆ Ֆ. Սմիթ (1998), 144:

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ի՞նչ եմ ես ասում ոչ անդամներին, ովքեր հարցնում են, թե ինչու Եկեղեցու որոշ անդամներ չեն ապրում մեր չափանիշներով»:


Ձեր պատասխանն ուղարկեք մինչև նոյեմբերի 15-ը հետևյալ հասցեով՝
liahona@ldschurch.org կամ՝

Liahona, Questions & Answers 5/12
50 E. North Temple St., Rm.2420
Salt Lake City, UT 84150-0024, USA

Պատասխանները կարող են կրճատվել կամ պարզեցվել:

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր Է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծովափ կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը, և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (Է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

ԵՂԻՐ ԻՄԱՍՏՈՒՆ ԵՎ ԵՂԻՐ ԸՆԿԵՐ





**Երեց
Ռոբերտ Դ. Հելյս**

Տասներկու
Առաքյալների
Քվորումից

*Սովորիր և ձեռք բեր գիտելիք ու իմաստություն երիտասարդ տարիքում:
Բարձրացրու և ամրացրու քո շուրջը գտնվողներին:*

Եթե իրոք ցանկանում ես ունենալ լավ կյանք, պետք է հետևես սուրբ գրությունների խորհրդին: «Սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները» (Ամմա 37.35): Սովորելու ընթացքը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Մենք բոլորս սկսում ենք հիմնական բանականությունից: Մենք դրան ավելացնում ենք գիտելիք՝ դասարանում սովորելով և կարդալով: Մենք ավելացնում ենք կյանքի փորձառությունները: Այնուհետև մենք անցնում ենք չորրորդ քայլին՝ իմաստությանը: Ահա այդտեղ աշխարհը դադարում է: Բայց մենք ունենք այն, ինչ աշխարհը չունի: Մկրտվելով և հաստատվելով մենք ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը: Կախված մեր հավատարմությունից հանդեպ օրենքները, ծեսերը և մկրտության ժամանակ կապած ուխտերը, կանոնավոր և

հաճախակի հաղորդության ժողովի պարտավորությունները և քահանայության և տաճարային ուխտերը, մենք միշտ կունենանք Սուրբ Հոգու պարգևը, որը կուսուցանի և կուղղորդի մեզ: Հոգին առաջնորդում է մեզ գործելու և կատարելու: Մենք բոլորս ունենք հոգևոր պարգևներ և տաղանդներ (տես ՎնՈւ 46):

Իմաստությունը և հոգևոր պարգևները միասին օգնում են մեզ սրտով հասկանալ: «Իմաստության սկիզբն է՝ «Իմաստություն ստացիր». և քո ամեն ստացումաճքի հետ հանձար ստացիր» (Առակաց Դ.7): Կարևոր է զարգացնել իմաստություն և հասկացողություն քո երիտասարդ տարիքում:

Իմ պատանեկության տարիներին տեղի ունեցած մի դեպք ինձ իմաստության վերաբերյալ ինչ-որ բան սովորեցրեց: Ես քաղաքի տղա էի, և հայրս ինձ ուղարկեց աշխատելու հորեղբորս ագարակում, որը գտնվում էր արևմտյան Յուտայում: Այնտեղ ես այդպես էլ չհասկացա, թե ինչու էին անասունները թողած հեկտարներով արոտավայրը, իրենց գլուխը անցկացնում փշոտ մետաղալարերի միջով, որպեսզի ուտեին ցանկապատի մյուս կողմում աճած խոտը: Երբևէ մտածե՞լ եք, թե այդ հարցում որքան նման ենք մենք: Մենք

միշտ ձգտում ենք տեսնել ինչ կա սահմանից այն կողմ, հատկապես, երիտասարդ տարիքում: Որպես մարդկային էակներ, բնական մարդ, մենք հակված ենք խթելով փշալարերով ցանկապատը մեր գլուխն անցկացնել դրա միջով: Ինչո՞ւ ենք մենք դա անում:

Մենք կարող ենք այնքան շատ ուրախություն ունենալ այս կյանքում առանց հրելով սահմանները մեծացնելու: Հիշեք՝ «Իմաստությունը սկիզբն է», և այդ իմաստությամբ՝ «Անզգամների ճանապարհը մի մտնիր. և մի ման գար չարերի ճանապարհում: Թող տուր նորան, նոր վրա մի գնար, նորանից խոտորիր և անցիր» (Առակաց Դ.14-15): Մի մոտեցեք: Ձեր գլուխը մի խոթեք փշոտ ցանկապատից դուրս:

Դուք ունե՞ք լավ ընկերներ:

Դուք կնկատեք, որ իմաստության այս դասերից բացի Առակաց գիրքը նաև ուսուցանում է լավ ընկերների ընտրելու մասին. «Անզգամների ճանապարհը մի մտնիր. և մի ման գար չարերի ճանապարհում» (Առակաց Դ.14): «Որդեակս, նրանց հետ ճանապարհ մի գնար. ոտքդ ետ պահիր նրանց շավիղներիցը. որովհետև նրանց ոտները չարության են վազում» (Առակաց Ա.15-16):

Ինչպե՞ս եք իմանում, որ լավ ընկերներ ունեք: Ես ձեզ կտամ երկու խորհուրդ: Եթե կիրառեք այդ խորհուրդերը, դուք երբեք չեք գնա օտար ուղիներով և չեք հեռանա «նեղ ու անձուկ արահետից, որը տանում է դեպի հավերժական կյանք» (2 Նեփի 31.18):

1. **Լավ ընկերների հետ դյուրին է դառնում պատվիրաններով ապրելը, երբ դուք նրանց հետ եք:** Ճշմարիտ ընկերը զորացնում է ձեզ և օգնում է ձեզ ապրել ավետարանի սկզբունքներով, որոնք կօգնեն ձեզ համբերել մինչև վերջ:
2. **Ճշմարիտ ընկերը ձեզ չի ստիպի ընտրել իր և Տիրոջ ուղիների միջև,** դրանով իսկ հեռացնելով ձեզ նեղ ու անձուկ արահետից: Հակառակորդը շրջում է այս երկրի վրա և այնքան շատ է ցանկանում, որ մեզանից յուրաքանչյուրը տապալվի: Եթե ձեր ընկերները ձեզ տանում են ամբարշտության ճանապարհով, հեռացեք նրանցից այժմ: Խելամտորեն ընտրեք ձեր ընկերներին:

Ինչպիսի՞ ընկեր եք դուք:

Այժմ դժվար հարց եմ տալիս՝ ինչպիսի՞ ընկեր եք *դուք*:

Կյանքում կա ավելին, քան ինքներս մեզ փրկելը: Մեր հանձնառությունն է՝ բարձրացնել և ամրացնել մեր շուրջը գտնվողներին: Տերը ցանկանում է, որ մենք բոլորս վերադառնանք Իր մոտ:

Դուք փարոս եք, և ընկած փարոսից ավելի վտանգավոր բան չկա: Հիշեք, թե ով եք դուք՝ դուք լույս եք աշխարհի համար, ձեր ընկերների, ձեր եղբայրների և քույրերի համար: Նրանք ձեզ են նայում:

Առակաց Դ-ն շարունակում է.

«Բայց արդարների ճանապարհը



Եղեք լույս աշխարհի համար, առաջնորդեք և ուղղորդեք ձեր շուրջը գտնվողներին արդարության ուղիներով: Նրանք իրենց հույսը դրել են ձեզ վրա՝ որպես հավատարիմ փարոս:

Ծագող լույսի պես է. որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում:

Ամբարիշտների ճանապարհը խավարի նման է, նրանք չգիտեն, թե ինչով են գայթակղում (հատվածներ՝ 18–19):

Նրանք իրականում չգիտեն, թե ինչու են սայթաքում: Նրանք չունեն ոչ լույս, ոչ ուղղություն:

Գիտե՞ք, թե ինչ է նշանակում հույսը դնել լույսը մարած փարոսի վրա: Խավար է տիրում, և մենք կորչում ենք:

Երբ օդաչուն կորցնում է էլեկտրական հոսանքը, ցուցիչները կանգ են առնում, բացի առանց

հոսանքի աշխատող ցուցիչներից: Նա իրեն լիովին անօգնական է զգում՝ գտնվելով մեկտեղանի ռմբակոծչի մեջ 12200 մ. բարձրության վրա, ամպերով շրջապատված: Նա չունի ոչ մի ուղղություն: Ես նման վիճակում եմ հայտնվել, և ուրախ եմ, որ այստեղ եմ: Ես այդ դեպքը երբեք չեմ մոռանա: Դուք ևս գուցե մի օր նման իրավիճակում հայտնվեք: Ընկած փարոսից ավելի վտանգավոր բան չկա, հատկապես երբ հույսդ այդ լույսն է:

Արդյո՞ք ինչ-որ մեկը ուղղություն ստանալու համար հույսը դրել է ձեր լույսի վրա: Եղեք լավ օրինակ: Եղեք լույս աշխարհի համար, առաջնորդեք և ուղղորդեք ձեր շուրջը գտնվողներին արդարության ուղիներով: Նրանք իրենց հույսը դրել են ձեզ վրա՝ որպես հավատարիմ փարոս: Եղեք այնտեղ, երբ ինչ-որ մեկը ձեր կարիքն ունի:

Հոգին առաջնորդող լույս է, որն ուրախություն և երջանկություն է պարգևում: Թող որ երբեք մեզ համար չմերժվի Հոգին՝ մեր վարքի պատճառով: Օ, ինչպես եմ աղոթում, որ մենք երբեք չլինենք միայնակ և տխուր այս «մութ ու մռայլ» աշխարհում (1 Նեփի 8.4):

Թող Տիրոջ օրհնությունները լինեն ձեզ հետ, երբ ձգտեք սովորել և ձեռք բերել գիտելիք և իմաստություն երիտասարդ տարիքում: Թող որ դուք նաև իմաստություն և ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ հասկացողություն ստանաք ձեր սրտում՝ հնազանդությամբ և նաև Սուրբ Հոգու լույսով: Եղեք լավ ընկեր: Բարձրացրեք և ամրացրեք ձեր շուրջը գտնվողներին: Ձեր ներկայությամբ աշխարհն ավելի լավ վայր դարձրեք: Օգնեք ձեր ընկերներին մնալ նեղ ու անձուկ ճանապարհին, համբերեք մինչև վերջ և պատվով վերադարձեք: ■

ՀԱԳՈՒՍՏ պարի համար

Քրիսթի Մարտին

Ես գայթակղվեցի հետևել մյուսներին, բայց այդ ժամանակ հասկացա, որ փոխարենը պետք է օրինակ ծառայեի:

Երբ դեռահաս էի, երբեմն դժվար էր լինում ավետարանով ապրել: Մեր տարածքում Եկեղեցու շատ անդամներ չկային, իսկ ընկերներս, ովքեր Եկեղեցու անդամներ չէին, երբեմն դժվարացնում էին ինձ համար ճիշտ ուղու վրա մնալը:

«Դու պետք է սա հագնես, սա կընդգծի քո աչքերի գույնը, - ասաց ընկերուհիներիցս մեկը նախքան պարելու գնալը: Նա այդ օրվա համար ինձ տվեց իր զգեստը, որը թեքեր չունեի: Ես որոշեցի վրայից ժակետ հագնել:

Պարահրապարակում, բացի ինձանից, ոչ ոք թեքերով զգեստ չէր հագել, և ես զգում էի ինձ առանձնացած: Երբ սկսեցի շատ շոգել, ընկերներս ասացին, որ ուղղակի պետք է հանեմ ժակետը և այդպես ավելի լավ տեսք կունենամ:

Երբ արդեն ինձ համար արդարացրել էի ժակետը հանելը, հիշեցի իմ հայրապետական օրհնությունը: Իմ օրհնության մեջ ասվում էր, որ ես շատ գայթակղություններ կունենամ, իսկ եթե տրվեմ դրանց շատ անհատներ կհետևեն ինձ: Այդ ժամանակ ես գիտակցեցի, որ պետք է մնամ ճիշտ ուղու վրա, ոչ միայն իմ, այլև մյուսների համար, ովքեր ինձ էին նայում: Ես որոշեցի չհանել ժակետը:

Երբեմն ինձ վրա ծիծաղում էին, որ չէի անում այն, ինչ մյուսներն էին անում, բայց ես մնացի ամուր և դրա համար օրհնվեցի: Ավելի ուշ ես իմացա, որ շատերն էին ինձ նայել: Իմ ընկերներից ոմանք անգամ ասացին ինձ, որ հարգել են ինձ իմ չափանիշներին հետևելու համար: Նրանք ներողություն խնդրեցին, որ ինձ համար բարդացրել էին պահելու այն, ինչը

բոլորը դեռևս անում էին ավագ դպրոցում:

Քանի որ հետևել էի Եկեղեցու չափանիշներին և փորձել էի օրինակ ծառայել, ես կարողացա միսիայում ծառայելու փորձառություն ունենալ և ավետարանն ուրիշներին ուսուցանել: Ես չէի կարող ազդեցություն գործել մյուսների վրա, եթե ինքս ճիշտ ուղու վրա չմնայի: ■



ՀԱԳՈՒՍՏԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

«Երբեք մի ցածրացրեք հագուստի ձեր չափանիշները: Հատուկ առիթ մի օգտագործեք արդարացման համար, որ անհամեստ լինեք... Երիտասարդ կանայք պետք է խուսափեն... հագուստից, որը ուներ չի ծածկում»:

Երիտասարդներին զորացնելու համար (գրքույկ, 2011), 6, 7:

Հագուստ և արտաքին տեսք՝ «ԹՈՂ ԸՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ»



Մերի Ն. Քուք

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդակցական

Որպես Քրիստոսի ներկայացուցիչներ, մենք հարգանք ենք տալով մեր մարմնի հանդեպ «Բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում»՝ ապրելով որոշակի չափանիշներով:

Քիմը միշտ համեստ հագուստ է կրել: Վերջերս ես նրան հարցրեցի, թե իր կարծիքով, որն է համեստ շրջագգեստը, համեստ վերնաշապիկը և համեստ լողազգեստը: Հագուստի երկարության և կտրվածի ճշգրիտ չափերը որոշելու փոխարեն մենք քննարկեցինք համեստությունը բնորոշող սկզբունքները և համեստ, միևնույն ժամանակ, հրապուրիչ հագուստ գտնելու դժվարությունները: Մենք աշխույժ զրուցեցինք, հերթով նշելով շրջագգեստը երկարացնելու մի քանի եղանակներ: Ի վերջո, Քիմն ասաց. «Եթե ես առաջին անգամ փորձելով զգեստը, ինձ հարմարվետ չեմ զգում, նշանակում է դա համեստ չէ, և ես հարմարվետ չեմ զգա դրանում: Ես հասկացել եմ, որ չպետք է գնեմ այդպիսի հագուստ, և պարզապես դնում եմ այն իր տեղը»:

Քանի որ Քիմը ձգտում է ապրել արժանիորեն, Սուրբ Հոգին կառաջնորդի նրան հագուստի ընտրության հարցում: Նա լիովին ապրում է համեստության չափանիշներով և չի փորձում փոխոյնել հագուստի և արտաքին տեսքի կանոնները: Նա հասկանում է, որ իր մարմինը տաճար է, (տես Ա Կորնթացիս Գ.16) և նա պարտավոր

է հոգ տանել, պաշտպանել և պատշաճ ձևով ծածկել իր մարմինը:

Տաճարը կառուցելիս մեծ ուշադրություն է դարձվում, որպեսզի այն պաշտպանված և գեղեցիկ հարդարված լինի՝ ներքուստ և արտաքուստ: Տաճարները նախագծելու հիմնական բանալին հասկանալն է, որ տաճարը *ներկայացնում է Տիրոջը՝ դա Նրա տունն է: Մենք հարգում ենք* տաճարները որպես սուրբ կառույցներ, որտեղ գնում են միայն նրանք, ովքեր արժանի են: Մենք *սկսածանքով* ենք վերաբերվում տաճարներին, որովհետև սուրբ ծեսերն ու ուխտերը, որոնց մենք մասնակցում ենք, մեզ հնարավորություն են տալիս վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ:

Ձեր մարմինը ավելի թանկ է, քան ամենահիասքանչ տաճարը: Դուք Աստծո սիրելի որդին կամ դուստրն եք: Այդ նույն սկզբունքները՝ լինել ներկայացուցիչ, հարգանք և ակնածանք դրսևորել, առավել ևս վերաբերում են ձեր մարմնի մասին հոգ տանելուն և այն պաշտպանելուն:

Լինել ներկայացուցիչ

Ամեն շաբաթ, ընդունելով հաղորդությունը մենք մեզ վրա ենք վերցնում Փրկչի անունը: Մենք Նրա ներկայացուցիչներն ենք երկրի վրա: *Երիտասարդներին զորացնելու համար* զբոսայգում տրված ուղեցույցներից մեկն ասում է. «Ձեր հագուստով և արտաքին տեսքով դուք կարող եք ցույց տալ [Տիրոջը], որ գիտեք, թե որքան թանկ է ձեր մարմինը: Դուք կարող եք ցույց տալ, որ դուք Հիսուս Քրիստոսի աշակերտն եք և սիրում եք Նրան»:¹

Մի երիտասարդ աղջիկ կարդալով այս սահմանումը որոշեց, որ չի ցանկանում չնչին չափով իսկ մոտենալ անհամեստության գծին: Իր զգեստապահարանից նա անմիջապես հեռացրեց այն ամենը, ինչը չէր համապատասխանում Փրկչի ներկայացուցիչը լինելուն: Նա ասաց. «Ես խելացի կլինեմ, եթե անգամ խանութում չփորձեմ այն, ինչը գիտեմ, որ չպետք է կրեմ: Ինչո՞ւ գայթակղվեմ»: Ներկայացուցիչ լինելու սկզբունքն օգնեց նրան ամուր Վճռակալություն դրսևորել:

Հարգանք

Որպես Քրիստոսի ներկայացուցիչներ, մենք հարգանք ենք տալով մեր մարմնի հանդեպ «բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում» (Մովսիս 18.9), հանաձայնելով ապրել որոշակի չափանիշներով: Տերը պահանջում է, որ տաճար մտնեն միայն նրանք, ովքեր մաքուր են: Առաքինի լինելու ձեր ընտրությունը վկայում է Տիրոջ և ձեր ֆիզիկական մարմնի հանդեպ ձեր հարգանքի մասին:

Մենք պետք է հարգանք դրսևորենք մյուսների մարմինների հանդեպ և օգնենք նրանց առաքինի կյանքով ապրել: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է. «Երիտասարդ կանայք՝ պետք է հասկանան, որ երբ իրենք հագնում են կիպ, կարճ կամ շատ մեծ բացվածքով զգեստ, նրանք ոչ միայն սխալ ուղեոր են հղում երիտասարդ տղաներին, որոնց հետ նրանք շփվում են, այլև նրանց մտքում դրոշմվում է այն թյուր կարծիքը, որ այդ կնոջ արժեքը կախված է բացառապես նրա զգայական գրավչությունից: Դա երբեք չի եղել կամ չի լինի Աստծո հավատարիմ դստեր արդարացի նկարագիրը»:²

Երիտասարդ կանայք, հարգեք ձեր մարմինը և օգնեք մյուսներին, հատկապես երիտասարդ տղաներին, ունենալ առաքինի մտքեր և վարք: Հարգեք ձեր մարմինը, իմանալով, որ *ամենօրյա* արդար ապրելակերպը ձեզ *հավերժական* արժեք է պարգևում:

Ակնածանք

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է մեզ. «Ինչպես տաճարի տարածքն է սրբություն

և ակնածանք ներկայացնում այն առումով, թե ինչ է կատարվում տաճարի ներսում, մեր հագուստն էլ ներկայացնում է մեր ներքին գեղեցկությունն ու մաքրությունը: Մեր հագնելու ոճը ցույց է տալիս արդյոք մենք պատշաճ հարգանք ենք դրսևորում . . . արարողությունների և հավերժական ուխտերի հանդեպ, և արդյոք պատրաստվում ենք ստանալ դրանք»:³

Ակնածանք դրսևորեք մեր Փրկչի քավող զոհաբերության հանդեպ՝ հագնելով ձեր «Կիրակնօրյա լավագույն զգեստը» հաղորդության արարողությանը մասնակցելու համար: «Երիտասարդ տղաները պետք է հագնեն արժանապատվորեն, երբ սպասավորում են հաղորդության արարողությունը»:⁴ Երիտասարդ աղջիկներ, համեստ հագնվեք:

Վեր կացեք: Եղեք համեստ հագնվելու օրինակ՝ տանը, դպրոցում, լողափում, պարահրապարակում կամ սպորտային խաղերի ժամանակ: Հետևեք Քիմի օրինակին, հագուստ ընտրելիս, թույլ տվեք, որ Սուրբ Հոգին ուղեկցի ձեզ ձեր որոշումներում: «Հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյոք իմ արտաքին տեսքով ես հարմարավետ կզգամ ինձ Տիրոջ ներկայությամբ»:⁵

Եթե դուք ապրեք այդ երեք սկզբունքներով, որոնք են՝ լինել ներկայացուցիչ, հարգանք և ակնածանք դրսևորել հագուստ ընտրելիս, դուք *«կշողաք»* (Վարդապետություն և Ուխտեր 115.5) որպես Փրկչի սիրելի ներկայացուցիչներ: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 6:
2. M. Russell Ballard, "Mothers and Daughters," *Liahona*, May 2010, 20.
3. Robert D. Hales, "Modesty: Reverence for the Lord," *Liahona*, Aug. 2008, 20.
4. *Երիտասարդներին զորացնելու համար*, 8:
5. *Երիտասարդներին զորացնելու համար*, 8:



ԶՈՐԱՑԱԾ ԽՈՍԲՈՒԿ

*Դեռահասները վկայում են այն
ժամանակների մասին, երբ
սուրբ գրություններն ու-
սուցանել, հաստատել և
ստաջնորդել են իրենց:*



ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԴԺՎԱՐ ՊԱՅԻՆ

«Սուրբ գրությունները նման են լույսի փաթեթների, որոնք լուսավորում են մեր միտքը և տեղ են բացում ի վերուստ եկող ուղղորդության և ներշնչման համար... Մեծ գործություն է պարունակվում սուրբ գրությունները մտապահելու մեջ: Սուրբ գրությունը մտապահելը նման է նոր ընկերություն ստեղծելուն: Այն նման է նոր անձ հայտնաբերելուն, որը կարող է օգնել դժվար պահին, ոգեշնչում և սփոփանք պարգևել և լինել անհրաժեշտ փոփոխության համար լիցքի աղբյուր»:

**Տասներկու Առաքյալների
Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթ,
Լիսինգ, Նոյ. 2011, 6:**

Մենք խնդրեցինք երիտասարդներին պատմել մեզ այն ժամանակների մասին, երբ իրենց մտապահած սուրբ գրությունները օգնել են իրենց, որի մասին խոսել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը 2011թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի իր ելույթում (տես եզրաշերտը): Այստեղ ներկայացնում ենք նրանց պատասխաններից մի քանիսը:



Խաղաղություն իմ հոգուն

«Որդիս, խաղաղություն քո հոգուն. քո ձախորդություններն ու քո չարչարանքները կտունեն միայն մի փոքր պահ» (Վեճ 121.7):

Տարիներ շարունակ ինձ սփոփանք պարգևող սուրբ գրությունն է՝ Վարդապետություն և Ուխտեր 121.7, որտեղ Մարգարե Ջոզեֆ Սմիթը Լիբերթի բանտում Երկնային Հորից օգնություն է աղերսում: Ես անգիր եմ սովորել այս հատվածը սեմինարիայում և հիշում եմ, երբ սփոփանքի կարիք եմ ունենում: Այն հիշեցնում է ինձ, որ իմ Երկնային Հայրը սիրում է ինձ և տեղյակ է իմ փորձություններից: Ես օգտագործել եմ այդ հատվածը, որն ինձ խաղաղություն է բերել հուսահատության և թուլության պահերին:

Այդ հատվածն օգնել է ինձ, երբ ես մասնակցել եմ մի հավաքության, որը մի փոքր անց վերածվեց այնպիսի միջավայրի, որտեղ գիտեի, որ պետք չէ լինել: Ես քաղաքավարի ձևով մերժեցի ընկերներիս, որոնք ինձ հորդորեցին խմել կամ ծխել: Այդ սուրբ գրության հատվածը ինձ քաջություն տվեց, որի կարիքն ունեի իմ համոզմունքները պաշտպանելու համար:

Այդ հատվածը նաև օգնել է ինձ դժվար որոշում կայացնելիս: Ընկերուհիս և ես անբաժան էինք հինգ տարի: Մենք միասին սպորտով էինք զբաղվում,

միասին զբոսնում էինք և հանգստյան օրերին միասին ժամանակ էինք անցկացնում: Սակայն նա սկսեց ժամանակ անցկացնել ավելի մեծ տարիքի ընկերների հետ, որոնց հետ ես չէի ցանկանում շփվել: Ի վերջո, նա ինձ ընտրության առաջ կանգնեցրեց՝ լինել նրա ընկերուհին կամ հավատարիմ մնալ Իմաստության Խոսքին և մաքրաբարոյության օրենքի իմ համոզմունքներին: Ես շփոթված էի: Ես երբեք չէի զգացել, որ այդքան դժվար կլինի իմ համոզմունքները պաշտպանելը: Բայց ես ընտրեցի նոր ընկերուհիներ ունենալ, իմ մտքում պահելով Երկնային Հոր խոստումը տրված Ջոզեֆ Սմիթին, որ ամեն ինչ լավ կլինի:

Ոչինչ չարժե, որ ես զիջեմ իմ համոզմունքները, և ես ճիշտ ընտրություն կատարելով անկեղծ և տևական ուրախություն եմ ապրում: Այդ սուրբ գրությունն ամրացրել է իմ վկայությունը և անհրաժեշտության դեպքում օգնել ինձ:

Լորեն Զ.

16 տարեկան, Արկանզաս, ԱՄՆ


Թույլ կողմերը դարձվում են ուժեղ

Ավագ դպրոցի ընդունելության քննությունից ամիսներ առաջ, ինձ պատրաստ չէի զգում: Ես վստահ էի, որ անհնար է քննությունը հաջող հանձնել: Ես աղոթքով դիմեցի իմ Երկնային Հորը: Աղոթելիս միտքս եկան այս խոսքերը. «Եթե մարդիկ զան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. և իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

Ես հասկացա, որ երբ աղոթում եմ Երկնային Հորը, որպեսզի ուժ ունենամ դիմակայելու դժվարություններին և փորձություններին, Նա օրհնում է ինձ և օգնում է հաղթահարել իմ թուլությունը: Իմ մտահոգության մասին Տիրոջը ասելը իմ լավագույն որոշումն էր: Նա լավագույն ուսուցիչն է, և ես գիտեմ՝ Նա օգնեց ինձ:

Իրվին Օ.

16 տարեկան, Էլ Սալվադոր



ՈՒՂԻՂ ԵՎ ՆԵՂ Է ԾԱՆԱԴԱՐՇԸ

Կան ընտրելու շատ ճանապարհներ, բայց միայն մեկն
է տանում դեպի հավերժական կյանք:

(Տես 2 Նեփի 9.41; 31.17-21, Ավճա 7.9:)



Ավարտելով Երեխաների

Երբ եկել է ժամանակը տեղափոխվելու Երիտասարդ տղամարդկանց կամ Երիտասարդ կանանց կազմակերպություն, ձեզ ենք ներկայացնում, ինչպիսի փորձառություններ կարող եք ունենալ:

ՈՎՔԵՐ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՎ ԻՆՉ ԵՆ ՆՐԱՆՔ ԱՆՈՒՄ:

Ահարոնյան Զահանայություն՝
ծառայել մյուսներին հանուն
Փրկչի

Բաժանել հաղորդությունը
Հավաքել ծովի
նվիրատվությունները
Ամրացնել ձեր ընտանիքը

Պարտականություն Աստծո առաջ


Սովորել և անել նոր բաներ
Ուրիշների հետ կիսվել
Ավելի սերտ հարաբերություններ
գարգացնել Երկնային Հոր հետ

Երիտասարդներին զորացնելու համար

Չափանիշներ, որոնք ձեզ դարձնում
են ամուր

Պատրաստվել

Միսիայի համար
Ամուսնության և հայրության
համար



Գնալ տաճար

Մկրտվել մահացածների համար
Պատրաստվել ուխտեր կապելուն
Զգալ Սուրբ Հոգին

Միջոցառումներ

Ծառայել ձեր քվորումով
Միացյալ զվարճանք

Սիրելի Երեխաների Խմբի Երիտասարդ տղաներ,

Երբ դուք դառնաք 12 տարեկան, դուք կստանաք Ահարոնյան Զահանայություն: Դա շատ կարևոր է: Երբ Աստված ձեզ տալիս է Իր քահանայությունը, Նա ասում է, որ վստահում է ձեզ: Դա կլինի ձեր սուրբ պարտականությունը ծառայելու մյուսներին, ինչպես Փրկիչը կծառայեր:

Այժմ է պատրաստվելու ժամանակը: Նայեք և լսեք ձեր շուրջը գտնվող քահանայություն կրողներին, երբ նրանք օրհնում և բաժանում են քահանայությունը, մկրտում են, օրհնություններ են տալիս, միսիա են ծառայում և ընտանիք են ղեկավարում: Միշտ արեք հնարավորինս ամեն ինչ ավետարանի չափանիշներով ապրելու համար: Այդ ժամանակ դուք պատրաստ կլինեք այն հրաշալի օրվան, երբ Ահարոնյան Զահանայություն կստանաք:



Հարգանքներով,

Դեյվիդ Լ. Բեք

Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահ

Խաումբը

ՈՎԹԵՐ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ ԵՎ ԻՆՉ ԵՆ ՆՐԱՆՔ ԱՆՈՒՄ:

Նոր ընկերներ

Միասին սովորել և զվարճանալ
Աջակցել միմյանց

Մեծացնել ձեր հավատքը առ Հիսուս Քրիստոս

Պաշտպանել ճշմարտությունը
և արդարակեցությունը
Կիսվել վկայությամբ

Երիտասարդներին զորացնելու համար

Չափանիշներ, որ ձեզ ամուր կդարձնեն

Անձնական Զարգացում

Սովորել նոր բաներ
Նպատակներ դնել և աճել
առաքինության մեջ

Գնալ տաճար

Մկրտվել մահացածների համար
Զգալ Սուրբ Հոգին
Պատրաստվել ուխտեր կապելուն

Միջոցառումներ

Ծառայել միասին
Միացյալ զվարճանք

Պատրաստվել լինել Աստծո դուստր

Լինել առաջնորդ և լավ
օրինակ
Դառնալ հավատարիմ
կին և մայր



Սիրելի Երեխաների Խմբի Երիտասարդ աղջիկներ,

Մենք անչափ ուրախ ենք, որ մի օր դուք միանալու եք Երիտասարդ Կանանց: Դուք Երկնային Հոր թանկագին դուստրերն եք: Երիտասարդ Կանանց մոտ դուք կսովորեք լինել Նրա վկան բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում: Դուք կստանաք վզնոց, որը կհիշեցնի ձեզ պաշտպանելու ճշմարտությունը և արդարակեցությունը, և Փրկչի լույսը հասցնելով ողջ աշխարհին: Ձեր Անձնական Զարգացման գիրքը կօգնի ձեզ ուսումնասիրել սուրբ գրությունները, դնել անձնական նպատակներ և առաջ գնալ տաճար տանող ուղով: Այս ամենը կօգնի ձեզ պատրաստվել լինելու լավ կին և մայր, և հրաշալի առաջնորդ՝ աշխարհում:

Հարգանքներով,

Էլեյն Ս. Դալտոն

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ



ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝ ՆՈՐԱՐ՝

Սիրելի ընկերուհի

Ողջույններ Մեքսիկայից: Անչափ ուրախացա ըո՛ւսմանկի համար, իմանալով, որ ծննդյանդ օրն է մոտենում: Ինձ թվաց, դու մի փոքր նյարդայնացած ես Երեխաների խմբից տեղափոխվելու համար: Ուզում եմ պատմել այն ժամանակի մասին, երբ ես տեղափոխվեցի Երիտասարդ Կանանց խումբ:

Ես ևս նյարդայնացած էի, որ հեռանում էի Երեխաների խմբից: Ես անհանգստանում էի, որ հնարավոր է այլևս ընկերներ չունենամ: Ես սարսափում էի, որ աղջիկների մեջ տարիքով ամենափոքրն եմ:

Սակայն ամեն ինչ շատ հրաշալի դասավորվեց: Եպիսկոպոսը հարցազրույց անցկացրեց ինձ հետ՝ նախքան իմ ծննդյան օրը և ասաց, որ փոփոխությունը լավ բան է: Կիրակի օրը ես դեռևս ամաչում էի և մնացի Երեխաների դասասննյակում: Բարեբախտաբար, Երիտասարդ Կանանց ղեկավարներից մեկը ինձ տեսավ այնտեղ: Նա ասաց. «Ես գիտեի, որ քեզ այստեղ կգտնեմ: Արի, գնանք դափ»:

Քույր Դիանն ինձ ողջունեց բացման մասում և ինձ տվեց երեք գիրք, որոնք ես սիրեցի՝ Երիտասարդներին զորացնելու համար, Երիտասարդ Կանանց Անձնական զարգացում և օրագիր: Երբ նայեցի շուրջս, ես տեսա, որ աղջիկներից մի քանիսին գիտեմ Երեխաների խմբից: Այն աղջիկները, որոնց չէի ճանաչում, ինձ բարևեցին: Շուտով վախի զգացումն անհետացավ, և ես խաղաղության զգացի:

Դրանից հետո ամեն ինչ ավելի լավ ընթացք ստացավ: Ինձ համար հատուկ նշանակություն ունեին Միացյալի միջոցառումները, որովհետև դրանք ինձ ուսուցանեցին ինչպես ապրել ավետարանով և ինչպես օգնել իմ ընտանիքին և ընկերներին: Եվ շատ ուրախությամբ էի ամեն տարի ճամբար գնում: Այժմ, երբ արդեն Դափնի եմ, հուսով եմ, շուտով կավարտեմ Անձնական Զարգացումը: Անհամբերությամբ եմ սպասում, երբ պետք է կրեմ Երիտասարդ Կնոջ մեդալիոնը, որպեսզի այն ինձ հիշեցնի, թե այս տարիների ընթացքում որքան շատ եմ մոտեցել իմ Երկնային Հորը:

Այնպես որ մի վախեցիր, իմ ընկերուհի: Բաց թևերդ և թռի՛ր Երիտասարդ Կանանց մոտ: Խոստանում եմ, որ չես զոջա:

Սիրով,
Մարիբել

Ողջունելով կյանքի նոր փուլը

Մարիսա Վիդիսոն

Եկեղեցու ամսագրեր

Չեր բնակավայրում ծառերը փոխում են իրենց գույնը՝ պատրաստվելով ձմռանը: Այս չորս ընկերները այդպիսի տարածքում են ապրում՝ Նոյ Բ., Դիլան Լ., Պատրիկ Մ. և Բեն Մ.: Նրանք բոլորն էլ ապրում են Կանադայի արևելյան ափին՝ Արքայազն Էդվարդի կղզում: Ծառերի պես այդ տղաները պատրաստվում են կյանքի նոր փուլին: Նրանք դառնում են 12 տարեկան մեկ տարվա ընթացքում, իսկ դա նշանակում է՝ նրանք պետք է Երեխաների Խմբից անցնեն Երիտասարդ Տղամարդկանց խումբ: Ահա թե ինչ են նրանք ասում մեծանալու և առաջադիմելու մասին:

Պահեք ձեր անհատականությունը

Երբ Նոյը տեղափոխվեց այստեղ, նրա նոր ընկերներն օգնեցին իրեն հարմարվել կղզու կյանքին: Այժմ, լինելով խմբի մեծը, նա օգնում է նրանց համակերպվել Երիտասարդ Տղամարդու կյանքին: «Ես անհանգստանում էի, թե ինչպես

կրնդունվեմ մյուսների կողմից և կմտերմանամ նրանց հետ, - ասում է Նոյը Երիտասարդ Տղամարդկանց խմբին միանալու մասին: - Միջոցառումներին մասնակցելն, իրոք, օգնեց: Նոյի սիրելի մանկական երգը Հելամանի զինվորների մասին է, և այդպիսին է նա տեսնում քահանայության քվորումը, այսինքն՝ լինել միասին և միաբան:

Նրա խորհուրդն է՝ պահեք ձեր անհատականությունը:

Հարգեք քահանայությունը

Պատրիկի համար քահանայություն ստանալը որոշակի տարիքի հետ կապված չէ: Դա կապված է արժանի և պատրաստված լինելու հետ: «Դու քահանայություն չես ստանում, որովհետև 12 տարեկան ես դարձել, - ասում է Պատրիկը: - Դու պետք է պատրաստ լինես»:

Դիլանը հասկանում է, թե որքան կարևոր է պատրաստվածությունը: Նա փորձում է եկեղեցի հասնել 15 րոպե շուտ, որպեսզի հոգեպես պատրաստվի հաղորդությունը բաժանելուն: «Ես հաղորդություն բաժանել եմ երեք կամ չորս անգամ, և

յուրաքանչյուր անգամ Հոգին դիպչել է սրտիս: Չեմ կարծում, որ դա երբևէ սովորական բան կդառնա ինձ համար», - ասում է նա:

Բենն ասում է, որ հաղորդություն բաժանելը իրեն հիշեցնում է Վերջին Ընթրիքը. «Հիսուսը կանգնած էր այնտեղ: Մենք կանգնում են Հիսուսի տեղում, և Նա ցանկանում է, որ մենք լինենք այնտեղ»:

Նայեք Տաճարին

Բենն աշխատում է, որպեսզի արժանանա Հավատ Աստծո հանդեպ Պարգևին և անհամբեր սպասում է, երբ է առաջին անգամ մահացածների համար մկրտություններ կատարելու: «Ես տաճարի ներսում դեռ չեմ եղել, բայց մարդիկ միշտ վկայություններ են բերում, թե որքան ջերմ և լավ են իրենց զգում այնտեղ», - ասում է Բենը:

Նոյը վերջերս է առաջին անգամ տաճար այցելել: Նա ասաց, որ իր քվորումի երիտասարդ տղաներն իրեն ընտանիքի պես են վերաբերվել: «Դու կարող է նյարդայնանաս, բայց կլինեն մարդիկ, որ կօգնեն քեզ, - ասում է նա: - Դու քեզ ընդունված ես զգում»: ■



Արի, Տեր Հիսուս

Պարզ ♩ = 72-84

Աշխարհի Փրկիչը՝ Նրա Ծնունդը և Հարությունը
Եկեղեցու հրատարակությունից

1. Տեր Հի-սուս, Դու մը-սուր ա - րի, Տես-նենք դեմ-քը Քո բա - րի:
2. Ա - րի, Տեր, վի - բա - վո - րի մոտ, Հան-գիստ պար-գե-վիր հո - գուն:
3. Ա - րի, Տեր Հի-սուս, մեծ Քա-վիչ՝ Լու - սա - բաց ա - րե-վել - քից:

Ա - բա - րիչ, օ - տա-բա - կան ես, Հա - մեստ վաչ-րում մա-նուկ հեգ:
Խո-նարի սրը-տով, ծալ-ված ծրն - կով Սպա-սում ենք Քո մեծ սի - րուն:
Զա - վակ-ներն ենք մենք Քո ընդ-միջտ, Ար - ցունք-նե - րը մեր մաք - րի:

Մու - թը ցը - րի, լույս Դու բեր, Ա - րի, Տեր Հմ - մա-նու - է:
Փառ-քով ա - րի Դու եր-կիր, Թա-գա-վոր Դու մեզ ե - դիր:
Փառ-քով ա - րի Դու եր-կիր, Թա-գա-վոր Դու մեզ ե - դիր:

Տեր Հի - սուս, Դու մը-սուր ա - րի, Տեր Հի-սուս, ա - րի:
Մենք սպա-սում ենք, ի - ջած ծրն - կի Տեր Հի-սուս, ա - րի:
Մենք սպա-սում ենք, ի - ջած ծրն - կի, Տեր Հի-սուս, ա - րի:

Աշխարհի Փրկիչը՝ Նրա Ծնունդը և Հարությունը գրվել և ստեղծագործվել է Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո:

© 2003 IRI Բոլոր իրավունքները վերապահված են: Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:



Տասներկու
Առաքյալների
Քվորումից Երեց
Դավիթն Հ. Օուքսը
կհավորւմ է այս
թեմայի շուրջ իր
մտքերով:


Ինչո՞ւ է
ԿԱՐԵՎՈՐ, որ ես
հավատարմությամբ
հետևեմ
ՀԻՍՈՒՄ
ՔՐԻՍՏՈՍԻՆ,
անկախ նրանից,
թե՞ որտեղ եմ:



Հիսուս Զրիստոսը
Աստծո Միածին և
Սիրելի Որդին է:



Նա մեր Արարիչն է: Նա
Աշխարհի Լույսն է: Նա
մեր Փրկիչն է մեղքից և
մահից:



Սա Երկրի վրա
առավել կարևոր
գիտելիքն է, և դուք
կարող եք ինքներդ դա
իմանալ:



Մենք Հիսուս
Զրիստոսի
հետևորդներն ենք:
Չկա միջին վիճակ:



Դուք կարող եք օգտագործել այս դասը
և վարժությունը՝ ավելին սովորելով
Երեխաների Խմբի այս ամսվա
թեմայի մասին:

Թեմայի մասին:

Քահանայության օրհնությունները
մատչելի են բոլորին

Երբ Զոգեմ Սմիթը թարգմանում էր Մորմոնի Գիրքը, նա և նրա դպիրը՝ Օլիվեր Քաուլտերին մի հարց ունեին: Նրանք գնացին անտառ և աղոթեցին այդ մասին: Աղոթելու ժամանակ «մի սուրհանդակ իջավ երկնքից լույսի ամպի մեջ»: Այդ սուրհանդակը Հովհաննես

Մկրտիչն էր: Նա իր ձեռքերը
դրեց Ջոզեֆի և Օլիվերի գլուխե-
րին և տվեց նրանց Ահարոնյան
Քահանայություն: Այնուհետև
Հովհաննես Մկրտիչը պատվիրեց
Ջոզեֆին և Օլիվերին մկրտել
մեկ մեկու: Քիչ ժամանակ անց,
Պետրոս, Հակոբոս և Հովհաննես
Առաքյալները եկան Երկիր և
կարգեցին Ջոզեֆին և Օլիվերին
Մելքիսեդեկյան Քահանայու-
թյան: Աստծո քահանայությունը
կրկին Երկրի վրա է: (Տես
Ջոզեֆ Սմիթ—Պատմություն
1:68–72):

Քահանայության
շնորհիվ մենք կարող
ենք ստանալ հրաշալի
օրհնություններ և արա-
րողություններ: Դրանք
են օրհնությունները



նորաձիններին, հիվանդներին և երեխաներին իրենց հայրերի կամ քահանայության արժանի կրողների կողմից: Մենք նաև պետք է ստանանք որոշակի քահանայության օրհնություններ Երկնային Հոր մոտ վերադառնալու համար: Այդ օրհնություններից են ընկղմամբ մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևը և տաճարային սուրբ օրհնությունները, որոնք կարող են միասին հավերժ կնքել ընտանիքները: Բացի դա, տաճարում կարող են կատարվել արարողություններ մարդկանց համար, վրքեր մահացել են՝ առանց ստանալու ավետարանի օրհնությունները: Քահանայության օրհնությունները մատչելի են բոլորին: ■

Երգ և սուրբ գրություն

- Ընտրեք մի երգ քահանայության մասին *Երեխաների Երգարանից*
 - Վարդապետություն և Ուխտեր
- 84.35

ԸՃ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ.

Քահանայությունը օգնում է մարդկանց

Քահանայությունը Աստծո գործությունն է ծառայելու և օրհնելու համար մարդկանց արարողությունների և օրհնությունների միջոցով: Այս նկարներում նկարեք ձեզ մեջտեղում:



Միայն դու

Թանկագին Մարգարիտում գտեք Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.68–73: Օգտվելով այդ հատվածներից, լրացրեք ստորև բաց թողնված մասերը: Մեկ այլ թղթի վրա գրի առեք, թե էլ ինչ եք սովորել այդ տողերից:

1. «Սիարոնի Քահանայությունը . . . կրում է _____ սպասավորության բանալիները, և _____ ավետարանի»:
2. _____ առաջինը մկրտվեց:
3. Օլիվեր Քաուլերին մկրտեց _____:
4. Հովհաննես Մկրտիչը գործեց _____ ղեկավարությամբ, _____ և _____:
5. Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը ավելի ուշ շնորհեցին _____ Քահանայություն Ջոզեֆին և Օլիվերին:

Քահանայություն կրողները օրհնում և բաժանում են հաղորդությունը: Նկարեք ձեզ՝ նստած նստարանին և պատրաստ ընդունելու հաղորդությունը:

Քահանայության օրհնությունները կարող են սպասավորվել հիվանդներին: Նկարեք ձեզ՝ պառկած անկողնում վատառողջ վիճակում:



Ընտանիքները կարող են միասին կնքվել տաճարային արարողությունների միջոցով: Նկարեք ձեր ընտանիքին տաճարի առջև կանգնած:

Մկրտությունը և Սուրբ Հոգու ստացումը քահանայության արարողություններ են: Նկարեք ձեզ՝ կանգնած ջրավազանի առաջ:

Ինքնագործություն: Ե՛ք ինքնագործություն
'ոսմիտ' 'ոսմիտ' Ի՛նքնագործություն
'վսմիտ' 'վսմիտ' Ի՛նքնագործություն
'վսմիտ' 'վսմիտ' Ի՛նքնագործություն

Կրկնակի օրհնություն

*Ծանոթացե՛ք Սոֆի և Էլոդի Ա. հետ
Անտանանարիվոյից՝ Մադագասկար:*

Ռիչարդ Մ. Ռոմսի

Եկեղեցու ամսագրեր

Տասնամյա երկորյակ քույրեր Սոֆին և Էլոդին ապրում են Մադագասկարում: Դա մի մեծ կղզի է Աֆրիկայի ափի մոտ: Նրանց ընտանիքը սիրված իրական պատմություն ունի: «Առաջին անգամ, երբ հայրս հանդիպեց միսիոներներին, նա հասկացավ, որ Եկեղեցին ճշմարիտ է», - ասում է Էլոդին: «Նա ակնթարթային նորադարձ էր»: Նրանց մայրը մկրտվեց մի քանի ամիս անց:

Մինչև աղջիկների ծնվելը, նրանց ծնողները ծոմ պահեցին և աղոթեցին, որ աղջիկ ունենային: «Եվ մեկ աղջկա փոխարեն, մայրիկը երկուսն ունեցավ», - ասում է Սոֆին:


Դա կրկնակի օրհնություն էր:



Սոֆիի և Էլոդիի ընտանիքը երեք տարի զումար էր հավատում, որ գևար Յոհանեսբուրգ Հարավային Աֆրիկայի Տաճար՝ միասին կնքվելու համար: Նրանք պետք է ճանապարհորդեին ավելի քան 2100 կմ և անցնեին Հնդկական օվկիանոսը:



Աղջիկների մայրը
բժշկական կլինիկա
ունեղ իրենց տան
կողքին: Աղջիկները
օգնում էին ավելի և
այն մաքուր պահել:



Մադագասկարի դրոշի վրա
սպիտակ գույնը ներկայաց-
նում է մաքրությունը, կարմիրը՝
անկախությունը, իսկ կանաչը՝
հույսը:



Սոֆին և Էլոդին
երկու կատու ու-
նեն և սիրում են
խաղալ նրանց
հետ:



Մադագասկարում կան լեմուր-
ներ և խամելեոններ:



Երկրորդականները սիրում
են ընտանեկան երե-
կոները իրենց երկու
եղբայրների, եղբոր
աղջկա և իրենց հայ-
րիկի և մայրիկի հետ:

Չե՞մ կարող եմ էլ ՄԿՐՏՎԵԼ

«Երեխաները պիտի մկրտվեն իրենց մեղքերի թողության համար, երբ ութ տարեկան են» (Վևու 68.27):

Լուսնոն և Միրիամ, դուք կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին և կմկրտվեք հաջորդ շաբաթ օր», - հարցրեց Քույր Միլվան:

Պառլուն չէր հավատում իր ականջներին: Քույր միսիոներները հենց նոր հրավիրեցին իր 10-ամյա եղբորը և քրոջը մկրտվել:

«Այո, այո», - ուրախ ասացին երկորյակները:

Միրիամը անընդմեջ ժպտում էր: Նույնն Քույր Լուսնին ավելի հարված տվեց: Տատիկը լայն ժպտաց անկյունում իր մեծ կարմիր բազկաթռի միջից:

Մի քանի շաբաթ քույր միսիոներները սովորեցնում էին Պառլուն և նրա եղբայրներին և քույրերին տատիկի տանը: Մի կանաչ քամոտ Սան Միգելում կղզում՝ Պորտուգալիայից 1600կմ հեռավորության վրա: Պառլուն սիրում է բացել տատիկի տան դռան վերին մասը և զգալ ծովի քամին, հետևելով, թե ինչպես են Քույր Լուսնը և Քույր Միլվան քայլում դեպի իրենց տունը՝ իրենց ավետարանի մասին սովորեցնելու համար:

Քույր միսիոներներն ասացին, որ այսօր հատուկ դաս է լինելու: Այժմ Պառլուն գիտեր, թե ինչու: Նույնն և Միրիամը պետք է մկրտվեին, ինչպես Հիսուսն էր սովորեցրել: Պառլուն նույնպես ուզում էր հետևել Փրկչի օրինակին:

«Քույրեր, կարո՞ղ եմ ես էլ մկրտվել հաջորդ շաբաթ օրը», - անհամբեր հարցրեց նա, մոտ պահելով իրեն իր պատկերազարդ Մորմոնի Գիրքը:

Քույր Միլվան ժպտաց, բայց թափահարեց գլխով. «Ցավում եմ, Պառլո: Տերը մեզ բոլորիս ասել է, որ պետք է մկրտվենք, բայց միայն ութ տարեկան դառնալուց հետո: Քանի որ դու միայն վեց տարեկան ես, դու դեռ պատասխանատու չես քո ընտրությունների համար»:

«Բայց, քույրեր, - առարկեց Պառլուն, - ես աղոթում եմ և կարող եմ Մորմոնի Գիրքը իմ ընտանիքի հետ, ինչպես դուք սովորեցրել եք մեզ: Ես գնում եմ Երեխաների խումբ ամեն շաբաթ տատիկի և Մարիո հորեղբորս հետ: Ես գիտեմ, որ Եկեղեցին ճշմարիտ է: Չե՞մ կարող եմ էլ մկրտվել Նունոյի և Միրիամի հետ»:

«Դու այնքան լավ ես վարվում, որ ապրում ես պատվիրաններով և սովորում ավետարանի մասին», - ասաց Քույր Լուսնը: «Բայց դու դեռ պետք է սպասես երկու տարի, մինչև որ կարողանաս մկրտվել»:

Պառլունի կոկորդը լցվեց և տաք արցունքները լցրեցին աչքերը: Նա ցատկեց և վազեց իր սենյակ՝





ձեղնահարկում, որտեղ քնում էր իր եղբայրների և քույրերի հետ:

Մի քանի ռուպե բարձի մեջ լաց լինելուց հետո, Պաոլոն լսեց, ինչպես ինչ-որ մեկը բարձրանում էր ձեղնահարկի աստիճաններով: Մարիո հորեղբայրը նստեց Պաոլոյի անկողնում:

«Ի՞նչ է պատահել, Պաոլո», - հարցրեց Մարիո հորեղբայրը:

«Քույր Սիլվան և Քույր Լուսյեռը ասացին, որ ես չեմ կարող մկրտվել, բայց Նունոն և Միքիամը կարող են», - ասաց Պաոլոն: «Ես ուզում եմ դառնալ Եկեղեցու անդամ: Ես սիրում եմ հիմներ երգել հաղորդության ժողովին և սովորել սուրբ գրությունների մասին Երեկանների խմբում: Ես չեմ ուզում նրանցից հետ մնալ»:

«Պաոլո, դու, միևնույն է, կարող ես լինել Եկեղեցում, թեև բավական մեծ չես մկրտվելու համար», - մեղմորեն ասաց Մարիո հորեղբայրը:

«Ինչպե՞ս», - Պաոլոն քիթը մտցրեց իր բարձի մեջ:

«Դե, դու գիտես, որ Երեկանների խումբը պատրաստում է հաղորդության ժողովի ծրագիր», - ասաց Մարիո հորեղբայրը: «Ձեր խմբի ուսուցիչն ինձ ասաց, որ կամավորներ է փնտրում՝ ծրագրի ժամանակ վկայություն տալու համար: Դա մեկ ուղի է, որով դու կարող ես մասնակցել եկեղեցուն», - բացատրեց Մարիո հորեղբայրը:

«Իսկապե՞ս», - Պաոլոն ուղղվեց և նայեց իր հորեղբոր աչքերին: Մի ռուպե նա մտածեց: «Մի գուցե, ես կարող եմ բերել իմ վկայությունը Նունոյի և Միքիամի մկրտության ժամանակ ևս»:

«Հիանալի միտք է», - ասաց Մարիո հորեղբայրը: «Թեև դու շատ երիտասարդ ես մկրտվելու համար, դու կարող ես բերել վկայություն»:

Պաոլոն ցատկեց իր անկողնու վրայից և աստիճաններով վազեց ներքև:

«Ո՞ր ես գնում», - կանչեց Մարիո հորեղբայրը:

«Ես գնում եմ պարապելու վկայություն տալը միսիոներների հետ», - ուրախ արձագանքեց Պաոլոն: «Ես կկիսվեմ դրանով, մինչ սպասում եմ իմ մկրտվելուն»: ■



«Համբերատարությունը նշանակում է ակտիվորեն սպասել և դիմանալ: Դա նշանակում է մնալ մի ուղու վրա և անել հնարավորինս, որ կարող ես՝ աշխատելով, հուսալով և հավատք գործադրելով»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆ, Սոաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Շարունակեց համբերատարությամբ», *Լիախոնա*, մայիս 2010, 57:

Հագնվել սարկավագի նման

Հիլարի Մ. Հենդրիքս

Հիմնված է իրական պատմության վրա



5.

Ես ուզում եմ հագնել
սպիտակ վերնաշապիկ և
գեղեցիկ տաբատներ: Ես
ուզում եմ հագնվել սարկա-
վազի նման:

Մայրիկն օգնեց Էլիին հագնել իր
գեղեցիկ տաբատները, սպիտակ
վերնաշապիկը և կապել փողկապը:



6. Եկեղեցում Էլին ծալեց իր ձեռքերը, հետևելով,
թե ինչպես են սարկավազները բաժանում
հաղորդությունը:



7. Երբ սարկավազը մոտեցրեց հաղորդությունը Էլին,
Էլին վերցրեց մի կտոր հաց, ապա սկսեց փոխանցել
մայրիկին:

8. Մայրիկը ժպտաց Էլին: Նա ուրախ
էր, որ օգնեց: Նա իրեն սարկավազ
զգաց:



ԹԱՔԵԿԱԾ ԼԿԱՐՆԵՐ

Էլին ուզում է հազնվել սարկավազի նման: գնեք նրանց այս սենյակում գտնել այն իրերը, որոնք կօգնեն նրանց հազնվել սարկավազի նման:



ԳՈՒՆԱՎՈՐԵԼՈՒ ԷՋ



Քահանայության միջոցով մենք ստանում ենք փրկության արարողությունները:

«Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր ընդունում են այդ քահանայությունը,
ընդունում են ինձ, ասում է Տերը» (ՎևՈՒ 84.35):

Եկեղեցու նորությունները

Այցելեք [news.lds.org](http://newslds.org) կայքէջը Եկեղեցու նորություններին ու իրադարձություններին ծանոթանալու համար

ՆԱԽԴՆԱԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱԱՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԿԱՏՈՒԹՅԱՆ ԻՏԵՄ, ՄԱՃԱՐԱՅԻՆ ԱՉԽԱՏՈՒՄ

Բրազիլիայի Երիտասարդության կապը ընտանեկան պատմության հետ, տաճարային աշխատանք

Մելիսա Մերիլ

Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

Խոսե Ա.Մոսկատոն նկատում էր մի միտում՝ երիտասարդները, ովքեր գալիս էին Բրազիլիայի Կամպինաս Տաճարը, շատ «ազատ ժամանակ էին ունենում»:

Եղբայր Մոսկատոն՝ տաճարին կից գտնվող ընտանեկան պատմության կենտրոնի տնօրենը գիտեր, որ որ երիտասարդներից շատերը տաճար հասնելու համար ստիպված էին անցնել երկար տարածություն՝ մեծ մասը գալիս էին քարավաններով և մնում էին մի քանի օր: Հնարավոր չէր կրճատել այն ժամանակը, որն ընկած էր մկրտարանում իրենց նիստերի, ճաշերին ու իրենց ծնողներին և տաճարային այլ արարողություններին մասնակցող ղեկավարներին սպասելու միջև:

Բայց գուցե, մտածեց նա, կարող էր տաճարի տարածքում թափառելու փոխարեն, երիտասարդներին ազատ ժամանակը անցկացնելու տարբերակ առաջարկել:

Նա այդպես էլ արեց:

Հրավեր

Նա սկսեց հրավիրել երիտասարդներին կենտրոն և առաջարկեց ուսուցանել նրանց, թե ինչպես աշխատել «FamilySearch indexing» ծրագրում:

Սկզբում ոմանք ամաչում էին կամ էլ դժկամությամբ էին անում: Բայց եղբայր Մոսկատոն ասաց, որ երբ նա խոսեց նրանց հետ մարդկանց խավարից ազատելու և նրանց անունները դեպի լույս բերելու կենդանի մարգարեի խոսքերին հնազանդվելու մասին, երիտասարդներն ազդվեցին» (տես David A. Bednar, “The Hearts of the Children Shall Turn,” *Liahona and Ensign*, Nov. 2011, 24–27):

Կարևոր է այն, որ տաճարը և ընտանեկան պատմության կենտրոնը գտնվում են միևնույն տարածքում. դա ընդգծում է ֆիզիկական առումով, որ տաճարը և ընտանեկան պատմության աշխատանքը մեկ մեծ գործի երկու մասերն են հանդիսանում: Զորք Ա. Օուքսը՝ Բրազիլիայի Կամպինաս Տաճարի նախագահը, ասել է,

որ դա այնպիսի մի բան է, որը տաճարային շրջանի երիտասարդությունը սկսում է սովորել:

«Նախքան ընտանեկան և ինդեքսավորման ծրագրերի մեջ նրանց ներգրավելը, նրանց ուղևորությունը դեպի տաճար, հիմնականում, մահացածներին մկրտելու նպատակով էր: Այժմ ինդեքսավորման աշխատանքները դառնում են նրանց աշխատանքի մի մասը», - ասել է նա:

Ներածություն

Երբ երիտասարդները գալիս են կենտրոն, Եղբայր Մոսկատոն և միսիոներները, ովքեր կամավոր ծառայում են կենտրոնում, բացառությամբ են համառոտ, ոչ պաշտոնական լեզվով, հետևյալ սկզբունքները.

- Նրանք դառնում են փրկիչներ Միոն սարի վրա (տես Աբդիա Ա.21):
- Նրանք ականջ են դնում մարգարեի կոչին (տես «Չավակների սրտերը պիտի դառնան»):
- Նրանք ազատում են մարդկանց խավարից՝ երկար ժամանակ մոռացված ժապավենների և փոշոտ գրանցման գրասենյակների և եկեղեցիների գրքամատյանների խավարից: Ինդեքսավորումը բերում է այդ անունները դեպի լույս և դարձնում դրանք հետազոտվելու համար մատչելի, որպեսզի նրանց ընտանիքները կարողանան գտնել նրանց:
- Միանալով այս աշխատանքին, նրանք մեկ այլ կերպ կմասնակցեն «հավիտենական ավետարանին պատկանող բոլոր թեմաներից ամենափառաբանելի»՝ մահացածների մկրտությանը» (ՎեՐՈՒ 128.17):
- Նրանք կօգտագործեն իրենց ժամանակը մահացածների փրկության մեծ աշխատանքի համար, որն օրհնում է ընտանիքները:
- Մենք բոլորս Աստծո ընտանիքի մի մասն ենք կազմում, և, այն մարդկանց անուններն ինդեքսավորելով, որոնց նրանք չեն ճանաչում, նրանք այնուամենայնիվ օգնում են իրենց ընտանիքին:



Տաճարային ուղևորության ընթացքում Բրազիլիայի Կամպինասի Տաճարի շրջանի պատանիները մասնակցում են FamilySearch indexing ծրագրին մկրտարանի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

- Երբ նրանք հասկանում են, թե ինչպես մասնակցեն ինդեքսավորմանը, նրանք հնարավորություն են ունենում ուսուցանել իրենց ընտանիքի անդամներին և այլ երիտասարդների իրենց ծխերում և ճյուղերում նույնպես մասնակցել:

Եղբայր Մոսկառն և միսիոներները այդ ժամանակ օգտագործում են կենտրոնի համակարգիչները՝ ցույց տալու պատանիներին, ինչպես սկսել ինդեքսավորումը և ինչպես տեղադրել և օգտագործել ծրագիրը, երբ նրանք տուն գնան: Մեկ անգամ հասկանալուց հետո, ասում է Եղբայր Մոսկառն, նրանք «սկսում են ինդեքսավորել անգուգական ուժով»:

Աշխատանքի հանդեպ խանդավառություն

Թվերն արտացոլում են այդ խանդավառությունը: 2012 թվականի առաջին ամիսներին այցելուները ինդեքսավորեցին 6,370 անուն, դրանցից 3,305 ը ինդեքսավորել են 12-ից 18 տարեկան երիտասարդները: Փաստորեն, հարմարեցնելու համար ինդեքսավորման հանդեպ աճող հետաքրքրությունը, Կամպինասի ընտանեկան կենտրոնը հաճախ իր սովորական ժամերը երկարացնում է առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան 6:00, և բաց է մնում մինչև ժամը 10:00:

Բայց պատանիները աչքաթող չեն անում ինդեքսավորումը, երբ մեկնում են տաճարից: Երբ նրանք տուն են գնում, շարունակում են իրենց դերը, ինչպես Եղբայր Մոսկառն է կոչում, «ավելի

քան 170000 ակտիվ ինդեքսավորողների բանակում, որ Եկեղեցին ունի այսօր»: Շատերը ինդեքսավորման աշխատանքը կատարում են որպես Մատծո հանդեպ պարտականության և Անձնական Զարգացման ծրագրի իրենց նպատակներ:

Բարի ազդեցություն

Այս տարվա սկզբին Իզաբելա Ա., 16 տարեկան, Վիլա Վելիայից, Էսպիրիտո Սանտո, Բրազիլիա, ճանապարհորդեց իր մոր և քրոջ հետ տաճար: Ուղևորության վերջին օրը նրա տատիկի մահվան մեկ տարվա տարեդարձն էր: Իզաբելան մկրտվեց իր տատիկի համար, իսկ նրա մայրը կատարեց տաճարային մյուս արարողությունները նրա համար:

«Ես զգում էի այս ճանապարհորդության ընթացքում, որ ես պետք է ինչ որ լավ բան անեի», - բացատրեց Իզաբելան: «Ես ուզում էի սովորել ինդեքսավորել և ինձ օգնեց Եղբայր Խոսե Մոսկառն»:

Այա երբ ես մկրտվում էի իմ տատիկի համար, Հոգին խորապես ազդեց ինձ վրա: Ես հասկացա, որ շատ մարդիկ վարագույրից այն կողմ անվերջ սպասում էին և նրանք իմ օգնության կարիքն ունեին: Ես հասկացա, որ ես կարող էի տալ մի փոքր իմ ժամանակից՝ ծառայելու համար և որ ես կարող էի անել շատ բան այդ մարդկանց համար: Ինդեքսավորումը սիրո աշխատանք է: ■

Այս պատմության մասին ավելի շատ բան իմանալու համար, այցելեք news.lds.org կայքը:

Հնդկաստանում կազմակերպվեց առաջին ցիցը:

Երեց Ի. Ջաք և Քույր Պամելա Զելլերսթրաս

Հնդկաստանի Բանգալորի միսիա

Առկա էր հուզմունքի և երախտագիտության մի ակներև զգացում, երբ 2012 թվականի մայիսի 27-ին Հնդկաստանի Հայդարաբադի ցցի ստեղծման կապակցությամբ, որն առաջին ցիցն է երկրում, ավելի քան 1,500 անդամներ և ընկերներ էին հավաքվել Նովոթել Համաժողովների Կենտրոնում Հայդերաբադում, Հնդկաստան: Նախագահում էր Երեց Դավիթ Ն. Օուքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, որին ուղեկցում էր Երեց Դոնալդ

Լ. Հոլսթրոմը՝ Յոթանասունի Նախագահությունից և Յոթանասունից Երեց Էնթոնի Դ. Պերկինսը, ով ծառայում է որպես Ասիայի Տարածքի Նախագահ: Համաժողովի ժամանակ յուրաքանչյուր առաջնորդի ուղեկցում էր իր կինը:

Ջոն Գաթին հաստատվեց որպես ցցի Նախագահ, Սուրեշ Նաթարջանը՝ առաջին խորհրդական, և Ռաջարաթնամ Բուշին՝ երկրորդ խորհրդական: Հնդկաստանի առաջին հայրապետը նախկին շրջանի նախագահն էր՝

Փրասադ Բաո Գադելյը:

Դիմելով Հնդկաստանի Սրբերի երբևէ ամենամեծ հավաքին, Ռանդի Դ. Ֆանքը՝

Նոր հաստատված Հնդկաստանի Հայդերաբադի ցցի նախագահությունը (ձախից աջ)՝ Սուրեշ Նաթարջան՝ առաջին խորհրդական, Ջոն Գաթին՝ նախագահ, Ռաջարաթնամ Բուշին՝ երկրորդ խորհրդական:



Նախքան Հնդկաստանի առաջին ցցի ստեղծումը մոտավորապես 600 երիտասարդ ամուրիներ Հնդկաստանից և Շրի Լանկայից հավաքվել էին համաժողովի:



ՄԱՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐՈՒՄԻՆԻՍՏՆԵՐ

Հնդկաստանի Բանգալոր Միսիայի նախագահը, ասաց. «Մա մի փառահեղ տեսարան է այս պատմական օրը, որը մենք միշտ կհիշենք: Մենք միշտ կհիշենք, որ Տիրոջ մի Առաքյալ է եղել այստեղ»:

Երեց Պերկինսը Հնդկաստանի անդամներին սեր արտահայտեց Միսիայի Տարածքային Նախագահությունից և ասաց. «Մենք տեսնում ենք այս երկրում մի սքանչելի աշխատանքի սկզբնավորումը: Եկեղեցու աճը և ցգի ձևավորումը կատարվում է համաձայն հավերժական ավետարանի սկզբունքների և քահանայության հաստատված կանոնների»:

Նշելով, որ կոչումով նա երկրորդ վկան էր նոր ցգի նախագահությունում, Երեց Հոլսթրոմը բացատրեց նոր ցգի ղեկավարությունն ընտրելու հայտնության գործընթացը: Որպես Յոթանասուների անդամ, նա նշանակված է և ժամանում է առանց կանխակալ կարծիքի կամ նախատրամադրվածության, ասաց նա: Նա եկել է Տիրոջ ձևով, վստահելով Նրա Հոգուն՝ հայտնություն ստանալու համար: «Տիրոջ կամքն է, որ Նախագահ Գաթին լինի ցգի նախագահ», - ասաց Երեց Հոլսթրոմը:

Քրիսթեն Օուքսը, ով ուղեկցում էր իր ամուսնուն, խոսեց երեխաներին ուսուցանելու մասին, որ նրանք հավատալին՝ «որովհետև նրանց մայրերը գիտեին» (տես Ավմա 56:48):

Որպես ժողովի վերջին խոսնակ, Երեց Օուքսն արտահայտեց երախտագիտություն Հնդկաստանի ազգին, կրոնական ազատություն ունեցող երկրին, որը թույլ է տալիս Եկեղեցու անդամներին

«հանդիպել և խոսել մեր հավատքի սկզբունքների մասին»:

Երեց Օուքսը վկայեց, որ վկայություն էր ունեցել Հոգուց, որ Տերը նախապատրաստել էր և ընտրել ղեկավարներին, որոնք կանչվել էին: Երեց Օուքսը խոսեց նաև ցգի նոր պարտականությունների մասին:

Հին Կտակարանում Եսայիա մարգարեն նմանեցնում է Իսրայելը վրանի, որն ապաստանավայր էր

օրհնությունը հայտարարում է ձեր տոհմը Իսրայելի ցեղերի մեջ, որի միջոցով մեծ օրհնություններ են ստացվում», - ասաց Երեց Օուքսը: «Հայրապետական օրհնությունները հայտնում են նաև օրհնություններ և խոստումներ, որոնք մենք կարող ենք հայցել եթե հավատարիմ լինենք:

Քանի որ Եկեղեցին Հնդկաստանում աճում է, ժամանակ կզա, երբ մարգարեն կոգեշնչվի տաճար կառուցել

Երեց Օուքսը և Եկեղեցու այլ ղեկավարներ, այցելելով Հայդերաբադ, Հնդկաստան, հանդիպեցին Հնդկաստանից, Նեպալից և Շրի լանկայից հարյուրավոր անդամների:



Իսրայելի զավակների համար: Նա ասաց. «Եկեղեցին այսօր վրան է: Մենք գիտենք, որ վրանը պետք է ամրացվի ցցերով: Այժմ Հայդերաբադը Միտնի ցիցն է, ձեզանից կսպասվի առաջ գալ և ավելի մեծ աջակցություն ցույց տալ տասանորդի և միսիոներների միջոցով:

Ցցի կազմավորման արդյունքում, Հայդերաբադի անդամները կկարողանան ստանալ հայրապետական օրհնություններ: Երեց Օուքսը բացատրեց, թե ինչ է պարունակվում հայրապետական օրհնությունում, օրհնություններն անվանելով «անձնական սուրբ գրություններ»:

Հայրապետական

Հնդկաստանում», - շարունակեց նա: «Ստեղծված ամեն ցից ավելացնում է հավանականությունը, որ այնտեղ տաճար կլինի: Երբ մարդիկ ցույց են տալիս արժանավորություն և պարտավորվածություն, հետևում է տաճարը:

Ավարտելով, Երեց Օուքսը թողեց իր օրհնությունը. «Այս առաջին ցցում Հնդկաստանի մեծ երկրում, ես օրհնում եմ ձեզ հիշել այս ժամի ուսմուքները: Օրհնում եմ ձեզ հիշել ուխտերը, որոնք դուք կապել եք, երբ մկրտվել եք: Օրհնում եմ ձեզ հիշողությամբ և վճռականությամբ պահելու Աստծո պատվիրանները, որպեսզի կարողանաք վայելել Նրա օրհնությունները»: ■

Առաքյալը նվիրագործում է Նոր ՄՈՒԿ-ը ֆիլիպիններում

Ֆիլիպինների Միսիոներական Ուսուցման Կենտրոնը, որը Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Զվարճումից, նվիրագործեց 2012 թվականի մայիսի 20-ին, կարող է տեղավորել 144 միսիոներ ֆիլիպիններից, Կամբոջայից, Հոն Կոնգից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Մոնղոլիայից, Պակիստանից, Շրի Լանկայից, Տայվանից և Տայլանդից: Այս միսիոներներն ուսուցանվում են իրենց հայրենի երկրի լեզվով:

Նոր կենտրոնի երկու շենքերը պարունակում են դահլիճ, թարգմանչական խցիկներ, համակարգչային լաբորատորիա, լվացքի բաժին, ուսուցողական սենյակներ տեսալսողական սարքավորումով, քնելու տեղեր միսիոներների համար, դասասենյակներ և գրասենյակներ:

Նոր շինությունը նվիրագործելու համար Երեց Նելսոնը՝ աղոթք մատուցելով, արտահայտեց երախտագիտություն Հիսուս Քրիստոսի Զավության համար և հավատարիմ միսիոներների ու Եկեղեցու անդամների համար ողջ աշխարհում, ովքեր սիրում են և ծառայում Տիրոջը: Նա օրհնություն խնդրեց ֆիլիպինների Հանրապետության համար՝ «պահելու ողջունի բաց դռներ» Տիրոջ բոլոր ծառաների համար, և աղոթեց, որ ազգի ժողովուրդը օրհնվի «ազատության և արդարակեցությամբ՝ ինչպես

ֆիզիկապես, այնպես էլ՝ հոգեպես աճելու պատասխանատվությամբ»:

Բրազիլիայի Մանաուս Տաճարը ողջ աշխարհում Եկեղեցու 138-րդ տաճարն է, իսկ Բրազիլիայում վեցերորդը:

Նախագահ Դիթեր Ֆ. Ուլտորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը 2012 թվականի հունիսի 10-ին նվիրագործեց Բրազիլիայի Մանաուս Տաճարը՝ Եկեղեցու ողջ աշխարհում 138-րդ, իսկ Բրազիլիայում վեցերորդ տաճարը:

Վերջին Օրերի Սրբերի հավատքն ու նվիրվածությունը Բրազիլիայում, որտեղ ապրում են ավելի քան մեկ միլիոն անդամներ, կարելի է համեմատել Ամազոն գետին, ինչպես ասաց Նախագահ Ուլտորֆը. երկուսն էլ հոսում են խորը և ուժեղ:

Մոտ 20 տարի Եկեղեցու անդամները Մանաուսից, որը գետերով և անտառներով մեկուսացած մի քաղաք է, ճանապարհորդում էին քարավաններով դեպի Բրազիլիայի Սան Պաուլո Տաճարը՝ 15-օրյա ճանապարհորդություն կատարելով երկու կողմ՝ նավով և ավտոբուսով, իսկ հետագայում Վենեսուելայի Կարակասի տաճարը գնալու համար 8-օրյա ճանապարհորդություն կատարելով ավտոբուսով:

Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստան Յոթանասուինից, Ժառայել է Բրազիլիայի

Մանաուս Միսիայի Նախագահ, երբ այն բացվեց 1990 թվականին:

«Ես վստահ եմ, որ Մանաուսի Տաճարը զբաղված կլինի ամեն մի օր, որովհետև այս ժողովուրդը սիրում է տաճարը», - ասաց Երեց Կոստան: «Նրանք սովորեցնում են իրենց երեխաներին սիրել տաճարը: Տաճարը շատ թանկ է նրանց համար»:

Սամուացի Եկեղեցու անդամները տոնում են անկախության 50-րդ տարեդարձը, Առաջին Ցիցը

2012 թվականի հունիսի 1-ին մոտ 350 Վերջին Օրերի Սրբեր Սամուայում միացան այլ Սամուացիների՝ Ապիայի փողոցներով անկախության տոնակատարության շքերթին: Հիսուն տարի առաջ՝ 1962 թվականին, երկիրը ձեռք բերեց անկախություն Նոր Զելանդիայից:

Մասնակցում էին կազմակերպություններ, դպրոցներ, տեղի եկեղեցիները և միջազգային կազմակերպություններ: Վերջին Օրերի Սուրբ ուսանողները զվարճացրեցին տասնյակ հազարավոր հանդիսականների իրենց խմբերով:

Բայց շաբաթավերջը ներառում էր մեկ ուրիշ տոնակատարություն՝ Սամուացի Վերջին Օրերի Սրբերի համար. դա նույնպես տեղի էր ունեցել 50 տարի առաջ՝ երկրում կազմակերպվել էր առաջին ցիցը՝ Ապիայում:

Կիրակի, հունիսի 3-ին, Երեց Ջեյմս Զ. Համուլան և Երեց Զեվին Վ. Փիրսոնը՝ Յոթանասուինից, երկուսն էլ Խաղաղօվկիանոսյան տարածքի Նախագահության անդամներ, խոսեցին Վերջին Օրերի Սրբերի և հյուրերի հետ հատուկ ժողովին, որը հեռարձակվում էր ՎՕՍ ժողովատներում ողջ երկրով մեկ:

Նայելով առաջ, Վերջին Օրերի Սրբերը Սամուայում նպատակաուղղված են շարունակել ծառայել և զորացնել իրենց ընտանիքները, գյուղերը և երկիրը, ինչպես ասաց Երեց Համուլան, որը ծառայում է որպես Տարածքի Նախագահ: «Մենք հրաշալի ենք աճում որպես Եկեղեցի այստեղ, և մենք աճում ենք մեր ընտանիքներում և անձնական կյանքում, երբ հետևում ենք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և օրհնակին», - ասաց նա: ■

Ֆիլիպինների Նոր Միսիոներական Ուսուցման կենտրոնում մինչև 144 միսիոներներ ֆիլիպիններից, Կամբոջայից, Հոն Կոնգից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Մոնղոլիայից, Պակիստանից, Շրի Լանկայից, Տայվանից և Տայլանդից ուսուցանվում են իրենց հայրենի երկրի լեզվով:



ՆԱԽԱԳԱՀՈՐԸ՝ ՆՈՐ ՄՈՒԿԸ

Դա շենացնում է իմ վկայությունը

Ես ջանասիրաբար կարդացել եմ և ուսումնասիրել *Լիահոնան* սկսած 1967 թվականից, և դա օգնել է ինձ հոգեպես աճել: Յուրաքանչյուր ամիս ես սպասում եմ ամսագրին, որպեսզի կարողանամ խրատվել, զգալ Տիրոջ Հոգու հուշումները և շենացնել ավետարանի մասին իմ վկայությունը: Ես հատկապես հավանեցի «Ընդօրինակել և հարգել մեր Երկնային Օնոդներին» հոդվածը (*Լիահոնա*, փետր. 2012, 80): Ես լիովին համամիտ էի հեղինակի հետ, որովհետև ես նույնպես գծանկարիչ եմ:

Ֆաբիո Ֆաջարդո, Կոլումբիա

Ուսուցիչ և ընկեր

Ես սիրում եմ *Լիահոնան*— այն ուսուցանում է ինձ, աջակցում և ուղղում իմ կյանքը: Երբ առավոտյան բարի բաներ եմ կարդում, փորձում եմ ավելի լավ լինել ողջ օրը: Իմ սերն ու հավատքն ավելի ուժեղ են, երբ կարդում եմ ամսագիրը: Ես նաև տալիս եմ *Լիահոնան* իմ ընկերներին որպես նվեր: Այնքան շնորհակալ եմ այդպիսի լավ ուսուցչի և ընկերոջ համար:

Անաստասիա Նապրասնիկովա, Ուկրաինա

Խնդրում ենք ուղարկել ձեր կարծիքները և առաջարկությունները հետևյալ հասցեով: liahona@ldschurch.org: Խմբագրման արդյունքում կյուբերի ծավալը կարող է կրճատվել և բովանդակությունը պարզեցվել:

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Ստորև տրվում են մի քանի օրինակներ.



«Խնայողաբար ապրելը նախապատրաստում է մեզ ապագայի համար», Էջ 12. Կարդացեք հոդվածում նշվող վեց ոլորտների մասին, որոնցում մենք կարող ենք ինքնապահովող դառնալ: Ինչպիսի՞ ծայրահեղ իրավիճակներից կամ խնդիրներից կարող ենք խուսափել՝ զարգացնելով ինքնապահովում այդ ոլորտներում: Հրավիրեք ընտանիքի անդամներին աղոթքով մտածել, թե որ ոլորտներում իրենք պետք է բարելավեն և նպատակներ դնեն մեծացնելու ինքնապահովումը:

«Մաքրաբարոյություն անբարո աշխարհում», Էջ 42. Քննարկեք ընտանիքի անդամների հետ այն հարցերը, որոնք արծարծվում են հոդվածում: Մտածեք սկզբունքներով և փորձառություններով կիսվելու մասին, որոնք զորացրել են ձեր վկայությունը մաքրաբարոյության վերաբերյալ: Քննարկեք հոդվածի խորհուրդը կիրառելու ուղիները:

«Եղի իմաստուն և եղի ընկեր», Էջ 48. Կարդացեք լավ ընկերներին որոշելու համար Երեք Հելլի ստուգաթղթի մասին: Քննարկեք լավ ընկեր լինելու կարևորությունը: Հրավիրեք ընտանիքի յուրաքանչյուր անդամի մտածել երեք ուղիների մասին, որոնցով նա կկարողանա լինել ավելի լավ ընկեր:

«Սիրելի ընկերուհի», Էջ 60, և **«Ողջունել կյանքի նոր փուլը»,** Էջ 61. Կարդացեք Երեխաների խմբի մանուկների մասին և թե ինչպես են նրանք նախապատրաստվում մտնել Երիտասարդ Կանանց և Երիտասարդ Տղամարդկանց խումբ: Ընտանիքով կարող եք քննարկել, թե ինչ են արել այդ երեխաները նախապատրաստվելու համար: Հրավիրեք ընտանիքի անդամներին կարդալ *Անձնական զարգացում* կամ *Պարտականություն Աստծո հանդեպ* գրքույկները և գտեք մի քանի միջոցառումներ, որոնք նրանք կարող են ապագայում իրականացնել:

Մեկ ընտանեկան երեկո, երկու դաս

Մի երեկո ծնողներս և մայրական կողմի տատիկս ու պապիկս եկան մասնակցելու ընտանեկան երեկոյին: Իմ երեք երեխաներից յուրաքանչյուրը սիրում է մասնակցել և այդ երեկո դասը մատուցելու իմ յոթ տարեկան որդու հերթն էր: Մենք նախապատրաստել էինք մի փոքրիկ ցուցադրում, դրել էինք նկարներ Արարման մասին և ուսումնասիրել էինք և վերանայել այն, ինչ նա ուսուցանելու էր: Որդիս պատրաստ էր և հուզված:

Դասի ընթացքում մենք բոլորս ուշադիր լսում էինք, թե ինչ էր որդիս բացատրում: Երբ նա վերջացրեց, Սամուելը, որը մոտ երեք տարեկան էր, որոշեց, որ ինքն էլ էր ուզում դաս տալ: Այսպիսով, նա վերցրեց նկարները և ցուցադրված նյութերը և նորից դասավորեց դրանք սեղանի վրա:

Իր մեղմ ձայնով և երբեմն դժվարությամբ արտաբերվող խոսքերով Սամուելը մատուցեց մեզ ընտանեկան երեկոյի դասը: Եվ չնայած նա չէր նախապատրաստվել, նա լսել էր: Նա բացատրեց մեզ, թե ինչպես էր ստեղծվել երկիրը և մեզ պատմեց մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Հիսուս Քրիստոսի սիրո մասին:

Մենք ապշեցինք, թե որքան հեշտությամբ նա ուսուցանեց դասը՝ անելով ճիշտ ինչպես իր եղբայրն էր արել: Օնոդներս և տատիկս ու պապիկս զարմացած էին ու երջանիկ: Մենք բոլորս տեսանք սերը, որն ունեին երեխաները ավետարանի հանդեպ, և սերը, որ Հիսուս Քրիստոսն ունի նրանց հանդեպ:

Լիզբեթ Սանչես Ֆաջարդո, Մեքսիկա

ԼԱՎ ԲԱՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Քեթրին Ա. Ռաշ

Ուրբաթ երեկո էր, ինչպես բոլոր մյուս երեկոները: Իմ մոտ ընկերները և ես նստած էինք իմ բնակարանում, ֆիլմի դիտումից հետո պարբերաբար ցածրաձայն զրուցում էինք, ապա բարձրաձայն ծիծաղում: Օդը լցված էր ընդհանուր բավարարվածության զգացումով, և ես անդադար ժպտում էի սենյակով պտտվող պատմությունների և մտքերի վրա: Այդ մարդկանցից ոմանց ես հանդիպել էի միայն մեկ ամիս առաջ, մյուսներին ճանաչում էի արդեն 25 տարի:

Մի պահ այդ վաղեմի ընկերներից մեկի հետ հիշեցինք մեր քոլեջի ընկերներին, որոնց հետ էինք մի քանի տարի առաջ: Ես զգացի, թե որքան եմ կարոտել այդ ընկերներին, որքան զվարճալի էր միասին և որքան մոտ էինք մենք միմյանց: Այժմ մենք ավարտել էինք և տեղափոխվել աշխարհի տարբեր ծայրեր, հայտնվելով այնպիսի իրավիճակներում, որ երբևէ չէինք էլ մտածի: Ես մի պահ վշտացա կորստի այդ զգացման պատճառով, ապա նայեցի սենյակում ծիծաղող դեմքերին, որոնք ինձ այդ պահին շրջապատում էին, և ցնցվեցի հանկարծակի առաջացած մտքով. *լավ բաները շարունակվում են:*

Այդ պարզ միտքը ինձ համար, իրականում, շատ կարևոր էր, հատկապես, որ ես միշտ դժվարությամբ եմ հարմարվում փոփոխություններին և լավ բաներին հրաժեշտ տալուն: Ես կարոտում եմ անցյալը, անգամ երբ այն դեռ ներկա է, ցանկանալով ամեն կերպ լիարժեք վայելել այն պահերը, որոնցով գիտակցաբար



Որպես մի մարդ, որն ախտոտում է, տեսնելով, թե ինչպես է ներկան արագ դառնում անցյալ, ես երախտապարտ եմ հիշեցման համար, որ պետք է պարզապես վայելել պահը և նայել դեպի ապագան:

և վճռականորեն ապրում եմ: Ես գիտեմ, որ երբ լավ բան է կատարվում, ես ուզում եմ պահել և բաց չթողնել այն: Այս ավարկոտ ուրախ ուրբաթը այդ լավ պահերից էր: Մովորաբար, երբ ես գիտակցում եմ, թե որքան լավ եմ այժմ, ես անմիջապես սկսում եմ մտածել, թե ինչպես է ամեն ինչ թոնում, որ դա, ի վերջո, կկորչի ժամանակի և հանգամանքների մեջ:

Սակայն այս երեկո ներքին ափսոսանքը չայցելեց ինձ: Լուռ նստած, շրջապատված իմ սիրելի մարդկանցով, ես գիտեի, որ թեև որոշ լավ բաներ պետք է բնականորեն ավարտվեն, և թեև անկասկած կլինեն շատ դժվարություններ ապագայում, լավ բաները կշարունակվեն: Եվ դրանք կգան, քանի դեռ ես թույլ եմ տալիս, որ գան: Թեև նրանք, ում ես սիրում եմ, կգնան իրենց ճանապարհով, բաց տեղերը կլցվեն նոր և հրաշալի մարդկանցով և փորձառություններով, որոնց մասին ես պատկերացում անգամ չունեմ:

Երբեմն դժվար է առաջ գնալ, բայց մենք պետք է դա անենք: Եվ առաջ գնալը չի նշանակում մոռանալ ընկերությունը, ստիպել, որ հուշերը մարեն: Դա նշանակում է բացել մեր սրտերը էլ ավելի մեծ երջանկության և ավելի շատ փորձառությունների առաջ:

Այդ ուրբաթ օրից մի քանի շաբաթ անց, երիտասարդ չափահասների իմ ճյուղի նախագահությունն ազատվեց: Ցանկացած ոգ փոքր ճյուղից կարող է հավաստել, որ դժվար է պատկերացնել, թե ինչ կպատահի մեր ճյուղի հետ առանց այդ տղամարդկանց և նրանց կանանց, որոնց մենք սիրում էինք և վստահում: Սակայն ես փակեցի աչքերս և կրկնեցի մտքում այն խոսքերը, որոնք ցնցեցին ինձ այդ ուրբաթ. *լավ բաները շարունակվում են:* Ես մխիթարվեցի և պատրաստ էի փոփոխությանը:

Փոփոխությունը Տիրոջ ուղին է: Նա ուզում է, որ մենք լինենք երջանիկ և աճող, ուրախ՝ առաջ գնալով մեր կյանքի ընթացքում: Կյանքը ճամփորդություն է, և մինչև մենք դեռ վայելում ենք ներկան և պատրաստվում անխուսափելի մարտահրավերների, մենք պետք է առաջ շարժվենք, մնալով լավատես, բացենք մեր սրտերը փորձառությունների և լավ բաների համար, որոնք անկասկած սպասում են մեզ: ■

Լիսիհոնայի այս տարվա շատ համարներ պարունակում են Մորմոնի Գրքի կերպարների հավաքածու: Դրանք ամուր և օգտագործման համար հեշտ դարձնելու նպատակով, կտրատեք և սոսնձեզ կամ կպպչող ժապավենով կպցրեք հաստ թղթի, թղթե փոքր պարկերի կամ փայտիկների վրա: Յուրաքանչյուր հավաքածու պահեք ծրարի կամ պարկի մեջ, փակցնելով նաև պիտակ, որով կարող եք իմանալ, թե որտեղ գտնեք սուրբգրքյան պատմությունը, որը համապատասխանում է այդ կերպարներին:



Քարեր



Հիսուս Քրիստոս



Հարեդի եղբայր



Նավակներ

Հարեդացիները առաջնորդվում են խոստացված երկիր

Եթեր 1-3, 6



Առաջին Նախագահությունը և Տասներկու
Առաքյալների Քվորումը ուսուցանել են, որ «հաջողակ
ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և
պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության,
ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի,
աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների
սկզբունքներով» («Ընտանիք՝ հայտարարություն
աշխարհին»): Այս սկզբունքները ձեր կյանքում և
ընտանիքում կիրառելու մտքերի համար,
տես էջեր 4, 16, 20 և 22: